

ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ

ԱԳՈՒԼԻՍ



Ա Գ Ո Ւ Լ Ի Ս

ՅԻՄՆԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ



Ա Գ ՈՒ Լ Ն Ս Գ Ի Ս



ԵՐԵՎԱՆ 1984

«ԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ



ЕРЕВАН 1984

Издательство «АЙ АСТАН»

АРГАМ АЙВАЗЯН

А Г У Л И С .
ИСТОРИКО—КУЛЬТУРНЫЕ
ПАМЯТНИКИ

ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ

2056

Ա Գ Ո Ւ Լ Ի Ս .
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ



Գրախոսներ՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Լ. ԽԱՉԻԿՅԱՆ,
Հարսարականության թեկնածու Մ. ՀԱՍՐԸԹՅԱՆ

Այվալյան Ա. Ա.

Ա 551 Ազուլիս: Պատմամշակութային հուշարձաններ / Պատ. խմբ. Մ. Մ. Հասարակության: — Եր.: Հայաստան, 1984, 224 էջ, 24 թ. նկ.:

Աշխատության մեջ ներկայացվում և արժեքավորվում են միջնադարյան Հայաստանի նշանավոր Ազուլիս քաղաքի պատմական անցյալն ու մշակութային կյանքը, պատմա-ճարտարապետական հուշարձանները: Գրքում առաջին անգամ շրջանառության մեջ են դրվում Ազուլիսի հուշարձանների որմերին ու տապանաքարերին բանդակված վիմագրական ժառանգությունը՝ 648 արձանագրություն, որոնք ստույգ ու կարևոր աղբյուր են Ազուլիսի և միջնադարյան Հայաստանի պատմության ու մշակույթի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների, լեզվի և այլ բնագավառների ուսումնասիրման գործում:

Նախատեսված է հայ ժողովրդի պատմությանը ու մշակույթով հետաքրքրվող ընթերցող լայն շրջանների համար:

Ա 0501 006000 պատվեր
701 (01) 83

ԳՄԻ 63.3(2 <) +85.113 (2 <) 1
9 (43) 1+72Ար1

АЙВАЗЯН АРГАМ АРАРАТОВИЧ
АГУЛИС — Историко-культурные памятники
(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван 1984

© Հայկական ՍՍՀ միևնույնիստ խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի
հուշարձանների պահպանման ու օգտագործման վարչություն, 1984

Մ Ո Ւ Տ Ք

Հին է հայոց Գողթան լեռնաշխարհը, հազարամյակներից էլ էին: Մարդկային միաքը դժվարանում է մտաբերել հազարամյակների ափերի մեջ ապրած այդ լեռնաշխարհի տարիքը: Գարերի ներքո, արևի կիսիչ ճառագայթներից ու խելացնոր հողմերից պղնձացած ու ծեփացած Գողթնի լեռների գրկում հնուց ի վեր երկնել ու արարել են մեր նախնիները, շենացրել այդ լեռների փեշերին ու բարձունքներում ծվարած բնակատեղիները, ալվանդել հայ էրգն ու երաժշտությունը, բառն ու բանը:

Այդ լեռնաշխարհի վարչը Գողթնի գեղեցկուհին է, ոչ այնքան հեռու անցյալում բուն ու շննդալից քաղաքային կյանքով ապրած միջնադարյան Ազուլիսը:

Ազուլիս... Գողթնի ու գողթնեցու այս հիշարժան քաղաքի մասին պատմությունը բազմաթիվ ու բազմալեզու հուշ ու հիշատակներ է թողել: Բսկ Ազուլիսի գեղեցիկ կիրճը եին դարերից ծոց առած պանել ու մեղ է հասցրել ազուլիսեցու դժվարին ու մաքառումներով առիցուն կյանքի բազմաթիվ վկաներ ու հուշարձաններ: Հուշարձաններ, որոնք դարերի բովով անցել և պատմության ինաստուրջամբ շարադրում ու բարեբանում են Ազուլիսի անցած-գնացած դարերի բուն պատմական անցուդարձը, նրա բազմամյա մշակույթի պատմությունը:

Ազուլիսի վարպետների, գրի ու գրչության մշակների մտքի ու ձեռքի, ինչպես ու դարերի անցուդարձի շատ վկաներն այստեղ դաշվել-մնացել են որպես վանք ու եկեղեցի, գեղեցկատես ապարանք ու աղբյուր, քանդակ ու տապանաքար, յաւշքար ու ձեռագիր մապան, երգ ու երաժշտություն, հուշ ու պատգամ...

Եվ այդ կանգուն ու ալերակ վկայախոսների, նրանց բեկորների, գրչագիր մատյանների ու վիմագրերի, շաղ տված բազմաթիվ արժեքների համր, բայց խոտուն բարբառումներից է ծնվել այս գիրքը, որն Ազուլիսի բազմամյա մշակույթի համապարփակ ուսումնասիրման առաջին փորձն է:

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն



ԱԳՈՒԼԻՍ ԳԱՂԱԳԻ
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՑՅԱԼՆ
ՈՒ ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

«Ո՞վ է մեզ տվել, եթե ոչ նրանք,
Փող ու թմբուկին խաղացող մատներ,
Լեռն ի վար վարճող եղնիկի ոտներ,
Եվ նավասարդյան թարմ առավոտներ,
Եվ առավոտներ վառ Վարդավառի,
Եվ ծուխ ծխանի՝ հայրենի կրակ,—
Ո՞վ է մեզ տվել, եթե ոչ նրանք՝
Վիպասանները Գողթան գավառի»:

(ԳԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ, Անդեյի գանգակառու,
Ղողանջ ցնծության)

Ն Ա Ռ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Պատմական Հայաստանի Նախնական-Նախիջևան աշխարհի տարածքում նստակեցությունը վկայվում է դեռևս նեոլիթյան շրջանից Իսկ քաղաքների առաջացումը այստեղ սկսվելու և վերջինից է դեռևս մ. թ. ա. II—I հազարամյակներում: Այդպիսի հնօրյա քաղաքներ ու բերդաքաղաքներ են եղել, օրինակ, Շարուրի դաշտի Արբա, Թագավորանիստ (Շահթախտ), Մարակերտ, Նախնականի դաշտում և նրա մերձակայքում՝ Նախնական, Ճսեուկ, Գողթում՝ Տրգրանական և այլ բերդերն ու բնակավայրերը: Իսկ վաղ և կարգացած միջնադարում այս պետական միավորման գավառներում առաջացել են մի շարք նոր՝ մեծ ու փոքր քաղաքներ, ուստաններ: Վերջիններիս առաջացումը սերտորեն կապված էր Հայաստանի ընդհանուր վերելքի, սոցիալ-տնտեսական հպրույթյան ու մշակույթի աստիճանական կարգացման ու օտար տիրապետություններից երկրի ազատագրման, անկախության ու ազատության համար մղվող պայքարի հետ: Այդօրինակ սլայնաններում են առաջացել վաղ միջնադարյան Երևան, Գիրան, Ագատ, Որդվար կարգացած և ուշ միջնադարյան Ջուղա, Ագուլիս, Շոռթ քաղաքներն ու գյուղաքաղաքները:

Վերը թվարկված բոլոր քաղաքներն ու բերդաքաղաքներն էլ, որպես կանոն, հիմնված են Նախիջևանի տարածքով անցնող հին աշխարհի կարևոր առևտրական ու արքունի մայրուղիների վրա կամ էլ նրանց հանգուցակետերում և գավառների հաբար ծառայել են վարչաքաղաքական, մշակութային կենտրոններ: Ահա այսպիսի մի ուշագրավ քաղաք ու մշակութային կենտրոն է եղել գինևեռ Գողթն գավառի միջնադարյան Ագուլիս քաղաքը:

Գողթն կամ Գողթան գավառի մեծահամբավ ու հինավուրց Ագուլիս քաղաքը հին Հայաստանի ամենահին և աչքի ընկնող բնակատեղիներից մեկն է, որի անցյալը լի է դաժան փորձություններով ու եղելություններով: Պատմության մեջ բազմիցս հիշատակվող այս քաղաքը տարածված է եղել այժմյան Նախիջևանի ԽՍՀ Օրդուբադի շրջանի Վերին և Ներքին Ագուլիս գյուղերի տարածքում՝ Որդվար կամ Որդուատ (այժմ՝ Օրդուբադ) քաղաքից 3—3,5 կմ դեպի արև-

մուտք: Հայոց երկրի բազմաթիվ բնակատեղիների նման Ագուլիսը ևս փռված է լեռներով շրջապատված և հյուսիսից հարավ ձգվող մի ընդարձակ ձորի մեջ:

Քաղաքը մի հիսաքանչ համայնապատկեր է ունեցել: Այն ուշագրավ է ոչ միայն իր բազմաթիվ միջնադարյան հուշարձաններով, այլև բնության գեղեցիկ տեսարաններով: 1—1,5 կմ լայնությամբ և ավելի քան 6—7 կմ երկարությամբ (Ստորին Ագուլիսը ևս), լեռնային կարկաչուն Ագուլիս գետակի ափերին, արևելքից ու արևմուտքից շրջապատված ժայռոտ, արևախանձ ու լեռի, բազմագույն քարածայրերի փեշերին դարեր շարունակ ձվարել-գոյատևել է հնարմատ Ագուլիսը: Այն որպես Գողթնի գլխավոր կենտրոն ու բնակատեղի հիշատակվում է դեռևս V դարից: Օրինակ, Մենարոյ Մաշտոցի վարքագիրը պատմիչ Կորյունը Մաշտոցի Գողթն կատարած այցելություններից մեկի մասին նշում է, որ նա իր աշակերտների հետ «գնաց, իջավ Գողթնի Ռոտաստակը, իր առաջվա դաստակերտը»¹: Այստեղ Ռոտաստակը նշանավոր լեվկաբան Հր. Աճառյանի ստուգաբանությամբ նշանակում է «գլխավոր քաղաք, գավառի կամ նահանգի մայրաքաղաքը», որն էլ հենց Ագուլիսն է:

Ագուլիսը գտնվել է աշխարհագրական մի միջավայրում, ուր պատմության ընթացքում տեղի են ունեցել քաղաքական ու մշակութային մի շարք կարևոր իրադարձություններ: Մեր պատմագիրների հաղորդումներից դատելով Ագուլիսը ունի վաղեմի հույություն, որը Գողթն գավառի կենտրոնը, նրա կրթական, մշակութային ու քաղաքական կյանքի, վաճառականության հիմնական օջախը լինելով, հայոց պատմության անցյալ դարերին տվել է բազմաթիվ ուրախ ու տխուր հիշատակներ: Ագուլիսի պատմական այդ փոթորկուն անցյալը, նրա հնությունն ապացուցող նյութական մշակույթի բազմաթիվ մնացորդները, ճարտարապետական հուշարձանները մինչև այժմ էլ կանգուն են, կիսակործան, ցիրուցան և իրապատում են այս հայաշատ քաղաքի անցյալը:

Այդտեղ՝ Գողթնի այդ հինավուրց բնակատեղում, V դարի պատմիչ Մովսես Խորենացու հաղորդած տվյալներով, գուսանները աննոռաց պահում էին իրենց նախնիների դյուցազնական ավանդությունները, բարեբանում ու գովերգում, առապելական չափանիշներով պատմում-նկարագրում էին հայոց հեթանոս աստվածներին ու թագավորներին, սերունդներին ավանդում նրանց քաջագործությունները: Իսկ ավանդությունը այս բնակատեղի հայկական կյանքը հասցնում է շրիեղեղին անմիջապես հաջորդած պատմաշրջանին: Ավանդապրուցյնե-

¹ Կորյուն, Վարք Մաշտոցի, աշխարհաբար թարգմանությունը ներածական ուսումնասիրությամբ, առաջարկում և ծանոթագրություններով՝ Մ. Աբելյանի, Եր., 1962, էջ 103:
² Հ. Աճառյան, Հայերեն արձանագրական բառարան, հատ. IV, Եր., 1979, էջ 146: Ռոտաստակ բառի բացատրությունը տես նաև Н. Мар, Мнимом географическое название Бротастан в Истории Агафангела («Записки вост. отд. ИМП, русск. арх. общества», том IX, 1894).

րից մեկի համաձայն շրիեղեղից հետո Նոյան գերդաստանը այգալույսը հենց այստեղ է դիմավորել, որտեղից էլ առաջացել է Ագուլիս-Ագուլիս անունը: Իսկ ըստ մեկ այլ ավանդության՝ «Ագուլիսներ, հայերեն այգի = caԻԵ և լիս = լույս = ԵՅԵԵ»: Գոյություն ունի ավանդություն այն մասին, որ Ադամն ու Եվան դրախտից արտաքսվելով մտածում էին, որ հավերժ տիրելու է մութ գիշեր: Սակայն երբ նրանք եկան այն վայրը, ուր այժմ գտնվում են Ագուլիսները, լույսը բացվեց և Ադամը բացականչեց. «Այգ—լույս = լուսաբաց, լույս»²:

Ավանդապրուցյներից մեկի բացատրությամբ էլ իբրև Թադևոս առաքյալը գիշերել է այդտեղ և առավոտյան արթնանալով ասել է ակնույս, որտեղից էլ մնացել է Ագուլիս անվանումը³: Հետաքրքիր է Ագուլիս անվան մեկնաբանությունը ագուլիսեցի Սողոմոնենց Սողոմոնի «Ըգուլեաց անունը» լեզնեղում, որը ըստ երևույթին տարածված է եղել նաև ագուլիսեցիների մեջ.

«Իբ օր ըջխարթում, ուսում չի կօ նել,
Չօկարը լուսը շօտ ըն սայրամ նել,
Ագգերի մաջին ակն ըն ընգեծ,
Չօկ անումն ալ նրուց ա կպեծ:

Ալանգեալ սարից մոյն լուս ա ակած.
Գինձակու գլիով ակած, եունց կահած
Ետով Գինդարու գիլիին ա կայնամ,
Կանչամ ըն «Ի՛կ, լո՛ւս».—սայմիշ չի նարամ:

Լուսը Գինդարուց նեխի ա, նեխի,
Արար աշխարիքը պտուտ ա գելիս,
Նուր քօռ ու փեշման ալ հիտ ա դառնամ,
Գելիս Գինդարու կրտարին կայնամ:

Չօկարը տիսնամ, շօտ ըն ըրխալիս,
Իւրաց ըջխարքին ըրայնակ տալիս,
Էխար գեօզ նիլամ. կանչամ ըն «Ի՛կ, լո՛ւս»,
Լուսը գելիս ա, մտնում «Իգուլիս»³:

Ըստ Ղ. Ալիշանի ստուգաբանության Ագուլիս անունը, որը տեղացիների (պրկերի) բարբառով կոչվել է Իգուլիս, Յուգուլիս, Ըգուլիս, Իգալիս, «պիտակօ-

² К. Ган, Опытъ объяснение Кавказскихъ географическихъ названий, Тифлис, 1909 с. 6.

³ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1891, էջ 324:

³ «Չօկի ճրոյգը» (թերթ), Թիֆլիս, № 1, 1913, էջ 6:

րեն ստուգաբանն Ալեքս-իք, և է իսկ արդարև այգևետ»⁴: Նշված ավանդա-
կրույցների բացատրություններին հարկ է ավելացնել, որ Ազուլիսին տրված
«Ակն լույս», «Ազալույս», «Ալեքս-իք» և այլ անվանումները շատ բնական ու
հարավատ են: Այստեղ՝ քաղաքը շրջապատող մերկ ու արևախանձ Գինդարա,
Աղասար, Քամբու սար, Կոնգաշ, Խոս, Հուռի (Հորի) գլուխ, Այանգեալ, Կոճըղ-
նոց, Գինձակ և այլ լեռների գրկում իրոք որ այն այգիներով լիքը բնակատեղի է:
Իսկ Ազուլիսի այգաբացը աչքի է ընկնում շրջապատի լեռների մերկության
ֆոնի վրա:

XI դարում (1010 թ.) Սարգիս կաթողիկոսը քաղաքն անվանել է Արզուլիք⁵:
Արզուլիք է կոչել նաև XIII դ. պատմիչ Ստ. Օրբելյանը⁶: XIV—XVII դարերի բալ-
մաթիվ ձեռագրերում այն անվանվել է «գյուղաքաղաք» և «նայրաքաղաք»,
«վաճառաշահ քաղաք Ազուլիս»: XVII դ. Չաքարիա Ազուլեցին քաղաքը կոչել է
Ազուլիս, Արզուլիս⁷: Ըստ Ա. Արասխանյանի բացատրության. «Ազուլիսը (Աե-
րին Ազուլիս) հավաքական անուն է բուն Ազուլիսի և նորա հետ սերտ կպած
Վերինգետ (պոկերեն Վրըգիտ, ռուսերեն՝ Варагерты) գյուղը... Եվ գրաբար
լեզվում որպես նաև ռուսերենում Ազուլիսը—ռուսերեն՝ Акунисы և Акунисы
(սեռական՝ Ազուլեաց) հոգնակի է հասկացվում»: Ա. Արասխանյանը այնուհետև
անդրադառնալով Ազուլիս տեղանունը այգի-իք բառերից առաջացած լինելու
լեզվաբան Ս. Սարգսյանի բացատրությանը նշում է, որ «ավելի օգտակար կլինի
ասել, որ Ազուլիս տեղացի բարբառով կոչվում է Իզալիս (արտասաններ որպես
ֆրանսերեն Ս...), իսկ տեղի բնակիչը իզիլացի, ի տեղի՝ իզալիսացի=ազուլի-
սեցի»⁸:

Ակադեմիկոս Ս. Երեմյանի տեղեկությամբ Մ. Խորենացու պատմության մեջ
հիշատակվող Գողթն գավառի Ռակիողա ավան դաստակերտը, ուր Գողթնի և
Նախիջևանի մյուս դաստակերտների թվում Տիգրանը բնակեցնում է Ածախակի
սերունդներով⁹, հանդիսացել է Ազուլիսը: Այս կապակցությամբ նա նշել է.
«Ռակիողայ»-ն տեղադրելու համար հարկավոր է հիշել, որ հայերենի փոկերեն բար-
բառում Ազուլիսի ձորը կոչվում է «Ասկալուր», որ նշանակում է «Ռակե ձոր»,
մենք կարծում ենք, որ այժմյան «Ազուլիս» անունը պիտի առաջացած լինի
Oskiola-ից, ուստի այս վայրը տեղադրում ենք այժմյան Ազուլիսի տեղում»¹⁰: Եթե

ընդունելի համարենք այս տաղադրությունը, ապա կարելի է հավանական ելու-
կացության հանգել, որ վաղեմի Ռակիողա ավան դաստակերտը իր նախնական
անվանակոչումը պահպանել է մինչև VIII—IX դարերը, որից հետո այն վերան-
վանակոչվել է Արզուլիք, Արուլիս, Ազուլիս:

Ի միջի այլոց լեզվաբան Ա. Ղարիբջանը¹¹ հավանական է համարել, որ
Ազուլիսի ձորի «Ռակեձոր», «Oskiola»-ն կնշանակի Սակաձոր (սակերի բնա-
կատեղի): Իսկ Ն. Մառի կարծիքով մ. թ. ա. VIII—VII դդ. Ռուսաստանի հարա-
վային տափաստաններից Անդրկովկաս ու Հայաստան ներխուժած սկյութների
(սակերի) և տեղաբնիկ ցեղերի (ինա հայերի) միաձուլումից առաջացել են
փոկերը, նրանց բարբառը¹²: Մ. Արեղյանի բացատրությամբ. «Հին առապելու-
կան Գահակ անունը, ինչպես հայտնի է, դարձած է Չոհակ, սրանից է ծագում
Չոկ: Գողթն գավառի բնակիչների արդի Չոկ կոչումն, ուրեմն, ոչ այլ ինչ է,
եթև ոչ հին «պարսք Ածի-Իահակայ» կոչման սնացորդը...»¹³: Վերջերս Ս. Ունա-
յանը այն միտքն է հղացրել, որ «հայերը եկվոր մարերին (պարսկերեն. մար—
օձ) անվանեցին նրանց ասածն անունով՝ սոկ, որը Չոհակ (Ածախակ—Ա. Ա.)
անվան կրճատ ձևն է»¹⁴:

Այսպիսով, նկատելի է դառնում, որ վերը նշված կարծիքներով Ռակիողան,
Ռակեձորը քննվում է սակ և Չոհակ անվանումներից, որից էլ առաջացած են
համարում փոկ անվանումը: Հետնապես պետք է ենթադրել, որ այսքան հին ծա-
գումարանություն ունեցող փոկ անվանումը պետք է որ ինչ որ ձևով արձա-
նագրվեր կամ հիշատակվեր մեր պատմագրության և այլ աղբյուրներում: Այնինչ
այս հարցի վերաբերյալ պատմական աղբյուրները լռում են: Եվ միայն XVIII դ.
վերջերի աղբյուրներում հիշատակությունների ենք հանդիպում «փոկ» անվան
կամ նրա բարբառին: Ի միջի այլոց, ինչպես Ղ. Ալիշանն ու Ե. Լալայանն են
նկատել, այդ բարբառով խոսող վանգվածը բարբառով խոսել են միմիայն իրար
հետ, իսկ այլոց հետ՝ միշտ օգտագործել են պարզ հայերենը¹⁵: Այս փաստը խիստ
բնորոշ է նաև Ազուլիսի վիճական արձանագրությունների լեզվին: Եվ պատա-
հական չպետք է համարել այն հանգամանքը, որ Հրաչյա Աճառյանն ու
Ս. Սարգսյանը ժամանակին ուսումնասիրելով այդ բարբառը, այն անվանել են
Ազուլիսի և ոչ թե փոկի կամ փոկական բարբառ¹⁶:

⁴ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1891, էջ 324:

⁵ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 325:

⁶ Ստեփաննոսի Սրենեաց նախնկարոսի Գառնություն նահանգին Սիսական, Մոսկվա, 1861, էջ 227, 310:

⁷ Չաքարիա Ազուլեցու որագրությունը, Եր., 1938, էջ 5, 7, 110, 112:

⁸ Ա. Արասխանյան, «Ազուլեցոց բարբառը» գրքի (Ս. Սարգսյանի) մասին գրախոսա-
կան, «Մուրճ», Թիֆլիս, № 9, 1899, էջ 1072:

⁹ Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1961, էջ 132—133:

¹⁰ Ս. Երեմյան, Հայագետներ ըստ «Աշխարհացոյցի», Եր., 1963, էջ 74:

¹¹ Ա. Ղարիբջան, Հայոց լեզվի աստուծության ուսումնասիրության ներածություն, Եր., 1937, էջ 62:

¹² Н. Марр, Термин «скиф», Избранные работы, том 5, М.—Л., 1935, с. 22.

¹³ Մ. Արեղյան, Երկեր, Գ հատոր, Եր., 1968, էջ 62:

¹⁴ Ս. Ունառյան, Սյունիքը դիցարան, Եր., 1981, էջ 96: Տե՛ս նաև Հ. Առաքելյան, Հան-
րագիտական բառարան, Թիֆլիս, հատ., 1-ին, 1915, էջ 404:

¹⁵ Ղ. Ալիշան, Սիսական, էջ 324: Ե. Լալայան, Գողթն, էջ 28—29:

¹⁶ Հ. Աճառյան, Քննություն Ազուլիսի բարբառի, Եր., 1936: Ս. Սարգսյան, Ազուլեցոց
բարբառը, Մոսկվա, 1887:

Մեր ուսումնասիրություններով «գոկ» անվան ստուգաբանության վերը նշված բացատրությունները համոզիչ չեն: Մեր կարծիքով ավելի հավանական և ընդունելի պետք է համարել այն տեսակետը, որը ժամանակին առաջ էր քաշել Ք. Պատկանյանը¹⁷, նշելով, որ «գոկ» անվանումը առաջացել է այդ բարբառում այս, այդ, այն ցուցական դերանունները հոկ, ոկ, դոկ, նոկ ձևով օգտագործելուց: Եվ իրոք, Ագուլիսի բարբառում, որով խոսել են Ագուլիսը, Յղնա, Տանակերտ, Դիսար, Քաղաքիկ, Հանդամեջ գյուղերը, այդ դերանունները «գ» նախադիր օգտագործմամբ, որը բնորոշ է XVIII—XIX դարերի բարբառներին ու միջին հայերենին, ստացել է «գհոկ», «գոկ» անվանումը: Հանգամանք, որը XVIII—XIX դդ. աստիճանաբար արմատավորվեց և XIX դ. ճանապարհորդական ու ազգագրական ուսումնասիրություններում տեղ գտավ գոկ ու գոկական բարբառ անվանումները: Այս հանգամանքը պատմականության հիմքից փոքր է: Այն կրում է սուկ լեզվական տարրի ազդեցությունը. այնպես, ինչպես Կ. Պոսի բարբառում հոս բառի հաճախակի օգտագործումից պոլսեցիներին անվանել են «հոսհոսներ», մեր օրերում Երևանի բարբառում, հայրենադարձներին, եղբայր բառը աղբար ձևով օգտագործելու պատճառով «աղբարներ» և այլն:

Եռնային հատուկ բնակչության պայմաններ ունեցող Ագուլիսը հնուց կազմավորվել ու վարձացել է իր դարաշրջանի հառնար բավականին բարձր քաղաքաշինական մշակույթով: Քաղաքը գտնվելով հին Հայաստանի գլխավոր առևտրական ճանապարհներից մեկի վրա, հայ ժողովրդի պետականության կազմավորման և վարձացման շրջանից և ապա վաղ միջնադարում սոցիալ-քաղաքական ու տնտեսական տեսակետից հանդես է բերել ավելի որոշակի կողմեր: Ի բնուստ լինելով մշակութային օջախ, այդտեղ բավաթիվ արհեստների հետ միաժամանակ արագորեն վարձացել է նաև առևտուրը: X—XIII դարերում ֆեոդալական Հայաստանի մյուս քաղաքների (Անի, Կարս, Խլաթ, Խարբերդ և այլն) վարձացման ու ծաղկման հետ միասին մեծ առաջիադասում է ապրել նաև Ագուլիսը, որը հաստն միջնադարում Հայաստանի վարձացած և աչքի ընկնող քաղաքներից մեկն էր և բավաթիվ առևտրական կապերի մեջ էր Ռուսաստանի ու Եվրոպայի քաղաքների հետ:

Ագուլիսի պատմաճարտարապետական, հնագիտական հուշարձանների, նրա տարածական-հատակագծման, քաղաքաշինության հարցերի ուսումնասիրությունը ապացուցում է, որ Ագուլիսը միջնադարյան Հայաստանի մյուս քաղաքների նման ունեցել է հատակագծային եռանաս կազմություն: Քաղաքը տեղադրված լինելով ապառաժ լեռնաշղթաներով երկու կողմից շրջապատված ձև-

¹⁷ К. Патканов, Исследование о диалектах армянского языка. Филологический опыт, СПб., 1869, с. 55: Ագուլիսի բարբառի ուսումնասիրությունը և այդ բարբառով մի շարք առակներ ու այլ նյութերը տե՛ս նույն տեղում, էջ 27—55:

յում, նրա անենավերին մասում, որը XVI դ. հայտնի է Վերին Գետ անունով, ուր ձորի ժայռաշղթաները իրար են մտնեցել, տեղադրված է եղել քաղաքի միջնաբերդը: Միջնաբերդից ներքև տարածված են եղել քաղաքի երկրորդ և երրորդ մասերը, որոնցից առաջինը միջնադարյան քաղաքաշինության մեջ սովորաբար անվանվել է շահաստան, իսկ երկրորդը՝ արվարձանային մաս: Ագուլիսի շահաստանում, որն այժմյան Վերին Ագուլիսն է, տեղադրված են եղել քաղաքի վարչաքաղաքական, հասարակական, պաշտամունքային, առևտրական, արհեսավորական շինությունների ու բնակելի ապարանքների մեծագույն մասը: Քաղաքի երրորդ մասը՝ արվարձանայինը, տարածված է եղել այժմյան Ստորին Ագուլիս կամ Ագուլյաց Դաշտ գյուղի տարածքում, որտեղ մինչև այժմ էլ տեսանելի են քաղաքը պաշտպանող սարիսյակների, ամրոցների ավերակներն ու հետքերը: Ի միջի այլոց Դաշտը կամ Ագուլիսի բարբառով Դեշտը ձեռագրական և պատմական աղբյուրներում երևան է գալիս XVII դարի կեսերից և մեծամասամբ անվանվել է Ագուլյաց Դաշտ: Օրինակ, 1590 թ. այդտեղի ս. Ստեփանոս կամ Երևք խորանի նկեղեցում գրչագրված մի Հայաստավորքի հիշատակարանը վկայում է, որ այն գրչագրվել է. «ի գիւղն որ կոչի Ագուլեաց Դաշտ», իսկ մեկ այլ հիշատակարանը վկայում է, որ ձեռագիրը գրչագրվել է. «ի Դաշտ կոչեցեալ»¹⁸: Ըստ իս Դաշտ անունը ծագել է տեղի հարթ, դաշտի նմանվող վայրի անվանումից, ուր գտնվել են Ագուլիսի վաղեմի արվարձանային թաղամասերը: Դաշտի կամ այժմյան Ստորին Ագուլիսի տարածքը, որը գտնվում է Ագուլիսի ձորաբերանի լայն հարթավայրում, բուն Ագուլիսի համեմատությամբ իրոք որ դաշտի է նմանվում: Ըստ Ե. Լալայանի ևս Դաշտ անվանումը «տեղի դիրքով Դաշտ է կոչուել»¹⁹, որը ձորի վերին և ներքին մասերում պարիսպներ ու դարպասներ է ունեցել, որոնք ամեն երեկո փակվել են²⁰:

Ագուլիսի Դաշտ գյուղը. «1820—1825 թթ. հայերը գնեցին Պարսից թագաժառանգ Աբաս Միրզայից և Ստորին կամ Ներքին Ագուլիս անուանեցին... 1254 բնակիչ ունի, բոլորն էլ հայ»²¹: Ա. Արասխանյանը իրավացիորեն ժամանակին նկատել է, որ «ցանկալի է, որ նա կոչվի Ստորին-Ագուլիս կամ ավելի լավ՝ Դաշտ-Ագուլիս: Ներքին = внутренний և ոչ՝ нижний, որի համար ժողովրդական բանն է ներքևի, բայց ոչ ներքին... Բայց քանի որ տեղացիք Ստորին-Ագուլիսը Դաշտ (Դեշտ) են անվանում և Դաշտ անունով նա հայտնի է վերջին

¹⁸ Մ. Սմբատյան, Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երևնակայ եւ շրջակայից նորա, Տիֆլիս, 1904, էջ 297—298:

¹⁹ Ե. Լալայան, Գողթն կամ Օրդուբադի կամ Վերին-Ագուլիսի ոստիկանական շրջան (արանձնատիպ «Ազգագրական Հանդեսից»), Թիֆլիս, 1912, էջ 62, 73: Այսուհետ՝ Գողթն:

²⁰ «Բազմավայր», Վենետիկ, հտ. ԾԲ, 1894, էջ 535: Ե. Լալայան, Գողթն, էջ 76:

²¹ Աշխարհագրություն Հայաստանի, կազմեց Ավետիք Տեր-Յակոբյան, Թիֆլիս, 1914, էջ 165:

դարերի հայոց պատմագրութեան մեջ, ուստի ավելի բավ կլինէր այն գոնէ Դաշտ-Ազուլիս անվանելը»²²:

Պատմական և ձեռագրական աղբյուրների վկայությամբ բուն կամ Վերին Ազուլիսը XVI դարից մինչև XX դ. 10-ական թվականները հիմնականում բաժանված է եղել երկու մեծ՝ Վերին և Ներքին թաղերի: Վերջիններս ընդգրկել են ավելի քան 10 նշանավոր թաղամասեր՝ Վերին գետ, Վանքի թաղ, Նուրիջանենց մահլա, Չիգ փուղ (փողոց), Խաչկաշեն, Խձաձոր, Շոնատակ, Լինջի (Լանջի), Մեդանի կամ Մալեյի Խուպան և այլն: Վերջին թաղամասը, որն այժմյան Վերին Ազուլիսի վարչական մասն է, վաղեմի քաղաքի ամենագործարար թաղամասն է եղել: Դեռևս XIX դ. երկրորդ կեսերին այդտեղ կար. «100 կրպակաց յԱզուլիս հասարակ արուեստավորաց, յորս նշանավոր կոսովագործքն և ասրագործք. դասարան և 3 դատավորք, չորք գիւղագույսք...»²³: Ընդ որում «դատավորները ու մեկիքը ընտրվում են ժողովրդի քվեարկությամբ՝ Նորին Մեծության համաձայնությամբ...»²⁴:

Ազուլիսը, որը առանձին աղբյուրների մատնանշմամբ ունեցել է ավելի քան 8 հազար տուն հայ բնակչություն, XVIII դ. ուներ նաև. «պարսն Հայոց», որը գլխավորում էր «պարագուխս Ազուլեցոց»²⁵, իսկ նրա բնակչության թիվը հասնում էր. «...իբրու տասն հազար տունք Հայոց»²⁶: Ի միջի այլոց, Ա. Արասխանյանը Ազուլիսի բնակչության թիվը անհավանական համարելով, նշել է, որ «...այն իսկ հազար 10 հազար տուն բնակիչը 10 հազար բնակիչ ջինեղով՝ (ուրեմն ասենք, 2 հազար տուն) Ազուլիսի համար պետք է մեծ չափականացություն համարել, նա որ... այժմ ունի ընդամենը մոտ 4—500 տուն (շատ-շատ 2 500 բնակիչ), հազիվ թե էրք և իցն դորս կրկնապատիվը ունեցած լինէր, բայց ոչ քառապատիվը և մանավանդ ավելին»²⁷: Ա. Արասխանյանը այս կարծիքին, անշուշտ, հանգել է միայն Վերին Ազուլիսը աչքի առաջ ունենալով: Այնինչ պատմական աղբյուրների վկայությունները վերաբերում են Ազուլիս հասկացողությանը առհասարակ: Դա վերաբերում է նաև Ստորին կամ Դաշտ Ազուլիսին և վաղեմի քաղաքի այն հատվածներին, որոնք XVIII—XIX դարերում արդեն ավերվել ու անհարդարանակ էին: Այս պարագայում, ինչ խոսք, Ազուլիսի

²² Ա. Արասխանյան, «Ազուլեցոց բարբառը» գրքի վերաբերյալ գրած գրախոսական, «Երուրձ» № 9, 1899, էջ 1072—1073:

²³ Ղ. Ալիջան, Սիսական, էջ 325:

²⁴ «Մշակ», № 36, 1872, էջ 2:

²⁵ Ըստիդ Պատմություն Դաւիթ բեգին և պատերազմաց հայոց Խափանու, որք եղեն ընդդէմ Թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի Տեառն 1722 և հայոց 1172, հրատարակեց Ա. Գուլամիրյանց, Էջմիածին, 1871, էջ 37, 45, 60—66:

²⁶ Նույն տեղում, էջ 64:

²⁷ Մուրձ», Թիֆլիս, № 9, 1899, էջ 1073:

բնակչության թիվը նրա ծաղկման շրջանում եթե ոչ տասը հազար, ապա 6—8 հազար տուն պետք է որ կազմած լինէր: Մի շարք ավերումներից ու հրկիզումներից հետո հենց միայն Վերին Ազուլիսում XIX դ. սկզբներին պարզորոշ տեսանելի էին ավելի քան 1700 տների ավերակները²⁸:


Ազուլիսին XVII—XIX դարերում առանձնահատուկ գեղեցկություն, պարծանք ու հմայք էին տալիս նրա հնարմատ այգիների մեջ բազմած երկհարկանի ու եռահարկ բնակելի տները, 120—150-ի չափ արհեստավորական կրպակներն ու բուսնությունը, մի քանի դպրոցները, հարուստ գրադարան-ընթերցարանը, մետաքսի, կաշվի, ձեթի և այլ գործատները, իջևանատները, ավելի քան 17 աղբյուրները, դեղատներն ու բաղնիքները, շուկաները... վերջապես նրա 12 գեղեցկատես վանքերն ու եկեղեցիները: Հայ մշակույթի գործիչներն ու ազգագիրները հիացմունքով են նկարագրել ու արձանագրել ազուլիսցիների առատաձեռնությունն ու նախաձեռնող, առևտրական, ստեղծագործ հատկանիշները, Ազուլիսի քաղաքային ու մշակութային եռուն կյանքը, որն իր դեմքն ու նշանակությունը պահպանեց ընդհուպ մինչև XX դարի սկիզբները: Օրինակ, XIX դ. սկիզբներին Ազուլիս այցելած Մեսրոպ Թաղիադյանը գրել է «Պատուականք են շինուածք Ազուլեաց քան Կորս տեսի մինչ ցարդ, և վարդարեալք սքանչելի նկարուք»²⁹: Իսկ անգլիացի տիկին Շանթըրը, որը Ազուլիսում եղել է XIX դ. կեսերին, նրա մասին արձանագրել է. «Հայք Փոքրիկ Պարիս կը կոչեն... Մասավոր կնիք մը կը ներկայացնեն Ազուլեաց բնակիչք: Բարձրահասակք են ընդհանրապէս, արք թխագոյն՝ գրեթե արաբական գեղեցիկ տիպար մը՝ շատերը նշանավորք գիտութեամբ և արուեստից, բազմաթիվք ևս որ բժշկական ուսմանց ընթացքն ըրած են Եվրոպա: Հանձարեղաց կենդրոն մը կրնայ համարուիլ՝ (Ազուլիսը) աշխատասեր, լուսավորյալ և հարուստ ժողովրդեան»³⁰:

Հայ դասական գրականության նշանավոր ներկայացուցիչ Պերճ Պոռշյանը, որը 1867—68 թթ. ուսուցչություն է արել Ազուլիսի երկսեռ դպրոցներում, իր հուշերում Ազուլիսի քաղաքային եռուն կյանքի մասին նշել է. «Ազուլեցիների շուկան մի 100 աստենաչափ տեղ է գյուղի կենդրոնում, երկու կողմից 500-ի չափ խանութներ... այս շուկայի փոքր խանութները կապ ունեն Ռուսաստանի և Եվրոպայի մեծ առևտրական տների հետ: Ամեն ազուլեցի վաճառական է, նոցա առևտուրը մետաքսի և բամբակի մեջն է, նոցա ձեռքին է, կարելի է ասել Անդըրկովկասի այդ երկու արդյունաբերության արտադանությունը դեպի Ռուսաստան և Եվրոպա և ահա այդ համաշխարհական վաճառականանց կենդրոնատեղը Ազուլիսն է: Ժողովում է ազուլեցին Երևանից, Նուխիից բամբակն և մե-

²⁸ Статистическое описание Нахичеванской провинции, Спб., 1833, с. 221.

²⁹ Մ. Թաղիադյան, Հանապարհորդություն ի Հայս, հատ. 1-ին, Կակարթ, 1847, էջ 254:

³⁰ «Բազմավեպ», հատ. ԾԲ, Վենետիկ, 1894, էջ 534—535:



տաքը, ուղարկում է նույն տեղից յուրյանց գործակալներին մեծամեծ քաղաքներում, և ձմեռը վերազառնում յուր ընտանյաց գիրկը հանգիստ առնելու:

Ուրեմն պետք է լիներ մի կենդրոն, ուր Ազուլյաց վաճառականները մտքերը միմյանց հայտնեն, որտեղից գրեին և ստանային յուրյանց հաշիվներն ու թղթակցությունը... և ահա այս մի քանի խանութը իսկական նշանակությամբ այս կենդրոնն է, ազուլեցվոց բիրժան է: Ճաշից հետո միայն մանրավաճառ խառնվածքներին կհանդիպես այստեղ, իսկ առավոտը բոլոր ազուլեցիներին... քսղաքավարություն վերին աստիճանի, համեստություն, փոխադարձ հարգանք՝ ազուլեցու հատկությունն է»³¹:

Ազգագրագետ Ե. Լալայանի ուսումնասիրությամբ Ազուլիսը մինչև XIX դարի վերջերը. «բնակիչների կենցաղավարությամբ, միանգամայն քաղաքի է նմանվում և նոյն իսկ մի քանի գավառական քաղաքներից, ինչպես օրինակ, Սախիջլանից բարձր է»³²: Իսկ աշխարհահռչակ նկարիչ Մ. Սարյանը ազուլիսցիների հրավերով 1914 թ. Գողթնում անցկացրած իր հիշարժան օրերի մասին հինգ տասնամյակ հետո Ազուլիսը մտաբերելով մեծ հիացմունքով գրել է. «...մտեցանք կիրճին, որի պռնկին նկատեի էր միանալուր գեղեցկուհին՝ Ազուլիսը: Դա Փոքր Կովկասի կիրճերից սեկն է, որն իջնում է դեպի Արաքսը և իր լանջի հարմար տեղերից մեկի վրա էլ մյառում քաղաքը: Գետակը ջրառատ էր, բայց դրա փոխարեն այստեղ կային շատ աղբյուրներ... Քաղաքի կենտրոնում սուրբ Թովմասի եկեղեցին էր՝ հրաշալի որմնանկարներով՝ կատարված Հովնաթանյանների կողմից: Ազուլիսում մի ամբողջ շարք փոքր եկեղեցիներ կան: Նրանք խիստ ներդաշնակում են յուրատիպ աստիճանների նմանվող տեղանքի վրա կառուցված քաղաքի ընդհանուր պատկերին»³³:

XIX դ. Ազուլիսի բարբառով հորինված ու կատարված «Ի գովեստ Ազուլեաց» երգում մի առանձնահատուկ սիրով ու կարոտով է ներկայացված քաղաքը՝

«Ի ԳՈՎԵՍՏ ԱԳՈՒԼԵԱՅ

(Ազուլիսի բարբառով)

Ըզիլիսը արկու¹ ձիւրի² մաշի³ ա,
Վուսքն⁴ ու տանիրն⁵ նրօ մաջտիղ տըրվիժ ա,
Էքինարիքն⁶ էլ նրօնց կորքքան ընկիժ ա,
Գիւտն⁷ էլ գեաղի⁸ մաջտաղիցը նէլիս⁹ ա:

³¹ Գ. Գողթնյան, Երկերի ժողովածու, հատ. 7, Եր., 1964, էջ 276—277:

³² Ե. Լալայան, Գողթն, էջ 66—67:

³³ Մ. Սարյան, Գրառուներ իմ կյանքից, գիրք I-ին, Եր., 1966, էջ 141:

Ըզիլիցիք իարգ¹⁰ ահող¹¹ ու սայրող¹² նէլ,
Արտի օր գուրքիրը¹³ նրուց շօտ լն¹⁴ գիավան նէլ,
Արտուր օջայ Եր¹⁵ Հօրա¹⁶ Բինարս¹⁷ ամրամ¹⁸ նէլ,
Արդի օր էօրսօկս¹⁹ սարին²⁰ խօզարն²¹ նահամ²² նէլ:

Թա օր Շօհապասը²³ քրանտի²⁴ ունչնէլ Ըզիլիս,
Ուվա գիսամ ունչա նէլիլ²⁵ Ըզիլիս,
Սող²⁶ ըլխարքամ մոյն²⁷ ըօտ²⁸ ա նէլի Ըզիլիս*,
Անտուր հյօր²⁹ տօնա³⁰ ըլած Ըզիլիս»³⁴

Միջնադարյան Հայաստանի այս աչքի ընկնող քաղաքի անցյալի պատմական մի շարք դեպքերը հիշատակված են ինչպես XVIII—XIX դդ. ճանապարհորդների ու ազգագիրների, այնպես էլ XVI—XVII դդ. պատմիչների աշխատություններում: Սակայն պատմական մի շարք իրադարձությունների մասնակից Ազուլիս քաղաքի անցյալի շատ դեպքերը դեռևս կարոտ են ուսումնասիրման: Պատմական և ձեռագրական մի շարք աղբյուրների վկայությամբ Ազուլիսը մի քանի անգամ ավերվել ու վերակառուցվել է արաբական ու սելջուկյան, պարսկական ու թուրքական նվաճողների ասպատակության պատճառով: Եվ հաճախակի ավերածությունների ենթարկվելու, տիրող իշխանությունների, ինչպես նաև տեղական մեթիքների ճնշող քաղաքականության հետևանքով էլ Ազուլիսի ազգաբնակչությունը մաս առ մաս, տարբեր ժամանակներում արտվել է աշխարհի տարբեր երկրներում, որի պատճառով էլ արդեն XX դ. սկզբներին այն կորցրեց առանց այն էլ կործանման ելոր հասած իր վաղեմի դիրքն ու փառքը:

Ուշ միջնադարում Ազուլիսը բազմաթիվ ավերումների է ենթարկվել հատկապես XVIII դ.: Օրինակ, Գողթնի Դիսար գյուղի եկեղեցում եղած մի Հայրմավուրքի գրիչը, որը դեպքերին սկանաստեւ է, պարսիկների կողմից Ստորին Ազուլիսի ավերման մասին հիշատակարանում ցավով նշել է. «Ի ՌՃՀ թ. (1730) ... եղև մեծ վրդովումև և խռով և աղմուկ և կռիւ և կազ այսինքն ի մեջ երկուց ինքնակալ թագատրաց Օսմանցոց և Պարսից և եղև մեծ հալածոմն միապնեաց քրիստոնէից... և եկին ապգ Պարսիցն ի գիւղաքաղաքն Օրդուվար ժողովեցան և բանակեցին և անտի ելեալ մտին ի Դաշտ կոչեցեալ գեղն երկու տասն հապար հեծելօք և կոտորեցին ի նորանէ: հոգիս ԳՃ (300) արանց, ման-

³⁴ ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆոնդ 429, գործ 17, թերթ 91: Այս երգը Թրֆիխում ձայնագրել է ուսուցիչ Խաչատուր Խոջամիրյանը:

* Բարբառն— 1—երկու, 2—ձոր, 3—մեջ, 4—վաք, 5—տներն, 6—այգիները, 7—գետը, 8—գյուղ, 9—գնում է, 10—երգ, 11—ասող, 12—սիրող, 13—գրքեր, 14—լավ, 15—գովում են, 16—Հայի, հայոց, 17—Բանիրն, 18—առում են, 19—այժմ իսկ, 20—գեղեցիկ, քաղցր, 21—խաղերն, 22—առում էին, 23—Շահ Աբբաս, 24—չքանդեր, չավերեր, 25—ինչ կլիներ, 26—համայն, 27—մեկ, մի, 28—հատ, 29—հապար, 30—տուն:

կանց և կանանց և գերեցին ի նոցանէ անձինս ԸՃ (800) և աւելի և ես ակաւնատես եղայ աչօք իմօք և տեսի վաստուածային սուրբ տառն ի ձեռս նետողաց ալգին Պարսից գերի. գալարեցաւ աղիք իմ և ցաւեցաւ սիրտ իմ»³⁵:

Պատմության մեջ Ագուլիսի ավերումներից մեկը հայտնի է որպէս «Ագուլիսի աղետ» իրադարձությամբ. ըստ որի 1752 թ. Ատրպատականի Ալատ խանը օգտվելով Պարսկաստանում տիրող անիշխանությունից, արշավում է վալթեղու Երևանի խանությունը: Սակայն նրա բանակին ետ են շարտում Երևանի կայսպորի և օգնության հասած վրացական զորքերը: Արյունարբու Ալատ խանը նահանջի ճանապարհին Ագուլիսի մեկիք Եսայուց պահանջում է պարենամթերք և դրամ իր զորքի համար: Բացասական պատասխան ստանալով խանը հոկտեմբերի 12-ին հարձակվում է Ագուլիսի վրա: Քաղաքը կարճ դիմադրությունից հետո գրավվում է: Ալատ խանի ուղիները երեք օր Ագուլիսը և նրա շրջակա գյուղերը ավերում ու թալանում են, սրի են մատնում ազգաբնակչության մի մասին և 1200 գերիների ջշում են Պարսկաստան³⁶: Այս ավերման ականատեսներից մեկը արձանագրել է. «ի մեջ երրորդ ժամուն Ս. տաճարն քայքայեալ ջախջախեցին, և Սրբոց մաքուր մատուցն ամենայն գերեցին... անթիւ քրիստոնեայք արք և կանայք, երիտասարդք և մանկունք սրով անցուցին, որ վամենայն հողն արեանք ներկեալ շաղախեաց, և վաւուրս երիս յայս գիւղս բնակեցան. թէ եկեղեցիք և թէ բնակութիւնք ամենայն մերկացուցիս որ իբր մերկ ի մօրէ ծնեալք: Եւ յետ այսքան սրախողխողութեան յետ մնացեալ քրիստոնեայքն կողոպտաբար գերեցին որ թէ ողորմելի Ագուլեաց և թէ բոլոր շրջակայ գիւղօրէիցն մին ի ՌԲՃ (1200) քրիստոնեայ գերեցին, և ս. տաճարքն խանգարեցան և եղեն անմարդաբնակ, իբր թէ տասնամեան աւերեալ»³⁷:

Ագուլիսը, որը Հին Ջուղայից հետո, XVII—XVIII դդ. Երևանի խանության երկրորդ հարուստ քաղաքն էր, այս ավերումից հետո սկսում է աստիճանաբար անկում ապրել. նկատելի է դառնում նրա բնակչության մինչ այդ էլ սկսած մասսայական արտագաղթը: Ալատ խանի ավերման ժամանակ, ինչպէս նաև հետո, նրա բնակչության մի ստվար մասը հասնում է Կ. Պոլիս, Իտալիա, Շուշի և այլուր: Կ. Պոլսում ագուլիսցիները հիմնում են «Բեկ-օղլու» հայտնի թաղամասը և գերեզմանատունը³⁸, Շուշիում՝ ագուլեցիների թաղը և նշանավոր Ագուլեցվոց եկեղեցին, որը մինչև օրս էլ վարչարում է Շուշիի համայնապատկերը:

³⁵ Ե. Լալայան, Գողթն, էջ 20:

³⁶ Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հտ. 3, Վենետիկ, 1786, էջ 853—854: «Սուգ և կոծ ի վերոյ գյուղաքաղաքին Ագուլեայ որպիսի լինելն» («Մասիս» շաբաթաթերթ, № 3811, Կ. Պոլս, 1886), Գ. Ալիշան, Սիաական, էջ 331:

³⁷ Գ. Ալիշան, Սիաական, էջ 331: Ե. Լալայան, Գողթն, էջ 21:

³⁸ Ե. Լալայան, Գողթն, էջ 21:

Ագուլիսի անկման, նրա ազգաբնակչության գաղթի պատճառներից մեկն էլ այն է, որ ագուլիսցին սերտորեն առևտրական կապերի մեջ լինելով Եվրոպայի վերագացած և առաջադեմ քաղաքների հետ, հայրենի քաղաքից մեկնում էր այդ քաղաքները և հաճախ հիմնական բնակություն հաստատում այդտեղ: Այդ կրկնվող ճիշտ է մեկնաբանել հենց ինքը՝ ագուլիսցին: Օրինակ, ագուլիսցի Հ. Տեր-Հակոբյանը «Զօկականութեան անկումը» հոդվածում իրավացիորեն նշել է, որ «Ներկայումս, ամենափոքր հարմարութեան դեպքում նա էլ է թողնում (խուքը ագուլիսցու կնոջ մասին է— Ա. Ա.) իր հայրենիքը, իր տունն ու տեղը և ամուսնու ու զավակների հետ ճանապարհվում այնտեղ, ուր ամուսնու գործն է, նրա աշխատանքը: Այսօր քանի՜-քանի՜ տներ կարելի է ցոյց տալ հենց միայն Ագուլիսում... որ կատարելապէս դատարկ, անմարդաբնակ են մնացել»³⁹: Եվ այսպէս, XVIII—XIX դդ. Վոկական փոքրիկ գաղութներ են առաջանում Նովոխում, Չաքաթալայում, Կախում, Շուշիում, Կ. Պոլսում, Թիֆլիսում, Աստրախանում, Թավրիզում, Մոսկվայում, Մազանդարանում և այլուր:

Ագուլիսի ազգաբնակչության XVI—XIX դդ. արտագաղթման պատճառներից մեկն էլ տեղական իշխանությունների՝ թուրքական ու պարսկական, ռեժիմի և մեկիքների ճնշումն էր⁴⁰, ինչպէս նաև քաղաքի տեղագրական-աշխարհագրական դիրքի ոչ այնքան բարենպաստ պայմանները: Ագուլիսը շրջապատող անտառ ու բազմաձև լեռները լերկ են, բուսականությունից համարյա զուրկ, բերքատու հողերի գերակշռող մասը կավային և ավազային է: Իսկ հորդ տեղումների ժամանակ այդ արևախանձ լեռնալանջերից վար թափվող անձրևաջրերը, որոնց հետ միախառնվում էին քարաբեկորների ահագին կտորներն ու ցեխը, հեղեղի էր վերածվում և ջշում-տանում էր, հարթեցնում ամեն ինչ: Իսկ Ագուլիսը այդպիսի աղետաբեր հեղեղումների հաճախակի է ենթարկվել:

Պատմության մեջ հայտնի են Ագուլիսի մի շարք հեղեղումներ, որոնցից ամենատուճալիները 1872 թ. հուլիսի 26-ին և 1884 թ. մայիսի 21-ին (կամ 23-ին) տեղի ունեցած հեղեղումներն են: Չարիուրեղի է եղել 1884 թ. հեղեղումը: Ականատեսների գրավոր վկայություններով կարկուտը տեղացել է ձվաչափ մեծությամբ, իսկ լեռնային Ագուլիս գետակը, որը կազմված է խոշոր լեռից սկիւբ անտառ և Ագուլիսից վերև գտնվող Գեղերեցիկ գյուղի մոտ իրար միախառնվող երեք առվակներից, անսպասելիորեն փրփրել է, լեռներից խուժող անձրևաջրերի շունչալից հոսքի հետ խոշոր ժայռաբեկորները բերել է դեպի Ագուլիս, տակն ու վրա է արել տասնյակ տներ, խանութներ, գործատներ, կամուրջներ... ամեն ինչ ծածկել է տիղմով, խեղդամահ արել տասնյակ մարդկանց: Այս

³⁹ «Հանդես անսորեայ», թիւ 8, Վիեննա, 1914, էջ 528:

⁴⁰ Ե. Լալայանը իր «Գողթն» աշխատությունը շարադրելիս օգտվելով՝ ագուլիսցի տեր Հակոբ Տեր Աղդեալյան քահանայի ձեռագիր տետրից, բազմաթիվ վկայություններ է մեջ բերել տեղական մեկիքների ճնշող քաղաքականության մասին (էջ 21—23):

հեղեղումի ականատեսներից մեկը արձանագրել է, որ «1884 թ. ամի Մայիսի 23-ին կեսօրից յետ ժամը 3-ին թ: 4-ին, Քամբու սարի գլխի վրայով մի մեծ թուփ սեվ, շատ սաստիկ սեվ անկ բարձրացաւ... եկա Վերին Ագուլեաց Խօս սօսացեալ սարի վրայօվն դեպի Սուգդեհու սարը գնաց... կարկուտ գցեց շատ մեծ մեծ, համարեա կար այնպիսիք որ 3 ֆունթանոց քարի մեծութեամբ... ըսկրս վեց յեղեղ որն որ Սգդեհի սարիցն էր սկսած գալ, մի այնպիսի յեղեղ, որ չի տեսնված մինչև օրս, արս անցեալ եկածներից 100 անգամ բացր...»⁴¹: Ահա նրան դեպքերից հետո էլ ագուլիացիների մի մասը թողել է հայրենի քաղաքը: Այս հանգամանքի վրա է ուշադրություն դարձրել Ագուլիսի 1884 թ. հեղեղումը և նրա պատճառած վնասները նկարագրող Ս. Հախնապարյանը. «Մտածեցի, գուցէ մի այդպիսի դիպուածի կամ պարսկաց ճնշող լուծի ազդեցության ներքոյ են գաղթել մեր շրջակայ գյուղերից շատերն. այդ գյուղերում մինչև այժմ կան հայոց եկեղեցիներ... Յիշեալ եկեղեցիներն (խոսքը Գողթն գավառի Գանձուկ, Ունիս, Անսպատ, Վանանդ, Տրունիս, Դաստակ, Սուսնուս գյուղերի մասին է—Ա. Ա.) մի քանի տասնեակ տարիների ընթացքում բոլորովին կիճաման և կանհետանան (հեղինակի կանխագուշակումը այժմ իրականություն է—Ա. Ա.)»⁴²:

Պատմական անցյալում հաճախակի սվերումների ու հեղեղումների ենթարկվելով կործանվել ու ամայացել են նաև Ագուլիսի ճարտարապետական ու պատմական հուշարձանների մեծ մասը: Այդ քանին նպաստել են նաև Ագուլիսում և նրա մերձակայքում հաճախակի տեղի ունեցած երկրաշարժերը, որոնցից մի քանիսը ունեցել են մինչև 8 բալի հասնող ցնցումներ: Հայտնի են Ագուլիսի 1666 թ., 1668 թ., 1830 թ. 1831 թ. երկրաշարժերը⁴³: Օրինակ, 1666 թ. հունվարի 4-ին տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ Ագուլիսում «Շատ սարայ, բերք ու պարիսպ փլաւ...»⁴⁴, իսկ 1830 թ. հունիսին տեղի ունեցած շարժի ժամանակ. «Ագուլիսի շրջակայքում իտիտվում է Թովմա Առաքյալի վանքը, իրեն կից բնակարաններով, կործանվում են եկեղեցիներ»⁴⁵:

⁴¹ Հ. Անտոյան, Ագուլիսի յիշատակարանը եւ Տէր-Մկրտչյանների ազգարանութիւնը «Հանդես ամսօրնայ», թիվ 1—12, Վիեննա, 1977, էջ 225—226:

⁴² «Արձագանք» (շաբաթաթերթ), Թիֆլիս, № 25, 1884:

⁴³ Վ. Ստեփանյան, Երկրաշարժերը հայկական լեռնաշխարհում և նրա մերձակայքում, Եր., 1964, էջ 281:

⁴⁴ Չարսիս Ագուլեու որագրությունը, Եր., 1938, էջ 74:

⁴⁵ Վ. Ստեփանյան նշվ. աշխ., էջ 108:

ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐ

Ագուլիսից մեկ հասած նյութական ժառանգության մեջ իրենց բացառիկ արժեքն ու տեղն ունեն նրա ճարտարապետական հուշարձանները՝ վանքերի համախմբներն ու եկեղեցիները, կամուրջներն ու ժողովրդական բնակելի տները, հուշարձաններին ու տապանաքարերին դաջված-մնացած վիճակագրերը: Ագուլիսի բազմադարյան պատմության ընթացքում կերտված ու կուտակված նյութական մշակույթի այս հուշարձանները դարերի ու դժնի ժամանակների փորձություններից պատ կրում են ագուլիսցու ճակատագրի ու պատմական անցյալի աղետները: Իրար չկրկնող, բայց և այնպես իրար հարապատ այդ հուշարձանները անկրկնելի ու յուրահատուկ բնության հետ մեկտեղ գեղարվեստորեն ու պատմականորեն արժեքավորում են նրա ինքնատիպ պատմական անցյալը: Ցավոք, առ այսօր Ագուլիսի պատմաճարտարապետական համալիրներից ու տասնյակների հասնող այլ հուշարձաններից, որոնց թիվը անցնում է 50-ից, հայ ճարտարապետության պատմության մեջ հայտնի են միայն 2—3 հուշարձան՝ ս. Թովմա վանքը, ս. Քրիստափոր և ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցիները՝ այն էլ բավականին համառոտ: Հանեմատաբար ընդարձակ տեղեկություններով է՞ ներկայացված միայն ս. Թովմա վանքը, որն իր հռչակով և մշակութային դերով տեղ է գրել XIX դ. վերջերի ճանապարհորդների ու ազգագիրների, այդ թվում և ճարտարապետական հուշարձանների նկարագրություններն ընդգրկող աշխատություններում՝ Ագուլիսի մյուս հոգեվոր և աշխարհիկ կանգուն հուշարձանները մնալով ս. Թովմա վանքի փառքի սուվերում դուրս են մնացել ուսումնասիրողների տեսադաշտից:

Ագուլիսի հուշարձաններից ս. Թովմա վանքի, ս. Քրիստափոր, Մեծ Աստվածածին եկեղեցիների կիմնադրումը ավանդությունը վերագրում է սեր թվարկության առաջին դարերին: Հայկական համանան հուշարձանների

¹ Ղ. Այվազյան, Սիսական, էջ 323—337: Ե. Լալայան, Գողթն, էջ 64—67:

շարքում դրանք ունեն համարժեք շինարվեստ, հետաքրքիր ճարտարապետական ուժումներ և արժանի են ուշադրության ու գնահատականի:

XIX դ. կեսերին Ազուխի 12 վանքերից ու եկեղեցիներից Վերին Ազուխում բավականին լավ վիճակում կանգուն էին ութը, իսկ Ստորինում՝ երկուսը՝ Մարդաշատ քաղաքում այդ կոթողները մյուս ճարտարապետական շինությունների հետ մի հիանալի տեսարան են ներկայացրել: Այժմյան վիճակով պատմական քաղաքի երկայնքով գեռես կանգուն և կիսակործան գոյատևում են Ազուխի հուշարձանների մի մասը: Քաղաքի վերին հատվածում Վերին Գետում, համատարած ավերակների մեջ հաղթակատրոն կանգուն է ս. Ստեփանոս եկեղեցին, որից ներքև ս. Թովմայի վանքն է: Վանքի հարավարևելյան կողմում՝ Շնատակ թաղամասում, մինչև 1940-ական թվականները կանգուն էր ս. Մինաս եկեղեցին: Ս. Մինասից ներքև, Գինդար լեռան փեշին բազմել է ս. Քրիստափոր կամ Մայր եկեղեցին, որից 400—500 մ հարավ-արևմուտք՝ գետի աջ ափին գտնվում է ս. Շնավոն վեհաշուք եկեղեցուց մնացած խճճուկ ավերակը: Այս եկեղեցուց մոտ 400—450 մ հարավ-արևմուտք՝ անմիջապես լեռնալանջից, բազմել է ս. Հովհաննես-Սկրտիչ եկեղեցու համալիրը, որից մոտ 300 մ վար, Փոքր սար բլուրի հարթ վայրում կանգուն է ս. Հակոբ-Հայրապետ եկեղեցին: Իսկ Վերին Ազուխի և Ստորին կամ Դաշտ Ազուխի միջև, Վերին Ազուխի հարավարևելյան կողմում, անմիջապես լեռնալանջի հարմարավետ տեղում գտնվում են Մեծ Աստվածածին մեծակառույց եկեղեցու համալիրի ավերակները: Ստորին Ազուխում կամ Դաշտում, գյուղի հյուսիսարևմտյան թաղամասում կանգուն են իրար կից ս. Նշան կամ Ամարային և ս. Ստեփանոս կամ Երրորդություն եկեղեցիները: Քաղաքի տարբեր թաղամասերում մինչև հիմքերը ավերված կամ աննշան ավերակներով նկատելի են նաև ս. Աստվածածին կամ Կուսաստան, Հակոբ Ալփիան կամ Ընձայնաց Լոյս, ս. Սարգիս եկեղեցիները, ինչպես նաև 5—6 մատուռների, բերդատեղերի և այլ հուշարձանների ավերակները:

Ազուխի այս պատմաճարտարապետական հուշարձանները իրենց մեծ ու փոքր համալիրներով, ասես քարե բուսականություն լինեն լերկ քարաժայռերով շրջապատված այդ կիրճում: Եկեղեցիներից մի քանիսը, ինչպես օրինակ, ս. Թովմայի վանքը, ս. Հովհաննես-Սկրտիչ եկեղեցին, Մեծ Աստվածածինը օտար նվաճողների ասպատակումների ժամանակ ծառայել են իբրև ամրոց-պապատարաններ: Այդ պատճառով Ազուխի հուշարձանները իրենց եական կողմերի՝ համաչափության, վարդաքանդակների ու ոճի հետ միասին ունեն նաև ընարված շինանյութեր: Բացի այդ, Ազուխի հուշարձաններն աչքի են ընկնում նաև հետաքրքիր առանձնահատկություններով: Այդ տեսակետից առաջին հեր-

թին պետք է նշել Ազուխի եկեղեցիների գլխավոր խորանների (նաև ավանդատների) կառուցվածքները, որոնք ունեն բազմաճիտ (հնգանիստ, յոթանիստ, ուղղանկյուն) և կիսաշրջանաձև հորինվածքներ: Բացի այդ՝ XVII դ. վերջերի կառուցված հուշարձաններում, Վասպուրականի նահանգի ճարտարապետական դպրոցի ոճին բնորոշ, լայն տարածում է գտել թրծած աղյուսի կիրառումը: Ազուխի հուշարձաններում աղյուսը հիմնականում օգտագործվել է առանձին հատվածների, գմբեթների շինարարությունում, ինչպես նաև հուշարձանների օժանդակ շինություններում: Դա մի կողմից պայմանավորված էր էժան շինանյութ ձեռք բերելու, իսկ մյուս կողմից էլ հուշարձանի արագ վերականգնման, ինչպես նաև շարվածքի վանգվածի թեթևացման նպատակներով:

Ազուխի հուշարձանները կանգուն թե կիսակործան վիճակով շատ բան են պատմում սելջուկների շինարար ոգու և կարողությունների, քարին շունչ ու հոգի տվող Ազուխի բազմաշնորհ վարպետների մասին: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ազուխի հուշարձանները իրենց հիմնադրումից մեկ կամ երկու սերունդ հետո ավերումների և վերանորոգումների են ենթարկվել: Այդ իսկ պատճառով էլ դարերը այս ճարտարապետական հուշարձանների շինարվեստում դրոշմել են իրենց կնիքը: Պատմական աղբյուրները³ և հուշարձանների վիճակները ապացուցում են, որ Ազուխի այժմյան կանգուն ու կիսավեր հուշարձանները վերջին դարերի ընթացքում վերականգնվել կամ կառուցվել են XVI—XVII դարերում:

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԿԱՄ ԿՈՒՄՍԻ ՄԱՏՈՒԹ

Այս հուշարձանը գտնվում է Վանքի թաղում՝ ս. Թովմա վանքից հյուսիս: Այժմ ավերակների է վերածվել: Այն, ըստ հորինվածքի, փոքրիկ շինություն է եղել՝ հիմնված երկու մույթերի վրա: Ըստ ավանդության այս մատուռի հարավային որմն տակ ամփոփված է Բարդուղիմեոս առաքյալի Կուսն կամ Կոսն աշակերտի աճյունը: Ի միջի այլոց հենց այս Կուսից էլ սկսվեցավորվում է Գողթն գավառի եպիսկոպոսությունը:

Մատուռի միակ մուտքի վերևի մասում ագուցված է եղել 1490 թ. մի վիճակի խաչքար, որն այժմ ավերակներում չկա: Ավանդապրուցը պատմում է, որ այստեղ հայտնաբերել են կտավի մեջ փաթաթված արյունոտված քարեր, որոնք կրկին ամփոփել են գտնված տեղում⁴:

³ Պատմության Առաջիկ վարդապետի Դարիժեցույ, Վարդաշապատ, 1896, էջ 353:

² Ազուխի, նշվ. աշխ., էջ 65, 96, 132:

⁴ Ե. Լալայան, Գողթն, էջ 64: Դ. Ալիշան, Սիսական, էջ 329:

² И. Озаровский, Опыт военного обозрения Закавказья, СПб., 1883, с. 91.

Ագուլիսի ճարտարապետական հուշարձանների մեջ, իր կառուցվածքով ու արվեստով, մշակութային բուն կյանքով առանձնանում է ս. Թովմայի հըր-չոկավոր վանքը, որը Գողթն գավառի ամենագեղեցիկ վանքն է: Այն իր հիմնադրումից ի վեր, մինչև XIX դ., եղել է Գողթնի մշտական ու անփոփոխ եպիսկոպոսանիստ վանքը⁴: Աբրահամ Կրեոսացին ս. Թովմա վանքը որակավորել է որպես. «հիանալի ու վարմանալի տեսողաց»⁵: Եվ իրոք, այն մի գեղեցկատես ճարտարապետական համալիր է:

Ըստ ավանդության և ս. Թովմա վանքի տաճարի գլխավոր՝ արևմտյան մուտքի բարավորին XVII դ. քանդակված ընդարձակ արձանագրության, այն հիմնադրել է Բարդուղիմեոս առաքյալը՝ I դ. կեսերին, որը և 305 թ. հաստատել է Գրիգոր Լուսավորիչը: Հուշարձանը դարերի ընթացքում կրել է մի շարք վերակառուցումներ և պատմական ու ձեռագրական աղբյուրներում հիշատակվում է XIV դ. կեսերից:


Ս. Թովմա վանքի այժմյան համալիրը, որը հիմնականում վերակառուցվել է XVII դ., Հայաստանի միջնադարյան նշանավոր ճարտարապետական հուշարձաններից մեկն է: Ս. Թովմա վանքը, որը գտնվում է քաղաքի վանքի թաղում, XVI դ. մի շարք խոշոր համալիրների նման (Սուր-Վիրապ, Տաթևի Մեծ անասորտ, Առտապատի Կարմիր վանք, Լիմ անասորտ և այլն) կառուցված է ուղղանկյուն, կանոնավոր հատակագծով, որի միակ տաճարը տեղադրված է վանական համալիրի կենտրոնում: Տաճարի շուրջը, քառանկյունի բարձր ու հզոր սյրիսայների պարագծով կառուցված են համալիրի տնտեսական, բնակելի, օժանդակ և այլ շինությունները: Տաճարի և համալիրի շինությունների միջև ընկած է բաղնիքային պատ (30—40 մ) տարածություն: Այդպիսով տաճարը առանձնացված է վանքային շինություններից և կանգնած է պատ, իր դիրքի և պաշտամունքային դերի շեշտվածությամբ:

Ս. Թովմայի տաճարը, որը խաչաձև ծածկով քառամույթ գմբեթավոր բազիլիկա է, կառուցված է սրբատաշ բազալտով ու կարմրերանգ քարերով: Հուշարձանի հորինվածքը բաղկացած է արևելյան մասում գտնվող ընդարձակ ու յորանիստ ավագ խորանից, փոյգ ավանդատներից և ընդարձակ ու բարձր ինտերյեր

⁴ Գողթն գավառի եպիսկոպոսների և միճակի առաջնորդների ցուցակը, տն՝ Ղ. Ալիշառ, Միտական, էջ 312—313, Ե. Լալայան, Գողթն, էջ 31—32:

⁵ Աբրահամ Կաթողիկոս Կրեոսացիոյ Պատմութիւն անցիցն իւրոյ եւ Նարո-Շահին սրբից: Էջմիածին, 1870, էջ 77:

ունեցող աղոթարանից (գծ. 1): Աղոթարանի չորս խաչաձև կտրվածքով հաստանելույս մույթերի վրա կանգնած է գեղեցիկ՝ 12 պատուհաններով գմբեթը: Ունի երեք կամարապարզ մուտքեր՝ արևմտյան, հյուսիսային և հարավային ճա-



Գծ. 1 Ագուլիսի ս. Թովմա վանքի եկեղեցու հատակագիծը:

կատներում (վերջին երկուսը այժմ փակված են): Գեղեցիկ և լուսավոր ինտերյեր ունեցող այս տաճարի ավագ խորանի բեմի արևմտյան պատը, որն այժմ

բանդված է, կառուցված է մոտ 2—3,30 մ երկարություն և 1—1,30 մ լայնություն ունեցող քանդակապարզ մարմարե քարերով: Ավագ խորանը ունի պաշաձև կամարներով պսակված 7 որմնախորշեր և լուսավորվում է արևելյան որմում բացված խաչաձև լուսամուտի միջոցով:

Հուշարձանի ավագ խորանի երկու կողմերում գտնվող ավանդատները հատակագծում ուղղանկյունաձև են, որոնց որմնախորշերը ունեն լայն բացվածքներ և ավարտվում են կիսաշրջանաձև կամարներով: Հյուսիսային ավանդատան ներսում հյուսիսային ու արևմտյան որմերին կից, անկյունային հատվածում կառուցված քարե աստիճաններով ու հատուկ մուտքի միջոցով բարձրանում են տաճարի վերնատունը, տանիքը, ավանդատների ծածկերի ու կառույցի այլ մասերում գտնվող բաշտոցներն ու պահարանները, ուր ժամանակին պահվել են վանքի ձեռագրերն ու սուրբ մատուցները, թանկարժեք իրերը: Եկեղեցու հարավային ավանդատունը վանքի համար ծառայել է որպես թանգարան, ուր ցուցադրվել են թանկարժեք ու սուրբ իրերը, ձեռագրերը և այլն:

Ս. Թովմաս տաճարի խաչաձև մույթերն ունեն 1,57 մ կտրվածք, որոնց կամարների լայնությունը կազմում է 0,97 մ: Կամարների թռիչքը ընդերկայանական մասում՝ խորանից մինչև մույթերը, կազմում է 5,80 մ, մույթերի միջև ընկած տարածությունը հավասար է 6,25 մ, իսկ մույթերից մինչև եկեղեցու արևմտյան որմնանույթերը՝ 4,20 մ: Ընդլայնական մասում եկեղեցու որմնանույթերից մինչև մույթերն ընկած տարածության կամարների թռիչքը կազմում է 3,48 մ, իսկ մույթամիջի թռիչքը՝ 6,25 մ:

Ս. Թովմասի տաճարի ներքին տարածությունն էլ ավելի է շեշտված եղել նրա բարձրարվեստ որմնանկարներով, որոնք 1680-ական թվականներին կատարել է շոտլանդացի հռչակավոր նկարիչ, բանաստեղծ ու տաղերգու Նաղաշ Հովնաթանը: Եկեղեցում դեռևս անվնաս են մնացել գմբեթի, գմբեթատակ մասերի և չորս մույթերի աղեղների, ինչպես նաև եկեղեցու արմտյան մուտքի կամարի տակ արված որմնանկարները (նկ. 14—18): Տեսանելի որմնանկարները և XVIII դ. վերջերին Ազուլիսի դպրոցի ուսուցիչ Մերոպ Փափազյանի նկարագրությունը⁶ ապացուցում են, որ եկեղեցու որմերի ամբողջ տարածքը՝ կամարներից ցած, որմնանկարված է եղել դեղնասպեղադուր, իսկ մինչև կամարները՝ սպիտակ ու երկնագույն երանգներով: Իսկ եկեղեցու կամարները և ամբողջ ստաստաղը որմնանկարված է եղել պայծառ, բազմերանգ ծաղկազարդերով և մասամբ էլ փնջաձև, ծաղկամանների մեջ դրված ծաղիկներով, որոնք ունեն վառվառ ծաղկաթերթեր: Ս. Թովմասի որմնանկարների բուսական վարդամտիվները նման են Նաղաշի մանրանկարչական արվեստի ծաղկազարդերին:

⁶ Ս. Փափազյան, Հնութիւնք վանքից Գողթան գաւառ, լուսանկարչական արժու, Վա. դարձագատ, 1891:

Ներդաշնակ դասավորված, բազմագույն ծաղիկները առանձին կենդանություն են ստանում մանրանկարչական գոգորիկ թռչնապատկերներից:

Յուրատիպ շքեղության կնիք է կրում հատկապես ս. Թովմասի գմբեթը: Նաղաշ Հովնաթանը տաճարի գմբեթը (նկ. 16ա) դիտելով որպես երկինք, սաբաղշովին որմնանկարել է բացերանգ կապույտով, որի վրա նկարված վեցաթև աստղերը ասես կաթկտում են և դիտողի համար երկնային խորության պատրուսք ստեղծում: Ս. Թովմասի գմբեթի թմբուկի և մույթերի կամարաղեղների բազմերանգ ու ռճավորված, ինչպես նաև ս. Քրիստափոր եկեղեցու համանման որմնանկարների կոլորիտն ու վարդամտիվները իրենց կատարման ռճով նման են Էջմիածնի Մայր տաճարի Նաղաշ Հովնաթանի կատարած որմնանկարներին: Ս. Թովմասի բեմի գմբեթադղը ըստ Մ. Փափազյանի նկարագրության, խ որմնանկարված է եղել որպես «կապույտ երկինք հանդերձ աստղերով», բեմի սյուների վերևում չորս անկյունները, վարդաբել են «թևատարած չորս իրեշտուկներ», իսկ բեմի «բլուր քարերի վերին մասերում փորագրուած և ներկուած է գեղեցիկ գոյն պզոյն նկարներ, վերջին երկու ծայրերում՝ մարմարեայ քարերի վրայ, աստիճանների տակ՝ փորագրված է ս. Ստեփանոս Նախավկայի պատկերը սարգավակի պեշտով»⁷:

Ս. Թովմասի արևմտյան մուտքը երիված է բարձր կամարով և ունի գեղեցիկ քանդակազարդ գոտիներ: Մուտքի բարավորից վերև՝ կամարի տակ, քառանկյուն շրջանակի մեջ տեղադրված է «Թովմասի անհավատությունը» բարձրաքանդակը (նկ. 9), ուր Քրիստոսը պատկերված է ամբողջ հարակով, սեծ խաչափայտը գրկին՝ աջ ձեռքը վեր բարձրացրած և հայացքով Թովմասին մատնացույց է անում գեղարդով խոցված իր կողը: Վերջինս պատկերված է նստած և հավաստիանալու համար իր աջ ձեռքով մեծ պոշուկայն շրջափում է Քրիստոսի վերքը: Այս ավետարանական սյուժեի շրջանակից դուրս, Նաղաշ Հովնաթանը Քրիստոսի գլխավերևում, անմիջապես խորացող կամարի տակ որմնանկարել է հայր Աստծո պատկերը, շրջանակի ձախ կողմում՝ մի դրվագ Աստվածածնի կյանքից, իսկ շրջանակի աջ կողմում՝ Մագթաղիների պատկերը: Աստվածածնի գլխավերևում ճաճանչալոր ու կանացի դեմքով պատկերված արեգակի, իսկ Մագթաղիների գլխավերևում՝ երկնքի լողացող կիսալուսնի պատկերումները այս սյուժեաային աշխատանքին հաղորդում են հաստոցային նկարչության արժեքավորում: Քանդակի և որմնանկարների միջև միաձուլ կապ ստեղծելու համար նկարիչ-արվեստագետ Նաղաշը «Թովմասի անհավատությունը» բարձրաքանդակը վարպետորեն ներկել է և առաջին հայացքից քանդակի այդ գունավորման շնորհիվ ասես որմնանկար լինի: Եկեղեցու արևմտյան մուտքի այս դիմանկարները, որոնք, ցավոք, ս. Թովմասի տաճարու՝ Նաղաշի

7 Ս. Փափազյան, նշված սյուժե: Ե. Լադյան, Գողթն, էջ 72:

կատարած պատկերագրությունից մեզ հասած միակ բեկորներն են, մուտքի ճարտարապետության և նրա ակնհաս զարգացումների հետ համահնչուն են և էլ ավելի գեղեցկություն ու հանդիսավորություն են հաղորդում նրան: Մուտքի մոնումենտալությունը ընդգծվում է նաև նրա բարախորին քանդակված 9 տողից կապված ընդարձակ արձանագրությամբ: Գեղեցիկ է եղել նաև այս մուտքի փայտե դուռը, որն այժմ խիստ քայքայված է: Քայքայված է նաև դռան վերևի մասի պատվիրատուի արձանագրությունը: Վերջինիս համաձայն այս դուռը 1694 թ. պատրաստել է տվել Դաշտ ազուլիսցի Ասովաձատուրի ու Խաթունջանի որդի խոջա Սեթը:

Ս. Թովմայի տաճարը գեղեցկատես է նաև հյուսիսային ու հարավային ճակատներում գտնվող մուտքերի քանդակագործներով ու պատկերաքանդակներով, բարավորների ընդարձակ արձանագրություններով, մուտքերի առջև կառուցած կանգակատներով: Կառույցին առանձին արտահայտչականություն է հաղորդում նաև շինության համարյա կենտրոնով, նրա ամբողջ պարագծով տարված քանդակագործին, որին միացված են նաև պատուհանների շուրջը երկված քանդակավարդերը:

Եկեղեցու արևմտյան մուտքի առջև, երկու մույթերի հորինվածքով կառուցված կանգակատուն (նկ. 7) ունի բարձր ինտերյեր, գեղեցիկ տեսք: Ըստ աղբյուրների այն կառուցվել է 1825 թ.⁸ Խախկին կանգակատան տեղում: Հետո այն սրբատաշ քարով վերանորոգվել է 1831 թ. Շուշիում բնակվող ազուլիսցի Հախունյան տոհմի ջանքերով⁹, ապա՝ 1904 թ.⁹: Չանգակատան կամարների բարձրությամբ, եկեղեցու արևմտյան ճակատում ագուցված են 6 արձանագիր քարեր, որոնք հավերժացնում են վանքի 1694 թ. և նրա տաճարի վերանորոգմանը օժանդակած ավելի քան 40 ազուլիսցիների, ցղնեցիների ու ռամիսցիների և այլոց անունները:

Գեղեցիկ քանդակավարդ գոտիներով են երկված նաև տաճարի հյուսիսային ու հարավային մուտքերը, որոնք ունեն արտահայտիչ պատկերաքանդակներ և արձանագրություններ¹⁰: Հյուսիսային մուտքի 8 տողանոց արձանագիր բարավորից վերև, մուտքի խորացող բարձր կամարի տակ, հարթ և ապստմակերեսին քանդակված է Պողոս առաքյալի բարձաքանդակը (նկ. 10), որը ձախ ձեռքով բռնել է գավալան-խաչափայտը, իսկ աջով՝ օձ և թևի տակ ունի ավետարան: Այս մուտքի կանգակատունը ևս կառուցված է սրբատաշ քարերով, երկու մույթերի հորինվածքով: Ժամանակին կանգակատան ծածկում կանգնեցված է եղել վեց սյուներով ռոտոնդան:

⁸ Մ. Փավոսյան, նշվ. աղբյուր, Ե. Լալայան, Գողթն, էջ 70:

⁹ Հ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, Վիեննա, 1942, էջ 679:

¹⁰ Մանրամասն տե՛ս Ա. Այվազյան, Ազուլիսի և Յղնայի պատկերաքանդակները, «Գալուստ», № 8, 1981, էջ 81—87:

Ուշագրավ է նաև տաճարի հարավային մուտքը, որը ևս ունի գեղեցիկ բարձաքանդակ (նկ. 11) և ընդարձակ արձանագրություն: Մուտքի մոտ սրբատաշ քարերով, չորս հաստահեղույս մույթերի վրա կառուցված է մի մատուռ-կանգակատուն, որը մուտքից մոտ 2 մ դեպի արևմուտք է տեղադրված և նույնքան էլ հեռու է գտնվում եկեղեցու հարավային պատից: Մատուռ-կանգակատան (նկ. 8) ծածկում կանգնեցված է քառասյուն ու փոքրիկ ռոտոնդան: Ամենայն հավանականությամբ այս ս. Թովմայի առաջնորդ Պետրոս վարդապետի 1666 թ. ս. Թովմայի եպիսկոպոս Խաչատուր վարդապետի շիրիմի վրա կառուցված մատուռն է: Այդ մասին է վկայում նաև XVII դ. հեղինակ, ազուլիսցի Չաքարիա Ազուլեցին նշելով, որ Պետրոս վարդապետը Խաչատուրի շիրիմի «վրայ տաշած քարով մեծ մատուռ շինեց եկեղեցու յարանու կողմն»¹⁰:

Ազուլիսի ս. Թովմայի վանքը իր գլխավոր հատակագծում, պարիսպների պարագծով ունի ավելի քան 50-ի չափ բնակելի և կոնունայ կառույցներ, որոնց մի մասը երկհարկանի են: Այդ շինությունների մեծ մասը, որոնք կառուցված են սրբատաշ քարերով ու թրծած աղյուսով, ունեն թաղակապ կապվածություններ: Վանքի քառանկյունի և բարձր՝ 6—7 մ հասնող, պարիսպն ունի ռավանկան դիտակներով շրջանաձև վեց հյոր աշտարակներ՝ չորսը անկյունային հատվածներում, իսկ երկուսը՝ հյուսիսային ու հարավային ընդերկայանական որմերի կենտրոններում (նկ. 21): Պարսպի արևմտյան ճակատում բացված դարպասի բարձր ու քարաշեն, թաղակապ ծածկով միջանցքը այցելուին տանում է դեպի տաճարի արևմտյան ճակատը: Պարսպաշարքի պարագծով կառուցված շինությունները իրենց կամարակապ մուտքերով ու պատուհաններով, թաղակապ միջուցքներով ու բավականին ապստ բակով օրգանապես կապված են վանքի ներքին տարածության հետ:

Ազուլիսի ս. Թովմա վանքի համալիրի կարևոր ու հիշարժան հուշարձաններից է նաև նրա կռատունը: Այնտեղակողմից մեկնաբանմամբ 1 դարի կեսերին Բարդուղիմեոս առաքյալը ս. Թովմա վանքի նախկին շինությունը հիմնել է հեթանոսական կռատուն կոթքին: Իսկ հետագայում, երբ քրիստոնեական հավատը համատարած ընդունելություն է գտնում, կռատունը որպես հին հավատի հուշարձան, վերցնում են վանքի համալիրի մեջ: Այն վանքի շինությունների հետ համատեղ դարերի ընթացքում կրել է մի շարք նորոգումներ: Նրա այժմյան կեսնուն շինությունը կառուցված է ս. Թովմայի տաճարի սրբատաշ քարերով և հաճելի տպավորություն է թողնում:

Ս. Թովմայի կռատունը (նկ. 19) գտնվում է վանքի հյուսիսային պարսպաշարի շինությունների շարքում, անմիջապես տաճարի հյուսիսարևմտյան կողմում՝ նրանից 35—40 մ հեռավորության վրա: Այն հյուսիսից հարավ առանց-

¹⁰ Չ. Ազուլեցի, նշվ. աղյուս., էջ 64: Ե. Լալայան, Գողթն, էջ 72:

քով, քառակուսուն մտա մի խորանատիպ շինություն է: Բարձր ու լուսավոր իստություն ունեցող և թաղակալ կազմությամբ այս խորանը, որի ամբողջ ճակատը բաց է, մասնատված է երկշարք՝ յուրաքանչյուր շարքում 9-ական, որմնախորշերով: Շինության հյուսիսային և հարավային կողմերում գտնվում են ավանդատները, որոնց մուտքերը գտնվում են խորանի արևելյան ու արևմտյան պատերի մեջ: Առատան խորանը սվաղված է և հավանաբար որմնանկարված է եղել: Հեթանոսական այս հուշարձանը դարերի ընթացքում կորցրել է իր նախկին նշանակությունը և դարեր շարունակ օգտագործվել է որպես քրիստոնեական պաշտամունքի վայր:

Ազուլիսի ս. Թովմայի վանքապատկան շինությունների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանց մեծ մասը հիմնականում կառուցված են եղել XII—XIII դդ., որոնք հետագայում մի քանի անգամ նորոգվել են և դրանց թվում ավելացվել են նոր շինություններ: Վանքի շինությունները և եկեղեցին 1636 թ. Մովսես կաթողիկոսի աջակերտ, ս. Թովմայի առաջնորդ Նաչատուր վարդապետը. «Նորոգեաց ի հիմանց գուրբ ուխտս Թումայի, բարձրաբերձ կահարակոս և գմբեթաձև գուրբ եկեղեցին, և բարձր պարսպով և չորեքանկյունի խուցերով և մուրբախերով (ստիանոց) վարդարեաց և բալում նեղութեամբ և չարչարանօք շինեաց»¹¹:

Վանքի այժմյան պարիսպները, շինությունները հիմնավոր կերպով վերանորոգել է նաև Նաչատուր վարդապետի հետնորդ Պետրոս վարդապետը՝ 1668 թ.: Այդ վերանորոգման ժամանակակից Չ. Ազուլեցին նշել է, որ նա. «ըսկիլքն արաւ վանքի Դ կողմի պարիսպն մեծացնել, որ քար ու հողով էր ամեն տներն, սայ Բրդստանայ (Վասպուրականից— Ա. Ա.) ուստէք բերաւ, նոր այլի հող ու քարով պարիսպն շինեց, բրջեր շինեց, մաղապեք շինեց, ոմն կիր ու քարով գուրբեպի, ոմն երաձ քարփիչ ու գաջով գուրբեպիք. մեջն առնէ տաշաձ քարով, թե խուց, թե օթախնի լաւ արձակոցոյց: Ջրի առուն գցեց պարիսպի մեջն: Շատ աշխատանք արաւ, շատ դրամ խարջեց»¹²: Վանքը նորոգումների է ենթարկվել նաև 1694 թ., որի մասին վկայություններ կան ինչպես վիմագրություններում, այնպես էլ Ազուլիսում գրչագրված ձեռագրերում: Օրինակ Աշուխում գրչագրված ձեռագրերից մեկի հիշատակարանը վկայում է, որ. «...թվին ՌձևԳ (1694) շինեցաւ սբ Թումայի առաքելոյն եկղցին. Ազուլեաց վանոց»¹³:

Հեռաբրքրական է նաև ս. Թովմա վանքի ողջ համալիրի արտաքին արտադիպոչականությունը: Այն տեղադրված լինելով բնակելի թաղամասում միան-

գույնյան մեկուսացված է: Այստեղ, Նախիջևանի գավառների XVI—XVII դդ. մյուս հուշարձանների համեմատությամբ, առավել շեշտված է վանքի ամրոցային բնույթը: Այն իր բարձր ու ամուր պարիսպների ու հպոր բուրգերի շնորհիվ անառիկ ռավանապաշտպան կառույցի տպավորություն է թողնում, ուր շատ անգամներ պատսպարվել ու պաշարել է Ազուլիսի բնակչության մի մասը: Ս. Թովմայի վանքը XVII դ. իր գլխավոր հատակագծում ստանալով բուրգերով լրացված պարիսպներ, կարծես թե անջատվել է շրջապատից, պարփակվել անուր պարիսպների մեջ: Այդ իսկ պատճառով վանքի ճարտարապետական ու գեղարվեստական արժանիքները ընկալելու հնարավորությունները սահմանափակվել են: Սակայն Ազուլիսի ձորում Վանքի, Վերին Գետ, Շոնատակ և այլ թաղամասերի բարձրադիր վայրերից ու լանջերին կապած բնակելի տներից ուրվագծվում և ընկալվում է վանքի ներքին տարածության և տաճարի ճարտարապետության ընդհանուր համայնապատկերը:

Ս. Թովմայի վանքը վերը նշված մի շարք արժանիքներով ու ճարտարապետական լուծումներով, իր գլխավոր հատակագծով կարևոր տեղ ունի հայ ճարտարապետության միջնադարյան համալիրների թվում:

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ

(սկ. 22—24, 26)

Ազուլիսի Վերին գետ թաղամասում, լեռնալանջի փեղին կառուցված այս եկեղեցին շրջակայքի հարյուրավոր տների ավերակներում կանգուն մնացած միակ շինությունն է: Ս. Ստեփանոսի անցյալի մասին գրավոր աղբյուրներում շատ քիչ տեղեկություններ են պահպանվել: Ժամանակի ընթացքում անհայտացել ու եղծվել են նաև եկեղեցու համալիրի վիմագրերն ու պատկերաքանդակները:

Հուշարձանի ճարտարապետական ու հնագիտական տվյալները վկայում են, որ նրա նախկին շինությունը կառուցված է եղել դեռևս XII—XIII դդ. և վերանորոգվել է XVII դ.: XX դ. սկզբներին մասնակիորեն վերանորոգված ս. Ստեփանոսը այժմ կիսախարխուլ վիճակում է գտնվում (սկ. 22—24, 26):


Ս. Ստեփանոս եկեղեցին կառուցված է մաքուր տաշած բազալտով և կարմերանգ քարերով, ունի քառանկյո գմբեթավոր, խաչաձև ծածկով բազիլիկայի հորինվածք (զժ. 2): Եկեղեցու արևելյան մասում, ավազ խորանի երկու կողմերում կան բավականին մեծ ու կիսաշրջանաձև խորաններ ևս, որոնց արևմտյան ճակատները ավազ խորանի նման ամբողջովին բաց են և անմիջապես կապի մեջ են աղոթասրահի հետ: Այդ խորանները իրենց տակ ունեն նկուղային

¹¹ Գ. Ալիշան, Սիսական, էջ 326—327:

¹² Չ. Ազուլեցի, նշվ. աշխ., էջ 78:

¹³ Յուզակ հայերեն ձեռագրաց Թավրիզի, կապեց՝ Հր. Աճառյան, Վիեննա, 1910, էջ 115:

հարկ-ավանդատներ, որոնց մուտքերը բացված են խորանների բեմից և աստիճաններով իջնում են ներքև: Եկեղեցու բառանկյուն հիմքերով չորս խաչաձև կտրվածքով մույթերի վրա կանգնեցված է գեղեցիկ գմբեթը:



Գծ. 2 Ագուլիսի ս. Ստեփանոս եկեղեցու հատակագիծը

Ս. Ստեփանոս եկեղեցին ունի երեք մուտքեր՝ արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներում, որոնք երիված են ճաշակով ու ձևավոր քանդակավարդերով: Ժամանակին այդ մուտքերի կամարների տակ ագուցված են եղել մեկական սյուժետային բարձրաքանդակներ, որոնք այժմ տեղահան են արվել ու անհայտացել: Եկեղեցու հարավային մուտքի առջև կառուցված երկու մույթերի հորինվածքով եռահարկ կանգակառուցը հիմնահատակ ավերվել է 1940-ական թվականներին: Հուշարձանի քառանկյունի պարսպի ներսում եղած կոմունալ շինությունները այժմ ևս մինչև հիմքերը ավերակների են վերածվել:

Այս հուշարձանը կառուցված է Ագուլիսի Վերին թաղում, Գինդար լեռան հարթ և հարմարավետ տեղում: Քաղաքի կենտրոնական մասում հիմնադրված լինելու պատճառով այն համարվել է նաև Մայր կամ Վերին թաղի եկեղեցի¹⁴: Ս. Քրիստոսափորի առջև և նրա հյուսիսային կողմում փռված է Ագուլիսի Վերին թղի տների ու ապարանքների մեծ մասը:

Ըստ ավանդության և Ջաքարիա Ագուլեցու հաղորդած տեղեկությունների այս եկեղեցին. «...Թաթեոս առաքեալն էր շինած... Սորայ առաջին շինուցն Քրիստոսի առաքեալքն էին»¹⁵: Ս. Քրիստոսափոր եկեղեցու արևմտյան ճակատը և նրա գմբեթը տեսանելի է Ագուլիսի մի շարք թաղամասերից: Ջեռագրական աղբյուրներում այս եկեղեցին հիշատակվում է XV դ.: 1447 թ. Ագուլիսի գրիչներից մեկը՝ Մաթեոս քահանան, իր ձեռագրերից մեկում՝ «Տոնականում», գրչագրել է. «ի գեաղաքադաքս Ագուլիս գուեի Գոդթան վիճակիս, ընդ հովանեա՝ առաքելայարկ խորանիս, աստավծաբնակ տաճարիս Քրիստոսափորի մեծ նահատակիս... ի թուականութանս Հայոց ՊՂԶ (1447)»¹⁶: Այնուհետև հայտնի է, որ 1682 թ. Նաղաշ Հովնաթանը այդ եկեղեցու հովանու ներքո է գրչագրել «Պատմութիւն Հրեիցը»¹⁷ և այլ ձեռագրերը:

Ս. Քրիստոսափոր եկեղեցին, որն իր հիմնադրումից հետո մի քանի անգամ վերանորոգվել է, կառուցված է քառանույթ գմբեթակիր բալխիկայի հորինվածքով: Կապված է ավագ խորանից, զույգ ավանդատներից և լուսավոր ու բարձր ինտերիոր ունեցող արքայապահից, որի չորս հաստահեղույս մույթերի վրա կանգնեցված է աղյուսաշար գմբեթը: Ունի երեք կամարապարոլ ու վարդաքանդակներով երիված մուտքեր՝ արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներում (վերջին երկուսը այժմ վակված են): Արևմտյան մուտքի բարավորից վերև, քառանկյունի շրջանակի մեջ տեղադրված է մանուկ Հիսուսը գրկին թագակիր Աստվածամոր պատկերաքանդակը: Աստվածամոր մի գեղեցիկ քանդակ (նվ. 30ա) էլ գտնվում է մուտքից քիչ հարավ, որը ըստ Չ. Ագուլեցու վկայության. 1617—1675 թթ. ս. Քրիստոսափորի վերակառուցման ժամանակ ինքն է քանդակել տվել¹⁸: Հյուսիսային մուտքի կամարի տակ, քառանկյունի շրջանակի

¹⁴ Չ. Ագուլեցի, նշվ. աշխ., էջ 147:

¹⁵ Չ. Ագուլեցի, նշվ. աշխ., էջ 95:

¹⁶ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, 1-ին մաս, Եր., 1955, էջ 605:

¹⁷ Վ. Ալիշան, Սիսական, էջ 329, 331:

¹⁸ Չ. Ագուլեցի, նշվ. աշխ., էջ 95:

մեջ առնված է վարդաբանդակ խաչ, իսկ հարավային մուտքի բարավորի վերե-
վի տարածությունը վարդարված է քառանկյուն և ապա շրջանագծի մեջ առնված
խաչի քանդակով: Եկեղեցու հարավային, հյուսիսային և արևմտյան ճակատնե-
րում ագուցված են XVII դ. 25 արձանագիր խաչքարեր ու քարեր և մեկ բարձ-
րաքանդակ:

Եկեղեցու հարավային կողմում 1867 թ. կառուցված Ագուխի Օրիորդաց
դպրոցի շենքից այժմ աննշան հետքեր են մնում միայն: Այստեղ՝ եկեղեցու հա-
րավային մուտքի մոտ եղած XVIII—XIX դդ. մի քանի տապանաքարեր այժմ
տեղահան են արվել: Հուշարձանի արևմտյան ճակատի առջև, նրա հյուսիսարև-
ելյան անկյունում գտնվում է սրբատաշ քարով, կանարակապ ու ավազանով
հորդահոս աղբյուրը:

Ս. Քրիստափոր եկեղեցու ներքին տարածքը 1680-ական թվականներին
որմանակարել է Նաղաշ Հովնաթանը: Այժմյան վիճակով անվնաս են մնացել
գմբեթի, մույթերի կանարաղեղների և ավազ խորանի որոշ որմանակարները,
որոնք նման են Ս. Թովմա վանքի տաճարի որմանակարներին: Այստեղ բազմե-
րանգ բուսական մոտիվների թվում կան նաև մի շարք երկրաչափական վարդեր:
Ասանձնահատուկ ուշադրության է արժանի հատկապես գմբեթի և թմբուկի որմ-
նանկարների կոմպոզիցիաները (նկ. 33բ, 34): Գմբեթի կենտրոնում, բազմե-
րանգ ծաղիկների նուրբ հյուսվածքից կազմված կանոնավոր ութանկյուն վար-
դանախշերից ղեղնատակեզույն ֆոնի վրա սկիզբ են առնում ութ ծառածև և հա-
մանման որմնանկարներ, որոնք դիտողի հայացքը ակամա տանում են դեպի
գմբեթի կենտրոնը: Հետագայում այս կոմպոզիցիան են հիմք ընդունել Նաղաշի
որդիները՝ Հարություն ու Հակոբ Հովնաթանյանները, երբ 1740 թ. որմնանկա-
րում էին Երևշակ գավառի նշանավոր հուշարձաններից մեկը՝ Աբրահունիսի
ս. Կարապետ վանքը: Ս. Քրիստափորի գմբեթի որմնանկարի արվեստը հիշեց-
նում է նաև Գողթնի հարևան Մաղարդայի կամ Շամբի հոջակավոր ս. Ստեփա-
նոս վանքի (այժմ՝ Իրանում, Արաքսի ափին) մայր տաճարի գմբեթի որմնա-
նկարին¹⁹: Նման վրագահեռները հավաստում են, որ Շամբի ս. Ստեփանոս վան-
քի մայր տաճարի որմնանկարները ևս կատարել են Հովնաթանյան տոհմի նկա-
րիչները:

Ս. Քրիստափոր եկեղեցու որմնանկարների թվում պահպանվել են նաև
Նաղաշի դիմանկարչական աշխատանքներից: Դրանք գմբեթի որմնանկարի և
թմբուկի որմնանկարի միջև տեղադրված թևատարած հրեշտակների և պտու-
մական անձանց պատկերներն են: Պատմական անձերից այստեղ պատկերված
են Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը, Գրիգոր Լուսավորիչը և Ներսես կա-

¹⁹ Դարաշափի ս. Ստեփանոս վանքի եկեղեցու որմնանկարները, տե՛ս Լ. Մխիթարյան, Իրանի հավական վանքերը, Թեհրան, 1971, էջ 123, 124:

թղիկուսը: Ձգեստավորված, գավազաններն ու ավետարանները ձեռքերին
բռնած այս պատմական գործիչները գմբեթի չորս անկյուններից իրենց հեզա-
համբույր ու իմաստալից հայացքները հառում են դեպի վեր նայող ամեն մի
դիտողի:

Ս. Քրիստափոր եկեղեցու այժմյան սպահպանված շինությունը կառուցվել է
XVII դ. երկրորդ կեսին, որի վերաբերյալ պահպանվել է ինչպես Չ. Ագուցեցու,
այնպես էլ եկեղեցու որմերում առկա վիմագրերի տեղեկությունները: Չ. Ագու-
լեցին ս. Քրիստափորի վերակառուցման առաջին ունի հավաստի ու սպառիչ,
մանրամասն տեղեկություններ: Ըստ որի՝ 1670 թ. դեկտեմբերի 15-ին ս. Քրիս-
տափոր եկեղեցին. «ինքնին փլավ, վերայ Գ խորանն քարփիչով ին շինել, այն
փայտով ին շինել: Չերայ այս եկեղեցին Թաթևոս առաքալն էր շինած. եկավ
մինչև ի թվին ՌձԹ (1630) վերստին այնպես ին շինել... Այսպես շինած եկաւ,
մինչի թվին ՌձԹԹ (1670) ուսն փլաւ... Սոցա յետնայ Վերին թաղի խօջա
Գյուլնապարն, Քիչիբեկն, Մալխանն վերակացու եղէն, ժողովորդան փողով շինե-
ցին, մինչև էհատ այսմ ամի: Թվին ՌձԻ (1671) ըսկիսքն արարին ին յեկեղեցին
վեր կալան, իմն գձեցին քարով, կրով, Քրդատանայ (Վասպուրականից—Ա. Ա.)
Լ (30) ուստայ եկին, տաշած քարով շինեցին, մինչի նոյեմբեր ամսին հասաւ
դռների գլուխն... Թվին ՌձԹԻԲ (1673) սարտի Ի (20) ուսն այլվի Քրդատա-
նայնուն ուստեքն եկին. այսմ ամի Խ (40) ուստայ եկին, այլվի տաշած քարով
հասուցրին մինչի փայի թաղ... Թվին ՌձԻԲ (1673) եկեղեցու ավաք խորանն
մուրտի ԻԹ (19) աւրինեցին, որ պատարագ անէւ: Միայն Բ խորան էր ծածկ-
ված այս ամի. այս է: Թվին ՌձԻԳ (1674) մայիսի ԻԵ (25) ուսն այլվի վերոյ
Քրտուստանուցն ԺԸ (18) ուստայ եկօ, ասպարեքն կապեց, կիսատ բաներն շի-
նեց, էլ քարայքան չմնաց: Թվին ՌձԻԴ (1675) ապրիլի մեկին այլվի Քրդատա-
նայ նույն ուստեքն ԺԷ (17) ուստայ եկաւ, միջին Դ կանարն քարով տաշած
կտպեց, կիսատ քարեքան, թէ սեղան, ամեն շինեցին: Դարցեայ, տեղիս ուս-
տեքն, Բ ջուղեցի ուստայ, մեկ անունն Ովանէս, մինին՝ Խումովելի, տքայ
երած քարփիչով գլուխն փոշիշն արին: Մնաց կաթողիկէն դարձեալ Քրդատա-
նայ ուստեքն: Մեծ ուստէն էր ի գեղէն Մոկսու: Ահա կատարեցաւ»²⁰:

Ինչպես պարզվում է Չ. Ագուցեցու այս մանրամասն նկարագրությունից,
ս. Քրիստափորը վերակառուցվել է 1671—1675 թթ., որի վրա աշխատել են
Վասպուրականից հրավիրված, ինչպես նաև ագուլիսցի ու ջուղեցի վարպետ-
ները, որոնց աշխատանքները ղեկավարել է Մոկսու «մեծ ուստէն»՝ ճարտարա-
պետը: 1671 թ. ս. Թովմա վանքում գրչագրված մի ժողովածուի հիշատակարա-
նի տեղեկություններով ևս 1671 թ. «նորոգման սկիզբն եղև եկեղեցույն...»²¹:

²⁰ Չ. Ագուլեցի, նշվ. աշխ., էջ 95—97:

²¹ Մ. Սմբատյան, Նկարագիր սուրբ Կարապետի վանքի Երևշակու և շրջակայից նորա,
Տիֆլիս, 1904, էջ 203:

Չ. Ազուլեցու հաղորդած մեկ այլ վկայությունից տեղեկանում ենք, որ ս. Քրիստափորի 1630 թ. վերանորոգման աշխատանքները կատարել է ազուլեցի «Ղոզալ ուսումն»։ 1670 թ. Ղոզալի մահվան առթիվ Չ. Ազուլեցին իր օրագրում նշել է, որ Ղոզալը. «սարքարութին արաւ, որ Վերին թաղի եկեղեցին շինեց: Շատ աշխատանք արաւ»²²:


Ս. ՇՄԱՎՈՆ ԵԿԵՂԵՑԻ

(նկ. 36, 37)

Ազուլիսի այս մեծակառուց և գեղեցկատես եկեղեցին կառուցված է ս. Քրիստափորից մոտ 500 մ հարավ-արևմուտք, գետակի աջ ափին գտնվող բարձրադիրք հարթ վայրում և շրջապատված է բնակելի բազմաթիվ շինություններով: Ցավոք, այժմ կործանման եզրին հասած այդ հուշարձանից կանգուն են միայն եկեղեցու ավագ խորանի մի մասն ու նրա առջևի երկու մույթերը (նկ. 37):

Քառասույթ գմբեթակիր բազիլիկայի հորինվածքով (գծ. 3) կառուցված ս. Շմավոնը կանգուն հուշարձան (նկ. 36) էր մինչև 1930-ական թվականները: Մեծակառուց այս եկեղեցին, բառ Միսոկի նկարագրության²³ ունեցել է երեք մուտք, որոնց առջև եղել են XVII—XVIII դդ. մոտ 20 փրնագիր տապանաքարեր: Եկեղեցու ինտերյերում կանարները պարզարված են եղել բուսական մոտիվներով արված որմնանկարներով, իսկ գմբեթի թմբուկի վրա նկարված են եղել թևատարած չորս հրեշտակների պատկերները: Հուշարձանի բարձրությունը ներքուստ հավասար է եղել 8 մ: Սույնչափ բարձրություն է ունեցել նաև 12 պատուհաններով գմբեթը: Եկեղեցու որմերում ազուլեցված են եղել XVII—XVIII դդ. մի շարք արձանագիր խաչքարեր:

Միջնադարում հիմնադրված այս եկեղեցին ևս Ազուլիսի մյուս հուշարձանների հետ վերանորոգվել է XVII դ.: Ս. Շմավոնը եղել է նաև գրչօջախ, որի ձեռագրերից, ցավոք, քիչ բան է հասել մեզ: Մեր օրերը հասած ձեռագրերից մեկը այստեղ գրչագրվել է 1638 թ., իսկ մեկ ուրիշը. «...կապնեցաւ ար. գիրքս Պաղիսի և Եսայի, ձեռամբ առտանուն Մարգարայ իրիցի, ի գիղաքաղաքն Ազու-



Գծ. 3 Ազուլիսի ս. Շմավոն եկեղեցու հատակագիծը

²² Չ. Ազուլեցի, նշվ. աշխ., էջ 149:

²³ В. М. Сысоев, Нахичеванский край — Нах. АССР (отчет о поездке летом 1927 г.), «Известия Азкомстариса», вын. 4, тетрадь 2, Б., 1929, № 162.

լ (ն)աց ի դռնն ս. Շմառն եկեղեցոյ, ի թվաբերութիւն հայկական տոմարի Բ և 2Թ (1640)...»²⁴:

Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ—ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ


(նկ. 38—42)

Ագուլիսի ճարտարապետական հուշարձանների թվում և նրա միջնադարյան մշակույթում էական տեղ ունի նաև այս եկեղեցին: Այն այժմյան վիճակով կիսակործան է. քանդված է եկեղեցու հյուսիսային որմնի մի մասը, այդ ճակատի միակ մուտքը, ծածկի հյուսիսային հատվածի մի զգալի մասը: Ինտերյերում քարուքանդ են արվել երկհարկանի ավանդատները, ավագ խորանի բեմը, որմնի ու մույթերի տարբեր հատվածները: Եկեղեցու շրջակայքում հիմնահատակ կերպով հողին է հավասարեցվել շինությունների մի մասը, պարիսպը, հյուսիսային կողմից կցված չորս մույթերով գավիթը և այլն:

Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցին կառուցված է Ագուլիսի Ներքին թաղում, գետի աջ կողմում գտնվող մերկ լեռնալանջի ստորոտում՝ հարթ ու բարձրադիր վայրում, որտեղից ուրվագծվում է համարյա ամբողջ Վերին Ագուլիսի համայնապատկերը: Այս եկեղեցին, ինչպես նշում է Չ. Ագուլեցին, համարվել է Ներքին թաղի գլխավոր եկեղեցին²⁵: Մ. Թաղիադյանը սխալմամբ նշել է, որ «Վերնոյ թաղի եկեղեցին է սուրբ Յովհաննէսը, իսկ ներքնոյն՝ Աստվածածինը»²⁶: Այս ոչ ճիշտ տեղեկությունը Մ. Թաղիադյանի մոտ ստացվել է ըստ երևույթին, Մեծ Աստվածածին եկեղեցու տեղադրության պատճառով, որը ս. Հովհաննես-Մկրտիչից իրոք որ բավականին ներքև է գտնվում և Ագուլիսի վաղեմի տարածքի՝ շահաստանի, ներքին մասի եկեղեցին է համարվել: Իսկ այն թաղամասը, ուր գտնվում է ս. Հովհաննես-Մկրտիչը, կոչվել է. «Խձայձոր, որ է Ներքին թաղն...»²⁷:

Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցին կառուցված է արևելք-արևմուտք առանցքով՝ արևելյան մասում ունի ավագ խորան, երկհարկանի փույզ ավանդատներ և ընդարձակ արդթասրահ (գծ. 4): Վերջինիս չորս հաստահեղույս և ութանիստ կտրվածքով մույթերի (1,80 մ) կամարների վրա կանգնեցված է ութ լուսամուտ-

ներով աղյուսաշար գմբեթը: Ինչպես վերևում նշեցինք, այժմ ավերված է նաև եկեղեցու միակ մուտքը: Վերջինիս մասին պատկերացում կարելի է կապմել Ղ. Ալիշանի հրատարակած գերմանացի նկարիչ Քետլների նկարի միջոցով²⁸. Ըստ որի՝ ս. Հովհաննեսի մուտքը ունեցել է քառանկյունի բացվածք, առանց կամարի: Մուտքից վերև՝ շարվածքի երկրորդ շարքի հյուսիսային կողմում տեղադրված է եղել մի համառոտ արձանագիր քար՝ «Թ. ՌՃԽԳ» (1694): Եկեղեցին ունեցել է գեղեցիկ փայտե դուռ՝ Հախումի իշխատակազմի արձանագրութամբ. «բազմադրուագ, մանր մասամբք վայտից, սատափով և փղոսկրի կիտուածեալ, յորում գրուած յամի 1682»²⁹:



Գծ. 4 Ագուլիսի ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու հաստակափոք

Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցին (նկ. 38—42) կառուցված է հիմնականում կիսամշակ ու ճեղքված որձաքարերով, իսկ շինության արևելյան ճակատի արտաքին շարվածքն ու գմբեթը իրականացված է թրծած աղյուսով: Արևելյան ճակատի ձևավոր աղյուսաշարը ունի մի շարք երկրաչափական վարդաձևեր: Ինչ-

²⁴ Հայերեն ձեռագրերի իշխատակարաններ (1621—1640 թթ.), հտ. Բ. կապմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Եր., 1978, էջ 826:

²⁵ Չ. Ագուլեցի, նշվ. աշխ., էջ 63, 65, 130:

²⁶ Մ. Թաղիադյան, նշվ. աշխ., էջ 254:

²⁷ Չ. Ագուլեցի, նշվ. աշխ., էջ 92:

²⁸ Ղ. Ալիշան, Սիսական, էջ 333, նկ. 99:

²⁹ Ղ. Ալիշան, Սիսական, նույն տեղում: Ե. Լալայան, Գողթն, էջ 65:

պես եկեղեցին, այնպես էլ նրա համալիրի շինությունները գտնվել են բարձր պարսպի մեջ, որը հյուսիսից ու հարավից ունեցել է դարպասներ:

Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցին ունի ուշադրության արժանի առանձնահատկություններ: Դա ամենից առաջ վերաբերում է նրա ավագ խորանի կառուցվածքին, որը հաստակագծում ունի հնգանիստ հորինվածք: Ընդ որում խորանի արևելյան որմի հյուսիսային և հարավային անկյունամասերը՝ նիստերը, ներքին հատվածում ունեն շատ թեթև՝ ընդամենը 35 սմ հաստոց նիստեր: Խորանի վեց որմնախորշերը ունեն 85 սմ լայնությամբ բացվածքներ և խոր են: Հյուսիսային և հարավային անկյունամասերում որմնախորշերից վերև, ընդգրծված են երկու որմնապարզերով կամարները, դրանցից վերև տեղադրված են փորդանակները:

Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցին հետաքրքիր է նաև իր երկհարկանի ավանդատներով, որոնց առաջին հարկերը հաստակագծում քառակուսի են և ունեն վեցական խոր ու քառակուսի բացվածքներով որմնախորշեր: Եկեղեցու երկրորդ հարկի ավանդատները, որոնք ծառայել են որպես, խորաններ, հակառակ առաջին հարկերի ավանդատների, արևելյան մասում ունեն կիսաշրջանաձև հորինվածքներ: Խորանները իրենց որմերում ունեն յոթական սլաքաձև պսակներով ավարտվող բարձր որմնախորշեր: Դրանք լուսավորվում են արևելյան որմում գտնվող բավականին լայն և բարձր (55×90 սմ) պատուհաններով, որոնցից ամիջապես 30—35 սմ վերև՝ լրացուցիչ լուսավորության համար բացված են մեկական շրջանաձև լուսամուտներ: Երկրորդ հարկի խորանները արևմտյան մասերում ունեն ցածրադիր (60 սմ) պատեր, իսկ ամբողջ ճակատները բաց են և օրգանապես կապված են աղոթասրահի հետ:

Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու այժմյան շինությունում պարզորոշ նկատվում են մի քանի վերանորոգումների հետքեր, որոնցից երկուսի մասին տեղեկություններ են պահպանվել Չ. Ազուլեցու մոտ: Ըստ Ազուլեցու այս եկեղեցին 1612 թ. վերանորոգել է ազուլիսիցի հայտնի աղբյուրագործ-վարպետ Մեթյան Մահուեպի Մեթրուլը: Նա «այս թվիս (1612 թ.— Ա. Ա.) Խճայճորա սուրբ Ովանես եկեղեցին մարամաթի շինեց»³⁰: Այնուհետև հետագա վերանորոգման մասին եկեղեցու գմբեթի շրջանակի վրա (մերսից) դեռևս պահպանվում է XVIII դ. սև ներկով գրված եկեղեցու XVII դարի երկրորդ կեսում վերանորոգման արձանագրությունը: Վերջինիս հավաստի տվյալներով եկեղեցին վերանորոգվել է 1663 թ.: 1686 թ. այն զաջվել է, իսկ նրա աղյուսաշար գմբեթը կառուցվել է 1703 թ.: Այս արձանագրության տեղեկությունները լրացվում և հաստատվում են Չ. Ազուլեցու ճշգրտորեն արձանագրված տվյալներով: Ըստ որի 1663 թ.

³⁰ Չ. Ազուլեցի, նշվ. աշխ., էջ 141:

«Ազուլաց Խճայճորու մահի սուրբ Ովանես անվան եկեղեցին ըսկիսպն արարին վեր առնելու»³¹: Այնուհետև 1664 թ. «Մայիսի լս (31) Ազուլիս Ներքին թաղի սուրբ Ովանես եկեղեցին այսօր ձեռք տվեցին, վեր կալան, որ շինեն: Յուլիսի է (5) ուսն հիսն արինեցին, ըսկիսպ արարին շինելոյ թագաւորի ըտաղանով, Միրզա Իբրահիմ խօսքով, վերայ Ազուլիս նորայ վաֆթումն էր»³²: Հետո՝ 1665 թ. «Նոյեմբերի է (5) ուսն Ազուլիս որ Ներքին թաղի սուրբ Ովանես անվան եկեղեցին ավարտեցին, այսօր արինեցին... Թվին ՌՃԼԵ (1686) մայիսի ի (20) ուսն ըսկիսքն արին այս եկեղեցիս զաջելու: Գաջեցին, ծաղկեցին, հոկտեմբերի լս (31) ուսն հրաշալի օրինեցին»³³:

Եկեղեցու XVII դ. վերակառուցման հետ միաժամանակ. «պարիսպն քաշեցին, թե խուց, թե սեղանատուն շինեցին, սալա պրծաւ»³⁴: Եկեղեցու արևելյան ճակատի պատի տակ, նրա ընդլայնական չափով կառուցված է եկեղեցու սեղանատունը, որի ծածկը հավասար է եկեղեցու հիմնաշարին: Այս սեղանատունը միանավ-միաշախիճ հորինվածքով շինություն է, որի ուղղաձիգ որմերի վերին մասերից սկսվում է թաղը: Այժմյան վիճակով ավերած է այդ շինության արևելյան որմի զգալի մասը, մուտքերի հատվածները, ծածկի մեջտեղի մասերը: Սեղանատան մուտքերը տեղադրված են եղել արևելյան ճակատում: Այդ ճակատում են եղել նաև լուսամուտները: Սեղանատունը ներսից ունի մոտ 3 մ բարձրություն և ավաղված է, ընդերկայնական արևմտյան որմում ունի 9 քառակուսի բացվածքներով բավականին խոր որմնախորշեր:

Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու սեղանատան հյուսիսային ճակատին՝ արևելք-արևմուտք առանցքով, կցված է թաղակապ խոհանոցը: Վերջինիս կից է թաղածածկ հորինվածքով, ավազանով ու 2,90×4 մ չափի և 1,30 մ խորությամբ ջրամբարով եկեղեցու աղբյուրը:

Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու պարիսպներից ներս, նրա սեղանատան առջև և եկեղեցու հյուսիսային կողմում՝ գավթի առջև, եղել է եկեղեցու գերեզմանատունը: Վերջինս 1663 թ. եկեղեցու վերանորոգման ժամանակ քանդվել է. «Բերին, գերեզմանատունն էլ վարդավար արարին. ուն նշանաւոր մեռել կար, պայն թողին, ապայ անտեր, աննշան մեռելն քարն վեր կալան, ուն դրին եկեղեցու պատն, ուն ձգեցին եկեղեցու դռներն: Ապայ այսուդեռ սահմանեցին, թե ինչ մեռել որ լինի, տանեն եկեղեցոյ յանդէպ յարաւային կողմն տափարակ տեղ մի, անվանեցին տեղի անունն Բէկ-Օղլի: Այս Բէկ-Օղլի առաջին դրած մեռելն երեցիտիս Անդրնի կնիկն է թաղած: Այս հանգիստս հիսն այս է, որ 1112 (1663) ուսն»³⁵:

³¹ Չ. Ազուլեցի, նշվ. աշխ., էջ 64, 130:

³² Չ. Ազուլեցի, նշվ. աշխ., էջ 63, 130:

³³ Չ. Ազուլեցի, նշվ. աշխ., էջ 65, 130:

³⁴ Չ. Ազուլեցի, նշվ. աշխ., էջ 130:


³⁵ Չ. Ազուլեցի, նշվ. աշխ., էջ 130:

Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու գերեզմանատունը այժմ վեր է ածվել այ- գու: Գերեզմանատան XVIII—XIX դդ. մի քանի տապանաքարեր հավաքված են այգու մի անկյունում:

Ս. ՀԱԿՈՐ—ՀԱՅՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻ

(նկ. 43ա, 44)

Այս եկեղեցին, որը գտնվում է «Փոքր բլուր» անվանվող հարթ տեղում, կա- ուցված է քառանկյունի պարսպի մեջ: Այն փոքր չափի գմբեթակիր սրահավոր սյանավ հուշարձան է, որը կառուցված է կիսամշակ որձաքարով ու թրձած աղյուսով (նկ. 43ա, 44): Ս. Հակոբ-Հայրապետ եկեղեցին (գծ. 5) բաղկացած է աղոթասրահից և արևելյան մասում ուղղանկյուն խորանից, ունի երկու մուտք՝ արևմտյան և հարավային ճակատներում: Շինության ինչպես ներքինը, այնպես էլ արտաքինը վուսպ է: Ծածկի համարյա մեջտեղում՝ աղոթասրահի երկու կույզ որմնամույթերի միջև ընկած շրջանաձև գմբեթատակի վրա կանգնեցված է բարձր ու լայն պատուհաններով բազմանիստ ու աղյուսաշար գմբեթը: Եկեղեցու ինտերյերը ծեփված է և ունեցել է որմնանկարներ: Աղոթասրահի որմնամույթերը բավականին վանգվածային են և որմերից դուրս են գալիս 1 մ չափով:



Գծ. 5. Ագուլիսի ս. Հակոբ-Հայրապետ եկեղեցու հասակագիծը

Ս. Հակոբ-Հայրապետի ուղղանկյուն խորանը երկհարկանի է, որի առաջին հարկը ևս նույն չափի (2,25×5,55 մ) ուղղանկյուն ավանդատուն է: Վերջինս

հյուսիսային և հարավային որմերում ունի մեկական քառակուսի բացվածքնե- րով որմնախորշեր: Խորանը լուսավորված է արևելյան որմում գտնվող լուսա- մուտով:

Եկեղեցու գմբեթի վրայի (ներսի կողմում) սև ներկով ու խոշոր տառերով արձանագրությունը վկայում է, որ այն վերաշինվել է 1901 թ., վեց ամսվա ըն- թացքում: Ճարտարապետական հետաքրքիր լուծումներ ունեցող ս. Հակոբ-Հայ- րապետը Ագուլիսի ուշագրավ հուշարձաններից մեկն է:

ՄԵԾ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԿԱՄ


Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՄԵԾ ԱՆԱՊԱՏ

(նկ. 48, 49)

Ագուլիսի հուշարձանների թվում կարևոր տեղ ունեցող այս մեծակառույց հանույիրը գտնվում է Վերին Ագուլիսից մոտ 1,5 կմ արևելք գտնվող արևա- խասձ ու մերկ լեռնալանջի հարմարավետ տեղում: Այստեղից հասակորեն ուր- վագծվում է Ստորին կամ Դաշտ Ագուլիսի, արաքսամերձ գյուղերի, դաշտերի ու լեռների գրավիչ համայնապատկերը: Այս համալիրին «Մեծ» մակդիրը տրված է քաղաքի մեջ կառուցված մյուս ս. Աստվածածին եկեղեցուց տարբերելու նամար:

Մեծ Աստվածածին եկեղեցին (գծ. 6), որն արդարև ունի մեծ համալիր, բաղկացած է միանավ եկեղեցուց, երկու մույթերով երկհարկ վանգակատնից, հյուրատնից և 20—22 եկեղեցապատկան այլ շինություններից ու խցերից, որոնք առնված են բարձր ու ամուր պարսպի մեջ: Այս ուրվագծով հեռվից այն ամբողջի տպավորություն է թողնում: Այժմ այդ համալիրի շինություններն ու եկեղեցին, պարիսպը, վանգակատունը, աղբյուրը ավերակների ու փլատակների են վերածվել: Համալիրի ու նրա մերձակայքի ուսումնասիրությունը վկայում է, որ այդտեղ պաշտամունքային շինություն գոյություն է ունեցել դեռևս հեթանո- սական շրջանում: Ագուլիսցիների ավանդակրույցը սխուրտ է, որ այդ եկեղեցու տեղում եղել է կռատուն, որը 1 դարի կեսերին Թադևոս առաքյալը կործանել է և հիմնադրել ս. Աստվածածնի նախնական շինությունը: Հետագա դարերում, ընդհուպ մինչև XIX դ. վերջերը, ըստ ականատես ագուլիսցիների, այս եկեղեցու և նրա շինությունների վերանորոգումների ժամանակ հաճախակի գտնվել են կավից և մետաղից պատրաստված կուռքերի արձաններ: Ե. Լալայանը այդ մասին հանգամանակից տեղեկություն է մեջ բերել ագուլիսցի տեր Հակոբի օրագիր-տետրից: Տեր Հակոբի վկայությամբ. «1874 թուն, երբ Շուշեցի Շխե- անց Կարապետ աղէն խոլերայի պատճառով Թավրիսից փախչելով եկած էր

Ազուլեաց Դաշտ, Դաշտից ուխտ գնաց Ասովածածին: Ասովածածնայ տորգու-
թեան համար հարիւր ոսկի ընծայելով պատուիրեց Սարգիս Սարովանբեր-
պին, որ իր հսկողութիւնով տորգել տայ: Այն ժամանակ Աստուածածնայ եկե-
ղեցին մեջտեղից պատով կտրած երկուսի էր բաժանուած. պատի մեջտեղից
դուռ ուներ՝ դրսի մասից ներսի մասը մտնելու. դրսի մասում, դրան զիջին կա-
վից շինուած սեղան ուներ, դրան աջ ու ձախ կողմից աստիճաններ միացնելու



Գծ. 6 Ազուլիսի Մեծ Ասովածածին վանքի եկեղեցու հասակագծերը


համար միջի պատը քանդած ժամանակ կավից շինուած սեղանի միջից խեցեայ
և չուզունեայ կուռքեր է դուրս գալիս: Նա և իր կնքավոր Օհաննէս Մակարո-
վը... մոլեռանդութիւնով խփում են քարերին՝ ջարդ ու փշուր անում...»³⁶:

ՍՏՈՐԻՆ ԿԱՄ ԳԱՇՏ ԱԳՈՒՎԻՍԻ
Ս. ՆՇԱՆ ԿԱՄ «ԱՄԱՐԱԻՆ» ԵԿԵՂԵՑԻ
(սկ. 54, 57ա)

Ստորին կամ Դաշտ Ազուլիսի հրահայտին թաղամասում, վաղեմի բնակելի
տների ավերակների շրջապատում դեռևս կանգուն այս հուշարձանը կառուցված
է եռանակ բալխիկայի հորինվածքով (գծ. 7): Վերջինիս հարավային որմին
անմիջապես կից կառուցված է Դաշտի մյուս եկեղեցին՝ ս. Երրորդությունը:
«Ամարաին» եռանակ բալխիկայի հորինվածքը կազմված է յոթանիստ ավագ
խորանից և ընդարձակ աղոթասրահից: Ավագ խորանը իր երկու կողմերում

³⁶ Ե. Լալայան, Գողթն, էջ 66:

ունի ևս մեկական քառանիստ խորաններ, որոնց արևմտյան ճակատ-
ները ավագ խորանի նման սմբողջովին բաց են և անմիջական կապի մեջ
են գտնվում աղոթասրահի հետ: Եկեղեցու աղոթասրահը երեք զույգ ամուր
մույթերով բաժանված է մեկ մեծ և երկու փոքր նավերի, որոնց կամարներն էլ
կլուսն են շինության ժամկը: Այժմյան տեսքով այս եկեղեցու աղոթասրահը հյու-
սիսից, հարավից և արևմուտքից շինության բարձրության կեսից ավելի մասով
ներկայանում է որպես բաց կամարաշար:



Գծ. 7 Ազուլիսի ս. Երրորդություն կամ ս. Ստեփանոս և ս. Նշան կամ «Ամարաին»
եկեղեցիների հասակագծերը

«Ամարաին» եկեղեցու հիմնաշարի, նրա ճարտարապետական հորինվածքի
ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այս հուշարձանի նախ-

կին շինությունը հիմնադրված է եղել ստավորապես IX դարում: Հետագայում XVII դ. վերակառուցվելով, որի ժամանակ օգտագործված է նաև աղյուս, վեր է ածվել բաց դահլիճ-եկեղեցու, ուր ծիսակատարությունները կատարել են անօանը: Այստեղից էլ եկեղեցին ստացել է «Ամարաին» մականունը: Մինչև 1910-ական թվականները եկեղեցու ինտերյերում նկատելի էին «կուպրե կարասը, դժոխքը, աղբայությունը» և այլ կոմպոզիցիոն որմնանկարների^{36*} հետքերը:

1690 թ. Ստորին Ագուլիսի եկեղեցիներում գրչագրված մի Հայսմավուրքի հիշատակարանը պարզաբանում է, որ «Ամարաին» մականունով եռանավ բուլկիկայի անունը ս. Նշան է, իսկ ս. Երրորդություն գմբեթավոր եկեղեցունը՝ ս. Ստեփանոս: Այս մասին Հայսմավուրքի (գտնվում է Ֆրեզյոյի ս. Երրորդություն Մայր եկեղեցում, ԱՄՆ) հիշատակարանը վկայում է. «Ես նուստ մահուսի Ապրիայս ստացա վԱյսմավուրս... և ետու ի դուռն սուրբ եկեղեցեացն, որ վերաձայնին Երեք խորանի և միաուն՝ Սուրբ Նշան և Սուրբ Մինաս, որ կան հովանի և պահապան գեղաքաղաքիս Դաշտ կոչեցեալ... յետ ժամանակայ, եթէ Սուրբ Մինաս եկեղեցին շինեն յաշտումս՝ Աստուծոյ, եթէ կամին անդ տանին առանց տրտնջման, բայց այս Բ (2) եկեղեացս ի վատ...»³⁷: Այնուհետև այդ սույն հիշատակարանը վկայում է, որ ձեռագիրը. «գրեցա և աւարտեցա... ի թուականիս Հայոց Ռձ երեան և ինն (1690)... ի գեօղն, որ կոչի Ագուլեաց Դաշտ, ընդ հովանեալ Սուրբ Ստեփանոսի եկեղեցոյս, որ վերաձայնի Երեք խորանի, այլ Սուրբ Նշան եկեղեցոյս... ձեռամբ Եփրեմ անիմաստ քահանայի...»³⁸:

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԿԱՍ
Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ

(նկ. 54, 58)

Ս. Ստեփանոս քառանկյ զմբեթակիր եկեղեցին (նկ. 59), որը հայտնի է սաև Երեք խորանի կամ ս. Երրորդություն մականուններով, կառուցված է մշակված որձաքարերով ու աղյուսով: Հուշարձանի հորինվածքը (զժ. 7) բաղկացած է հնգանիստ ավագ խորանից, զույգ ավանդատներից ու աղոթասրահից: Ընկալության հարթ ծածկում կանգնեցված է գեղեցիկ ու աղյուսաշեն, ութանիստ

^{36*} «Մշակ», 1876, № 15:

³⁷ «Բանբեր Մատենադարանի», № 12, էջ 263:

³⁸ Նույն տեղում, էջ 265:

թմբուկով գմբեթը: Աղոթասրահի մույթերը կտրվածքում համարյա կոր են: Ունի երկու մուտք՝ արևմտյան ու հարավային ճակատներում:

Ս. Ստեփանոս եկեղեցու ինտերյերը ժամանակին պարզարված է եղել գեղեցիկ որմնանկարներով, որոնք այժմ քայքայված ու քերված են: Եկեղեցու արևմտյան ճակատին կցված է գավիթ-սրահը, որը ըստ արձանագրությունների կառուցվել է XVII դ.¹ եկեղեցու վերանորոգման ժամանակ: Ըստ հորինվածքի այն չորս մույթերով կամարակապ սրահ է, որի մույթերի կամարները նստած են եկեղեցու արևմտյան որմի որմնամույթերի վրա (այժմ վերաշարվել են նրա բաց ճակատները): Ս. Ստեփանոս և «Ամարաին» եկեղեցիներն ու դրանց օժանդակ շինությունները գտնվում են ընդարձակ ու բարձր պարսպի մեջ: Ինչպես շինությունները, այնպես էլ պարսպի մեծ մասը այժմ վեր են ածվել փշատակների: Պարսպից դուրս, նրանից մոտ 100—150 մ հարավ-արևելք, գտնվում է եկեղեցաբաբական աղբյուրը, որը մինչև օրս անխափան գործում է:

Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑԻ

Այս հուշարձանը գտնվում է Դաշտ Ագուլիսի հարավարևելյան կողմում: Ունի միանավ հորինվածք, որի միակ մուտքը գտնվում է արևմտյան ճակատում: Ս. Միանսը աղբյուրներում հիշատակվում է XVII դ. ձեռագրերում: Այժմյան շինությունը, որը մատուռի ապավորություն է թողնում, ամենայն հավանականությամբ նախկին եկեղեցու ավերակների վրա կառուցվել է XVIII—XIX դդ.:

Ս. Միանսը, կից գավիթը և հարակից այլ շինությունները կառուցված են գլխամշակ քարերով և գտնվել են պարսպի մեջ: Ինչպես եկեղեցին, այնպես էլ նրա գավիթն ու պարսպը այժմ ավերակների են վերածվել: Եկեղեցու որսերում ագուցված, ինչպես նաև գավթում ու հուշարձանի բակում եղած XVIII—XVIII դդ. վիճագրերն ու խաչքարերը այժմ կամ տեղահան են արված, կամ էլ կտրատված ու եղծված են:

Ս. Միանսի մուտքի բարավորի արձանագրության տվյալներից ելնելով Հ. Ոսկյանը այս հուշարձանը համարել է նաև որպես կույսերի անապատ³⁹:

³⁹ Հ. Ոսկյան, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, Վրինա, 1942, էջ 734:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐ * Ա Ղ Բ Յ Ո Ւ Ր Ն Ե Ր

Ինչպես նախորդ գլուխներում նշվեց, Ազուլիսը հիմնված է ձորի մեջ: Այստեղ՝ Ազուլիս գետի երկու ափերին, փոքրիկ հարթություններից բացի քաղաքի շինությունները աստիճանաձև տարածվել են նաև արևահայաց լեռնալանջերին: Ամֆիթատրոնաձև այս համայնապատկերը, որն աչքի է ընկնում բնորոշ ուրվագծով, գեղատեսիլ են դարձնում տարբեր թաղամասերում գերիշխող տեսքով վեր խոյացող եկեղեցիներն ու ժամանակին քաղաքը պարզաբարդ ապրանքները, դարավոր սուխներն ու հաստաբուն ընկույթնիներն ու հսկա թեխնիները, Ազուլիսի կրոնայգի-պուրակը: Այս ամենի շնորհիվ Ազուլիսն ունի պատմամշակութային հետաքրքիր հորինվածք:

Ցավոք, դարերի ընթացքում և հատկապես 1920-ական թվականներից սկսած, մի քանի տամուսյակների ընթացքում նոր բնակելի շինությունների կոռուցման և վանական այլ հանգամանքներով արդեն ավերվել ու բլկտվել են Ազուլիսի շինությունների մեծ մասը: Հատկապես խիստ քայքայվել են Վերին Ազուլիսի Վերին Գետ, Նուրիջանենց Մահլա, Խձայձոր, Չիզ փող, Դաշտ Ազուլիսի Լեռնալանջի, հյուսիսարևմտյան և այլ թաղամասերը, լեռնալանջերին ու նրանց փեշերին, քաղաքի առանցքային և կենտրոնական մասերում, երազոտիներում կառուցված տներն ու պարիսպները և այլ կառույցները: Այսօրվա դրությամբ Ազուլիսի համեմատաբար անաղարտ պահպանված հատվածը Վանքի և Շոռտակ թաղերն են:

Ազուլիսի ժողովրդական ճարտարապետության հուշարձանները՝ միաժարկ ու երկհարկ, եռահարկ, ձաղաշար ու պունաշար պատշգամբներով ու նախապահներով տները կառուցվել են տեղական բնակլիմայական պայմաններին և շոտանյութերի առկայությանը համապատասխան: Տների շքամուտքերի ու դարպասների, լուսամուտների բացվածքները, արտոջամբները իրենց առատությամբ ու բազմապատկան շեշտված են կամարակապ ծածկերով ու գեղաբանդակ ձևավորումներով, դեկորատիվ մանրամասներով, որոնք քաղաքին հաղորդում են ուրույն կոլորիտ, բարեստություն և ինքնատիպ դարձնում այն:

Ազուլիսի բնակելի տներն իրենց ոճով ու ճարտարապետությամբ բաժանվում են երեք հիմնական տիպերի: Առաջինը հին հայկական գլխատան հորինվածքով տներն են: Ազուլիսի տների մեջ նկատելի են գլխատան վարգացման նորինական և միջին շրջաններին վերաբերող ձևեր: Դրանք նախ չորս, ապա երկու, իսկ ուշ շրջանում մեկ պուներով կառուցված տներն են:

Ազուլիսի տների մի փոքր խումբը ունի նաև պարսկական ճարտարապետությանը բնորոշ տարրեր, որոնք սակայն աննշան են և XVIII—XIX դդ. արդեն կորցրել էին իրենց հետքերը: Քաղաքի տների մի սովոր հատվածը կառուցվել է եվրոպական ոճով: Այդ տիպին են պատկանում Ազուլիսի XVII—XIX դդ. կառուցված տների մեծ մասը: Անդհանրապես պետք է նկատել, որ Ազուլիսում ժողովրդական տների ճարտարապետությունն աչքի է ընկնում գեղարվեստական լուծումներով, ճարտարապետական ակնահաճո ձևերի օգտագործմամբ ու արտահայտչականությամբ:

Ազուլիս այցելած ճանապարհորդներն ու ազգագիրները գովասանքով են արտահայտվել ինչպես նրա քաղաքային ու մշակութային կյանքի, այնպես էլ ժողովրդական ճարտարապետության հուշարձանների՝ եվրոպական քաղաքների տեսքով կառուցված Ազուլիսի հարթ ու լանջավոր ծածկերով, բազմասենյակ տների մասին: Օրինակ, անգլիացի տիկին Շանթըրը Ազուլիսի ժողովրդական տների մասին իրավացիորեն նշել է, որ քաղաքի. «...տուններն ընդհանրապես մեծ շէնքեր են, յաջ ու ի ձախ դարձիվ ավելի ընդարձակուած. ճակատին երկպնությունը՝ հարկածածով ձեմելիք մը կայ՝ այլևայլ վերնագավիթ մտիվք: Գըլխավոր շէնքին և երկկողման թեկոց միջավայրն՝ պարտեզ մի՝ խնամոք և գեղեցիկ ձաշակով պարդարուած, մեծ ավազանավ մը...»¹:


Նմանատիպ բազմաթիվ շինություններ են եղել ոչ միայն Վերին, այլ նաև Դաշտ Ազուլիսում: Մ. Թաղիադյանը Ստորին կամ Դաշտ Ազուլիսի տները համեմատելով Վերին Ազուլիսի տների հետ հիացմունքով գրել է. «Շինուածք տանց նորա վայելչագոյնք ևս, և դրօշուածք և քանդակք գերի վերոյ քան վԱզուլեաց»²:

Քաղաքը ձորի մեջ հիմնված լինելու, ինչպես նաև սակավ հարթ տարածություն ունենալու և այլ բնական պայմանների պատճառով նրա կառուցվածքային, հատակագծային միջնան դարձրել են անկանոն: Նրա գլխավոր և երկրորդական փողոցները իրար հատելով դուրս են գալիս դեպի հրապարակներն ու հուշարձանները: Ինչպես գլխավոր փողոցներն ու հրապարակներն, այնպես էլ երկրորդական փողոցների մի մասը գետաքարերով սալարկված ու տոփանված են: Քաղաքի տների մի մասը թեքադիր ու ժայռեղեն լանջերի վրա կառու-

¹ «Տավամբլեպ», հո. ՇԲ, Վենետիկ, 1894, էջ 534—535:

² Մ. Թաղիադյան, Ճանապարհորդություն ի Հայս, հո. I-ին, Կալկաթա, 1847, էջ 259:


ցած լինելու պատճառով լեռնալանջերին կառուցել են պատուեջ-պատեր, սանդղավանդ (տերրասային) այգիներ, որոնք մի առանձին հնայք են հաղորդել քաղաքի համայնապատկերին և շատ բան են պատմում ագուլիացու հնամենի մշակույթի, բնության նկատմամբ նրա անսահման սիրո մասին: Քաղաքի հողապուրկ պայմաններում դարձյալ ագուլիացիների տների ու ապարանքների, ճարտարապետական հուշարձանների մեծ մասը կառուցվել են ապտո, բարձրադիրք, ճարտարապետական որոշակի մտահղացումներով և ունեցել են բազմաանոյակ հատակագծային սխեմա:



Գճ. 8 Ագուլիս, բնակելի տան հատակագիծ (չափագրությունը՝ Լ. Մամիկոնովի)

Ագուլիսի բնակելի տների և նրա քաղաքաշինության հարցերի մասին համակողմանի պատկերացում կազմելու համար ավելորդ չենք համարում մեջ բերել Չ. Ագուլեցու օրագրի ներքոհիշյալ հատվածը. «Թվին ՌՃԺԹ ապրիլի 11


ուն Ագուլիս Վերին թաղն Խաասենց փողոակեն ես Ագուլեցի Քուրդունց մղղսի Աղամիրի որդի Չաքարես որ այսօր ձեռն արկի, մեր հայրենի տունն վեր կալայ նրն շինեմ. գերայ շատուց շինած էր: Մեկ մեծ ձեռնատուն էր, որ գիր կեր գրած, բլճ տարի էր շինած. մին մեծ սրահ կեր, որ մին ճք տարի այ շինած էր. այս է. մին քանի վերնատուն, ներքնատուն կեր յին շինած... Ես Չաքարիայ իմ շինածս այս է. բ մեծ, մին պտոիկ ներքնատուն մաղապայ, որ գունբալի այ գաջով. բարով թաղ. մեծ մաղապի գլուխն մին մեծ, որ ժք գալ է, երած քարիիջով.



Գճ 9. Ագուլիս, բնակելի տան հատակագիծ (չափագրությունը՝ Լ. Մամիկոնովի)

գաջով, այլվի գունբալով, թաղով շինած: Այս օթախի գլուխն մեծ քոչկ այ, որ է ժք գալ է: Դարցեալ օրթայ մաղապի գլուխն մին քաշ թավան օթախ է, որ

ա. սնդուղ, թէ այլ շորի տեղ, բ դռնէ է, մին մեծ գումբալի օթախումն է, մինն դեպի բարան է: Այս օթախի գոլխն մին բացը թափան օթախ է... Որ է լավ մեծ ու պատիկ թ օթախ... այս տներն որ վերստին շինեցի, թէպէտ փոքր, ապա գրտեմք թէ գրոց, թէ մեծ մամկա, որ տներն բճծ տարի եղև, որ պապէ ի պապ, որդոց որդիք որ մեր ավանդն ժառանգէ»³:



Գծ. 10. Յղևա, Կոմիտասի պապերի՝ Սողոմոնեց ապարանքի հատակագիծը:

Այսպիսով տեսնում ենք, որ Չ. Ազուլեցին 1670 թ. վերաշինելով 250-ամյա (1420 թ. հիմնված) հնություն ունեցած իր հայրենի տունը նկարագրուս է, որ այն բաղկացած է եղել «ձմեռատնից», 102 տարվա հնության սրահից և մի քանի ներքնասաներից ու վերնատներից: Իսկ 1670 թ. այդ տան վերաշինման ժամանակ նա կառուցում է 2 մեծ և մեկ փոքր ներքնատուն, «քոչկ», մեծ ու փոքր և միջին «մաղաղաններ», բաց պատշգամբ և 11 մեծ ու փոքր «օթախներ»: Այդ պիսի բազմասենյակ տան կառուցումից հետո Ազուլեցին, ըստ երևույթին, նկատի ունենալով Ազուլիսի տների համար սովորական բազմասենյակ կառուցվածքը, դժգոհում է, որ իր վերակառուցած տունը փոքր է:

Ազուլիսի ժողովրդական տների գեղարվեստական ձևավորման ու ճարտարապետության արվեստում հարկ է նշել, որ նրանց մեծ մասը որմնակարված

են եղել, շրջապատված այգիներով, բազմապան մեծ ու փոքր ծաղկանոցներով, խողովի վազերով շրջապատված հովանոցներով և ունեցել են բարձր, 3—4 մ հասնող քարե ցանկապատեր: Այդ ամենը ակնհայտորեն խոսում են Ազուլիսի շինարարների տեխնիկական իմացության ու ճարտարապետական ձևերի դեկորատիվ մշակման հմտությունների ու կարողությունների մասին:

Ազուլիսի ժողովրդական ճարտարապետությունը իր բարերար ազդեցություն է ունեցել նաև մերձակա բնակատեղերի՝ Քաղաքիկի, Շոռոթի, Գալի, Տոնայի վրա: Այս տեսակետից համկանշական է Ցղնայում մինչև օրս պահպանվող XIX դ. թվով 18—20 միսահարկ ու երկհարկ բնակելի տները, որոնք աչքի են ընկնում թե՛ իրենց բազմասենյակային հատակագծումներով և թե՛ ճարտարապետական լուծումներով:

Այստեղ՝ Տամբրի թաղամասում, իրար կողքի կիսականգուն 6—7 տների թվում գտնվում է նաև հանճարեղ Կոմիտասի պապերի՝ Սողոմոնեց ապարանքը (գծ. 10): Այս ապարանքը, որն աչքի է ընկնում իր բազմասենյակ կապակցությամբ, տեղադրված է ձորալանջի բարձունքի վրա: Ցավոք, վերջին տասնյակների ընթացքում Սողոմոնեց ապարանքը ավերակների է վերածվել, որն ամենայն հավանականությամբ եղել է երկհարկանի:

Ա.ԳՔՅՈՒՐՆԵՐ

Հայոց հնամենի երկրում անիշխելի ժամանակներից ի վեր պաշտվել է ջուրը: Եվ պատահական չէ, որ մինչև օրս էլ մեր ժողովուրդը մի առանձնահատուկ ակնածանքով է վերաբերվում ջրին: Դրա շնորհիվ է, որ Հայոց լեռնաշխարհի ամեն մի անկյունում ի բնուստ լեռնալանջերից ու ձորակներից ջրանցքներով ու սալարկված առուներով, կավե ու քարե խողովակներով գլի ու գլոր աղբբաշերտը բերվել-հասցվել են բնակավայրերը, բանով ու գլխավոր ճանապարհների ելքերը:

Հայոց մեջ աղբյուր շինելը դարեդար մեծապատիվ գործ է եղել և ամենաբարի օրինանքի արժանի այս գործը հայի համար կարոտի ու տենչանքի, համիտենականության ու կյանքի հավերժության խորհրդանիշ դարձել: Ինչպես նույն թուրքական աշխարհի ամեն մի անկյունում, այնպես էլ Ազուլիսում աղբյուրն ու աղբյուրաշինությունը առանձնահատուկ հարգանքի է արժանացել: Ազուլիսի բարբառով աղբյուրը կոչել են «կիով» «կիսով», որի ծագումը անհայտ է: Ազուլիսցիները իրենց աղբյուր-կիովները անչափ շատ են սիրել և ինչպես հանճարեղ գեղանկարիչ Մ. Սարյանն է ժամանակին նկատել՝ Ազուլիսի աղբյուրների «ճարտարապետական ձևավորումները քաղաքացիք պահպանում էին մեծ հոգատարությամբ»⁴:

³ Չ. Ազուլեցի, նշվ. աշխ., էջ 90—91:

⁴ Մ. Սարյան, Գրառուներ իմ կյանքից, գիրք 1-ին, Եր., 1966, էջ 141:

Ազուլիսում գրեթե ամեն մի գլխավոր փողոց ու եկեղեցի ունի ճաշակով ու գեղեցիկ ձևավորված իր աղբյուրը, որոնք կառուցված են սրբատաշ ու կիսամշակ քարերով և մեծամասամբ մինչև օրս գործում են անխափան: Այդպիսի աղբյուրներից են, օրինակ, Վանքի թաղի, Նուրունց, ս. Թովմա վանքի, ս. Քրիստափոր, ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցիների, Դաշո Ազուլիսի եկեղեցիների, Մահուտի Մեկուսի և այլ աղբյուրները: Ազուլիսի բավաթիվ աղբյուրների առատ ջրերից ժամանակին ազուլիսցիները իրենց տների առջև ու այգիներում ստեղծել էին մի շարք մեծ ու փոքր ջրավազան-վճակներ: Այստեղ տարածված են թաղակապ ու ուղղանկյուն, երեք կողմերից որմնավակ հորինվածքներով ու ջրավազաններով, կամարակապ բացվածքներով, ինչպես նաև բաց տիպի աղբյուրների շինությունները:

Ազուլիսցի նշանավոր գիտնական Ա. Արասիանյանը հայոց աղբյուրների և մասնավորապես Ազուլիսի աղբյուրների մասին «Պեխի-աղբիւր և Մնասենց-կիով» հոդվածում իրավացիորեն նշել է. «Հայը, հայ ժողովուրդը սիրում և հարգում է իր աղբյուրները, որոնց ամեն մինին կնքում է հատուկ անուններով: Ես չգիտեմ, կա՞ր արդյոք ողջ աշխարհում մի սպ, որը հայի պես պարծնար իր հայրենիքի աղբյուրներով... և, բան է եթե ուրեք դարիբական մի Գողթնեցի-Ազուլեցու հայրենիքի կարօտը բաշել—հիշեցեք Մնասենց-կիովը և նա կուրախանա և մտքով իրան կզգա, որպես թէ այդ րոպեին նա վայելում լինի նրա ջուրը և դրա հետ միասին՝ իր երկրի օդը... Հավիվ թէ ողջ Կովկասում, կիսամարձակվեմ ասել՝ ողջ... աշխարհում այնքան լավ աղբյուրներ լինեն մի այնքան փոքրիկ տարածության վրա, որքան Գողթան սիրտը կապնող Ազուլիսում. և որքան խնամք նրանց պահպանության համար, ինչ սխառեմ ստորերկրեայ ջրանցքների և հորերի... Դա կատարյալ էիացք է: Բայց իմ ուզածը, սրտիս սրբոմը՝ Մնասենց-կիովն է: Հիշեցեք նրան. նա գյուղից դուրս՝ ինքնավոր այգիները տանող ճամփայի վրա է: Նրա ջուրը հորդ է, պարզ, հստակ, և միմիայն այցելուներին է սպասում»⁵:

Չ. Ազուլեացին Մնասենց աղբյուրի մասին նշել է, որ «Մնասենց կիավի յին անունն Գ կիաւ կասին. այս կիավիս Բ կիավն քօռացել այ, ջուրն ցանաքել. ահայ աքուլեցի այր ոմն, անունն Խօջինց Թուման, այս կիավիս մին կիավն հանեց, մին մատն ջուր դուրս եկաւ, ձգեց իւր այքին որ է թլին ՌձԺԱ (1662)»⁶: 1611 թ. Ղուկասիցի Մելիք Մեկուսն երկու աղբյուր է կառուցել, որոնցից մեկը իր տան առջև, իսկ մյուսը Մելիքանի թաղումը՝ Մելիք Աղավելի տան մոտ⁷: Մեկ այլ ազուլիսցի՝ վաճառական Նուրին 1616 թ. Վերին թաղում կա-

ռուցել է մեկ ուրիշ աղբյուր, որը անվանակոչվել է Նուրունց կիավ⁸: Նշանավոր աղբյուր է եղել նաև Ազուլիսի շուկայի մոտ կառուցված Փղըջի կամ Փռջի (վաղոցի) աղբյուրը:

Չ. Ազուլեցու հաղորդած տեղեկություններից հայտնի է դառնում, որ Ազուլիսի վանքերի ու եկեղեցիների, քաղաքի բավաթիվ աղբյուրների թվում նշանավոր ու ջրառատ աղբյուր է եղել Շաքի կամ Շամբի աղբյուրը, ուր ամեն տարի Ազուլիսի հոգևոր դասն ու ժողովուրդը կատարել են ջրօրհնների արարողությունը⁹:

Ինչպես Ազուլիսի ժողովրդական տներն, այնպես էլ ճարտարապետական այլ մանր հուշարձանները՝ աղբյուրները, ամբողջացնում ու համապարփակ պատկերացում են տալիս Ազուլիսի ճարտարապետական ժառանգության ու նրա արվեստի մասին:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, էջ 128, 147:

⁵ Ա. Արասիանյան, Պեխի-աղբիւր և Մնասենց-կիով, «Աղբիւր», № 11, Թիֆլիս, 1886, էջ 394—399:

⁶ Չ. Ազուլեցի, նշվ. աշխ., էջ 140—141:

⁷ Նույն տեղում, էջ 141:



ԳՊՐՈՑՆԵՐ, ԳՐԶՉԱԽՆԵՐ

Գողթն գավառում հայ գրի ու լուսավորության սկզբնավորումը բավառայրյան պատմություն ունի: Այստեղ՝ մինչև հայկական հնչունակությամբ գրի ստեղծումն ու օգտագործումը, անշուշտ, գործածության մեջ է եղել նախաքրիստոնեական մեհենական գիրն ու գրականությունը, ինչպես նաև պատկերային՝ ժայռապատկերների, գրությունը: Վերջինիս անհերքելի ապացույցը Գողթնի հյուսիսարևելյան կողմում՝ Չանգեպուրի լեռնաշղթայի ամենաբարձր լեռնագագաթի՝ Կապուտջուղի, Նավասար կամ Տապանասար լեռան վրա առկա բավառայրի ժայռապատկերներն են:

Այս գավառի բնակատեղերում գրի ու լուսավորության տարածումը սերտորեն կապված է Մեսրոպ Մաշտոցի անվան հետ: Մաշտոցի կենսագիր Կորյունի հաղորդած հավաստի տեղեկություններով Գողթնը Մեսրոպ Մաշտոցի ամենասիրելի գավառներից էր և հարց գրերի ստեղծման համար Գողթնում է, որ Մաշտոցը «որսման հոգսերով պաշարված ու թակարդապատված և մտածմունքների ծիանքի մեջ էր ընկած»¹: Եվ նախքան գրերի ստեղծումը իր աշակերտների հետ Մաշտոցը մեկնել է Գողթն, որի «առաջ դուրս եկավ Գողթնի իշխանը... որի անունը Շաբաթ էր և հյուրամեծար ապաշխական հանդիսանալով՝ բարեպաշտությամբ սպասավորում էր (նրան)... Իսկ երանելին իսկույն իր ավետարանական արվեստը բանեցնելով՝ իշխանի հավատարիմ օգնությամբ սկսեց (քարոզել) գավառում»²: Հայկական գրերի ստեղծումից հետո էլ Գողթնը ամենաառաջիններից մեկն էր, ուր Մաշտոցը բացում է առաջին դպրոցները և «այստեղ՝ բարեպաշտ Շաբաթի ընկերությամբ գավառը լիացրեց Քրիստոսի ավետարանի ողջույնով, և գավառի բոլոր գյուղերում կարգեց սուրբ վանականների դասեր»³:

Ազուլիսում, որը Գողթնի կենտրոնական ու ամենաաչքի ընկնող դասավերտն էր, առաջին դպրոցները հիմնել է Մեսրոպ Մաշտոցը: Հեռագայում՝ ինչպես Հայաստանի այլ բնակավայրերում, Ազուլիսում կրթության գործի, գրքազգրման արվեստի կապակերպումն ու մշակությանն կյանքը աննախադեպ պարգացման է հասել հատկապես XII—XVII դդ.: Այդ շրջանում առանձնապես մշակությանն և կրթական մեծ աշխատանքներ են կատարել ս. Թովմա վանքին և ս. Քրիստափոր եկեղեցուն կից գործած դպրոցներն ու գրատները: Ս. Թովմա վանքի գրատան հարուստ ձեռագրերից, ցավոք, մեկ միայն չնչին մասն է հասել: Այդ փրկված մատունքներն էլ վերաբերում են XIV—XVIII դդ., որոնք գրքարվեստի, մանրանկարչության ու կավաքարական արվեստի աչքի ընկնող նմուշներ են: Պահպանված ձեռագրերի ուսումնասիրությունը ապացուցում է, որ այդ վանքին կից գործած դպրատանը գրազգրման աշխատանքով պաշտվել են տասնյակ գրիչներ ու ծաղկողներ, կավաղներ, գրչարվեստի մեկնիչներ ու մատենագիրներ: Գրչարվեստի աչքի ընկնող նմուշ է, օրինակ, 1375 թ. այդտեղ Վարդան գրչի ընդօրինակած Գր. Նարեկացու «Մատյան ողբերգութեան» ստեղծագործությունը⁴: Մեկ այլ մատյան «գծագրեցաւ պատմագիրս այս... ի թուխ ՊՁԱ (1432), ձեռամբ մեղսաներկ և անարիեստ գրչի Թումայի՝ սիրող գրոցս...»⁵: XV դ. ս. Թովմայի գրատանը մի շարք գրքեր է բավառացրել ու ծաղկել նաև Մաթեոս գրիչը, Բարսեղ շնորհալի գրագիրը և ուրիշներ:

Հայ բանասիրությանը հայտնի է Ազուլիսի գրատներում գրագրված շուրջ 90 ձեռագրեր, որոնցից 15-ը պահվում են Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում: Դրանք գրագրված են կատարելությամբ, վարդարված են բավական բարձրարվեստ մանրանկարներով ու վարդագրերով: XVI—XVIII դդ. Ազուլիսի գրատներում մի շարք ձեռագրեր են բավառացրել ու մանրանկարել Հովսեփ աբեղան, Սահակ, Սարգիս գրիչները, Գրիգոր աբեղան, Եփրեմ գրիչը, Ապարիա կապուղը, Գրիգոր, Պողոս, Ստեփանոս Յղեցիները և շատ ուրիշները: Ս. Թովմա վանքի դպրոցն ու գրչօջայիւր առանձնապես աչքի են ընկնում XVII դ. երբ այն միաժամանակ ուշ միջնադարյան Հայաստանի մշակութային կյանքի նշանավոր կենտրոններից մեկն էր, որի վարգացած ուսուցիչները, ծաղկողներն ու գրիչները այդ դարում ավելի բեղմնավոր աշխատանքներ են կատարել:

Ս. Թովմայի և ս. Քրիստափոր եկեղեցու գրատներից բացի մի շարք ձեռագրեր են գրագրվել նաև ս. Եմավոն, ս. Հովհաննես-Սկրտիչ, Մեծ Աստվածածին, Դաշտ Ազուլիսի եկեղեցիներում: Ազուլիսում գրչարվեստը առհասարակ

¹ Կորյուն, Վարդ Մաշտոցի, աշխարհաբար լարգամությունը, ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով՝ Մ. Աբեղյանի, Եր., 1962, էջ 98:

² Կորյուն, նույն տեղը, էջ 106:

³ Կորյուն, նույն տեղը, էջ 108:

⁴ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, № 1571 ձեռագիր:

⁵ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, 1401—1450 թթ., կապ մեջ Լ. Խաչիկյան, Եր., 1955, էջ 423:

հարատեղ է ընդհուպ մինչև XIX դ. սկիզբները: Այստեղի գրչակենտրոնները հաճախակի ավերել և թալանել են բարբարոս վախճանները: Այդպիսի մի թալան կատարվել է նկարագրել 1477 թ. գրչագրված և 1663 թ. Ագուլիսի ս. Թովմայում նորոգված-կապնված «Ճաշոցի» գրիչը. «Թովին ՌՄԼԸ (1789) Մուստաֆայի խանն եկա յԱգուլիս, և Թովայ առաքելոյ վանքն թալանեց, եկեղեցուն անօթքն, գերի անկան, թէ անօթեղէն, թէ արծաթեղէն, թէ գիրք... այս Ճաշոց գիրքս գերի անկա, անօրինաց ձեռքն, եկա Դըզմաւարն որ կոչի Դարադաղ, ես Միվկիթցի Գասպարի որդի տիրացու Պետրոս առի ԵՌՁ շահու»⁶:

XVII դ. Ագուլիսի դպրոցում ուսուցչական աշխատանքներ է կատարել հայտնի նկարիչ ու բանաստեղծ Նաղաշ Հովնաթանը: Ըստ կենսագիր-բանասերների⁷ Ագուլիսի ս. Թովմայի դպրոցը ավարտելուց հետո Նաղաշը մնում է Ագուլիսի դպրոցում որպես ուսուցիչ և դպիր: Այստեղ գրչագրած և մանրանկարած ձեռագրերում Նաղաշ Հովնաթանը իրեն անվանել է «պրիչ Յովնաթանս», «Յովնաթան դպիր»: Նրա գրչագրած ձեռագրերում տասնյակ բարձրարվեստ պատկերագրությունների թվում կան նաև բնանկարներ, ծաղկավարդեր, որոնք խոսում են Նաղաշ Հովնաթանի քնատուր նկարչական ձիրքի մասին: Գրչարվեստի ուշագրավ ձեռագիր է, օրինակ, 1682 թ. Ագուլիսում մանրանկարած նրա ձեռագրերից մեկը՝ Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի № 3628 ձեռագիրը, որի կտորից պատրաստված պահպանակի նկարավարդունները ևս արտականում են Նաղաշին:

Ագուլիսի դպրոցներում ու գրչատներում ընդօրինակված ձեռագրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ելրակացնելու, որ Ագուլիսի ս. Թովմայի վանքին կից գործած դպրոցի գիտական մակարդակը համապատասխանել է միջնադարյան Հայաստանի վարդապետարանների աստիճանին, ուր ակնառու կոսմոկենտրալություն է հասել փիլիսոփայության, մաթեմատիկայի, հռետորական արվեստի, գրչարվեստի, քերականության, աստվածաբանության, նկարչության և այլ առարկաների դասավանդումը: Ըստ ձեռագրական տվյալների Ագուլիսի ս. Թովմայի դպրոցը XIV դարի երկրորդ կեսերին ղեկավարել է նշանավոր մտածող «Յովնաննէս փիլիսոփայն»⁸, XV դ. կեսերին՝ «բարունապետ և հոգևոր

հայր և վարժապետ Յակոբը»⁹, XVI դ. սկզբներին՝ «Բարսեղ դասագլուխն»¹⁰ և այլ աչքի ընկնող բարունակներ:

XVII դ., ինչպես վկայում է նաև պատմիչ Ա. Դավրիժեցին, համայնքների միջոցով Հայաստանի տասնյակ ավաններում ու քաղաքներում, գյուղերում բացվում էին դպրոցներ ու կրթության այլ օջախներ: Մովսես և Պողոս վարդապետները և դրանց օրինակով շատ ուրիշները գյուղից գյուղ շրջելով բավաթիվ բնակատեղերում, վանքերին կից հիմնում էին դպրոցներ ու դպրատներ: Նախիջևանի գավառներում, օրինակ, Մովսես և Պողոս վարդապետները նոր դպրոցներ են բացել Շոռոթում, Ագուլիսում, Աստապատում և այլ վայրերում: Ագուլիսում ս. Թովմայի հոչակավոր դպրոցից բացի նրանց նոր «ժառատաված դպրատան» «ի վերայ մանկացն դպրատան» կամ «վերակացու էր Անդրեսաը», որն իր աշակերտներին ուսուցանում էր «լուստան հասարակաց»¹¹: Այս դպրոցը, ուր ուսանում էին 50—60 աշակերտներ, գտնվում էր Ագուլիսի հասարակության խնամքի ու հովանավորության ներքո: Անդրեսա երեցի դպրոցում ուսանում էին ինչպես տղաներ, այնպես էլ աղջիկներ: Հետագայում Շահ Արթուր Անդրեսա երեցին գլխատելուց հետո (1618 թ.) նրա մարմինը «բերեան յԱգուլեաց ներքին եկեղեցին, որ այժմ Սցաձորի եկեղեցի, և անդ թաղեցին»¹²:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո վարձագման մի նոր թափ է առնում հայ մշակույթն ու արվեստը: Անդրկովկասի հայաշատ քաղաքներում (Թիֆլիս, Բաքու), Երևանում, Էջմիածնում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Շուշիում և այլուր հիմնադրվում են մի շարք միջնակարգ, ծխական, տարրական, թեմական և այլ դպրոցներ ու ուսումնարաններ: Ագուլիսում միայն XIX դ. հանդիպում ենք մի քանի տեսակի դպրոցների. օրինակ՝ եկեղեցական, հասարակական, տնային կամ մասնավոր տիպի ուսումնական օջախների, ուր ուսումը տևել է 2—5 տարի: Ի միջի այլոց, Ագուլիսի մեծահարուստները և իշխանական տները միշտ էլ հովանավորել, տնտեսական ու նյութական աջակցություն են ցուցաբերել ուսումնական օջախներին:

XIX դ. 60-ական թվականներին Ագուլիսում հիմնավոր դպրոցներ բացելու, ուսուցման և տեղի թատերական կյանքի պատմությունը սերտորեն ու անմիջականորեն կապված են հայ դասական գրող ու մանկավարժ Պերճ Պողոջանի անվան հետ: Գրավոր մի շարք փաստաթղթերով վաղուց ի վեր հայտնի է, որ

⁹ Ղ. Ալիշան, Սիսական, էջ 326: ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, 1401—1450 թթ., կապեց Լ. Խաչիկյան, Եր., 1955, էջ 337:

¹⁰ Երևանի Մեթոդ Մաշտոցի անվան Մատենադարան, Մեթոդ Տեղ-Մովսիսյան Մագիստրոս, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց (անտիպ), Ավետարաններ, 2-րդ թիվ, էջ 546: Ղ. Ալիշան, Սիսական, էջ 326:

¹¹ Պատմություն Առաքել վարդապետի Դարիժեցու, Վաղ-պատ, 1896, էջ 276:

¹² Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 360, 637:

⁶ Մ. Սմբատյան, նշվ. աշխ., էջ 205:

⁷ Ա. Չոպանյան, Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը, Փարսի, 1910: Գ. Լևոնյան, Հովնաթանյան Նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», № 2, 1938: Գաբրելին Հովնաթան, Միսթեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, սրակ Ե., Անրիկոս, 1951: Մ. Մկրտչյան, Նաղաշ Հովնաթան, Եր., 1957:

⁸ Երևանի Մատենադարան, № 1517, էջ 285ա:

1867 թ. Պ. Պոռոջյանի անտիշակյան մասնակցությամբ ու ղեկավարությամբ բացվել է Ազուլիսի երկսեռ դպրոցները: Պոռոջյանը որպես ուսուցիչ և տղայոց դըպրոցի տեսուչ շատ կարճ ժամանակամիջոցում՝ Ազուլիսում ընդամենը մեկ տարվա աշխատանքի ընթացքում, մեծ հեղինակություն ու վստահություն է ձեռք բերել ու արժանացել ժողովրդի համակրանքին:

Ազուլիսի դպրոցների հիմնման, նրանց կանոնադրության կազմման և մի շարք այլ բնագավառներում Պ. Պոռոջյանը կատարել է հայրենասիրական աշխատանք, որի ներշնչման աղբյուրը հենց իրենք՝ ազուլիսցիներն են եղել: Այս հորոցում 1860-ական թվականներին մեծ դեր ու անուրանալի աշխատանք է կատարել նաև ազուլիսցի մեծահարուստ Մկրտիչ Տեր-Մկրտչյանը: 1867 թ. Ազուլիսի դպրոցների բացվելուց 25 տարի հետո Պ. Պոռոջյանը 1892 թ. գրած «Քսան ու հինգ տարի առաջ ել այսօր» հոդվածում¹³ վերհիշելով Ազուլիսի ժողովրդի արտակարգ սերն ու համակրանքը դեպի ուսումն ու կրթական գործի բարձր կազմակերպվածությունը իրավացիորեն նշել է. «1867 թվին էր այս. ճանապարհորդական նպատակով ես մտա Ազուլիս, հյուրասիրվեցի Տեր-Մկրտչյան նահապետական տանը և այնև չկարողացա դուրս գալ այնտեղից:

Աղայ Մկրտիչ ծերունի նահապետի և իր որդի Քրիստափորի առաջարկությունն ինձ այնտեղ կաշկանդեցին:

Ազուլեցիք զոլով վաճառական և աշխարհատես ժողովուրդ՝ զգացել էին ուսման ճաշակն և մի քանի անգամ փորձեր էին արել ուսումնարան բանալ իրանց գյուղում, բայց անհաջող էր անցել:

Մկրտիչ աղայի որդի երիտասարդ ուսանող Գրիգորը մի քանի տարի առաջ կանոնադրություն անգամ գրել էր, բայց նրա մահը և բուն տեղական պայմանները գործը օրօրոցում խեղդել էին:

Այժմ իմ գալուստս կրկին արժարժել է դպրոցական խնդիրը և Տեր Մկրտչեանք մտադրվում են իմ ձեռքով գրվա բերել իրենց ջերմ ցանկությունը:

Ես հրավիրվում եմ Ազուլեցվոց գիուղական ժողովը և համայնքի խնդրանք խոստանում եմ կարճ միջոցում կարգի դնել հանգուցյալ Գրիգոր Տեր Մկրտչեանցի գրած կանոնադրությունը և մի դպրոցի սկզբնավորության համար եղածը մտածել...

Երկու օրվա մեջ պատրաստում եմ երկու կանոնադրություն, որոնցով մի օրում պետք է սկիզբն առնեն երկու ուսումնարան, այն է՝ տղայոց և աղջկանց: Տղայոց դպրոցն Ազուլեցոց ցանկացածն էր, իսկ աղջկանցն իմ փայփայած և սիրած իղեալ...

Ազուլիսի երկսեռ դպրոցի բացման հանդեպն առանձին բրոշյուրով յույս ըն-

¹³ «Տարապ», Թիֆլիս, № 47, 1892, էջ 606—607:

ծայվեց 1868 թվին¹⁴: Մենք տեսանք շուտով ամեն պատրաստությունն և այ. Քրիստափոր Տեր Մկրտչյանցի հետ առած կանոնադրությունները՝ փութացինք Էջմիածին՝ Գեորգ Դ. նորընտիր Հայրապետից ստանալու դպրոցների հաստատության կոնդակները... 25-ին մայիսի, 1867 թվի գերերջանիվ Վեհափառի ձեռքից առանք Ազուլեաց երկսեռ դպրոցների իրավունքն և վերադարձանք...

Այն ի՞նչ շարժում էր, Աստված իմ, Ազուլեցվոց կողմից... մենք հնարավորություն ունեցանք նույն աշնանը վեց ուսուցչով և մի վարժուհով բանալ մի օրվա մեջ տղայոց և աղջկանց դպրոցները: Պետք է ասած՝ որ Ազուլեցիք առանց վերոհիշյալ գումարը (խոսքը դպրոցի բացման համար ազուլիսցիների նվիրատվությունից գոյացած 25000 ռուբլու մասին է— Ա. Ա.) շարժելու՝ նույն ամառը կառուցին տղայոց դպրոցի հետ և չորս ուսուցչական բնակարան՝ երկ երկու, երեք երեք սենյակներից՝ սուրբ Թովմաս Սաաքյալ վանքի բակում, իսկ հետևյալ տարին հիմնեցին մի փառաշեն հոյակապ աղջկանց դպրոց սուրբ Քրիստափոր եկեղեցու բակում:

Պ. Պոռոջյանը այնպեստև իր հուշերում Ազուլիսի դպրոցի աշխատանքների կազմակերպման մասին գրել է. «Ես վստահ լինելով հոգաբարձուաց անվիաստ աշխատանաց վերա՝ ուղևորվեցա Թիֆլիս և Երևան ուսուցչական խումբ կազմելու:

Խումբը կազմվեցավ. համալսարանական Ռուբեն Չալալյանց, Լապարյան ճեմարանից Արտաշես Հակոբյան, ինքնակիրթ Աբգար Գյուլուսյանց, Թավրիսից Սամվել Գյուլպարյան յուր ամուսին վարժուհիով (Մարիամ Գյուլպարյան—Ա. Ա.) և Վանից Ազուլիս ծխական քահանա հրավիրված Մեսրոբ քահանա Փափապյանց ինձ հետ միասին առաջիկա սեպտեմբերին աստուծո անունը տված՝ օրհնեցինք դպրոցները և ուսումն սկսեցինք:

Աշխատությունը պակաս չէր, 150-ի չափ տղայք, 35 աղջկունք, արագ քայլեր են անում ուսման մեջ...»¹⁵:

Ազուլիսի դպրոցում հետագա տարիներում ուսուցչություն են արել նաև Մ. Մանրյանցը, Ստեփան Մանդենյանցը, Նիկողայոս Տեր-Ղևոնդյանցը (հայոց լեզու), Ներսես Մինոնյանցը (ֆրանսերեն, աշխարհագրություն), Սարգիս Սարգսյանը (ռուսաց լեզու, բնական գիտություններ), Դ. Քալանթարյանը (թվագրություն), Ա. Տեր Մկրտչյանցը (ուսակրթական դասարան), Ռաֆֆին. Մեսրոպ Մաքսուդյանը և այլք:

Ազուլիսի տղաների դպրոցը, ըստ կոնդակների, կոչվել է «Վերին Ազուլեաց Հայոց Հոգևոր Ուսումնարան»: Նրա կանոնադրությունը բաղկացած է եղել 72

¹⁴ Պ. Պոռոջյան, Վերին Ազուլեաց երկու սեռից ուսումնարանների բացվելը և կանոնադրությունը, Մոսկվա, 1868:
¹⁵ Պ. Պոռոջյան, Երկերի ժողովածու, հտ. 7, Եր., 1964, էջ 266:

կետից, որոնք բացահայտում էին դպրոցի հիմնման նպատակի, ուսուցման, ղեկավարման և բազմաթիվ այլ հարցեր¹⁶: Ըստ կանոնադրության այն հիմնվել է երթիկի աշակերտների ու հասարակության բոլոր դասակարգի երեխաների համար և կառավարվել է երեսմոխական ժողովի, հոգաբարձության, տեսուչի ու վարձակալական խորհրդի կողմից: Հիմնադրվելիս ունեցել է նախակրթական և 1—3 դասարաններ, ուր ուսուցումը թոշակատու և ձրիավարժ հիմունքներով էր: Հայերեն դասավանդումը այս դպրոցում ուսուցանվել է հայոց լեզու, հայոց պատմություն (Հայաստանի աշխարհագրությամբ), ռուսաց, ֆրանսերեն լեզուներ, սրբական պատմություն, քրիստոնեական վարդապետություն, թվաբանություն, երգեցողություն, ընդհանուր պատմություն, ընդհանուր աշխարհագրություն, գծագրություն, տոմարագիտություն, վայելչագրություն, բնական պատմություն, կենդանաբանություն, հանքաբանություն, տնկաբանություն, բնական ու ուսումնական աշխարհագրություն, կարևոր տեղեկություններ վաճառականության մասին, երկրաչափություն¹⁷:

Իսկ Ազուլիսի աղջիկների ուսումնարանը կոչվել է «Վերին Ազուլեաց Հայկանուշեան Օրիորդաց ուսումնարան»: Այս դպրոցի կանոնադրությունը կազմված էր 36 կետերից և ըստ կանոնադրության հիմնականում ղեկավարվել է տղաների ուսումնարանի ղեկավարության կողմից: Այստեղ ևս ընդունվել են ձրիավարժ աշակերտուհիներ, որոնք համարվել են ուսումնարանի որդեգիրք: Դպրոցի նպատակն էր «պատրաստել կրթեալ կանայք, որոնք կարողանան վարժապետուհիներ դառնալ և վերջումը լուսավոր մայրեր լինել և դաստիարակել իւրանց որդիքը քրիստոնեական կրօնի և բարոյականութեան կանոնների մեջ»¹⁸: Այստեղ դասավանդվում էր հայոց լեզու, հայոց պատմություն, քրիստոնեական վարդապետություն, թվաբանություն, աշխարհագրություն, ձեռագործություն, վայելչագրություն, նկարչություն և երգեցողություն: Դպրոցի հոգաբարձությունը կազմված է եղել 57 կանանցից, տեսուչը՝ Եղիաբեթ Տեր Սկրտչյանն էր, նրա օգնականը՝ Թագուհի Հայնսպարյանը: Իսկ տղաների դպրոցի հոգաբարձուներն էին՝ Սկրտիչ Տեր Սկրտչյանը (միևնույն ժամանակ Նախիջևանի վիճակային ուսումնարանների տեսուչն էր), Հայրապետ Արասխանյանը, Բաղդասար

¹⁶ Պ. Պողոսյան, Վերին Ազուլեաց երկու սեռից ուսումնարանների բացվելը եւ կանոնադրությունը, Մոսկվա, 1868: Ընդ որում այս գրքովում են գետնից հանվում դպրոցների վերաբերյալ կոնդակները, դպրոցների բացման արարողության նկարագրությունը և արտասանած ձևերը, խոսքերը և այլն:

¹⁷ Երևանի Մատենադարան, Մեսրոպ Վարդապետի Մաքսուդյանի ֆոնդ (36), թղթ. 25, վավ. 165:

¹⁸ Պ. Պողոսյան, Վերին Ազուլեաց երկու սեռից ուսումնարանների բացվելը եւ կանոնադրությունը, Մոսկվա, 1868, էջ 25:

Փանյանը, Հովհաննես Կոստանդինյանը: Տեսուչն էր Պ. Պողոսյանը (1867—1868 թթ.):

Ազուլիսի դպրոցների բացելուց առաջ և հետո էլ Պ. Պողոսյանի հակառակորդները՝ հետադեմ հոգևորական Սարգիս Զալալյանը և ուրիշները, չէին դադարում նրա դեմ դավեր նյութելուց: Նրանք սկսեցին Ազուլիս են ուղարկում Մեսրոպ Սմբատյանին, որին Պ. Պողոսյանը իր «միակ սրտակից ու սիրելի բարեկամն» էր համարում, ապա վարդապետ Գևորգ Արամյանին, որը փակել էր ավել Շուշվա դպրոցը: Վերջինս հատուկ առաջադրանքներով եկել էր Ազուլիս Պ. Պողոսյանի «հանցանքները» ի հայտ բերելու և նրան դպրոցից հեռացնելու պայմանով: Սակայն Գ. Արամյանը խոստովանում է Պ. Պողոսյանին իր առաջադրանքի մասին, և հրաժարվելով ս. Թովմա վանքի վանահայրությունից, մեկնում է Ազուլիսից:

Այնուամենայնիվ, 1868 թ. հունվարի 26-ին Էջմիածնի Սինողը հիմք ընդունելով Մ. Սմբատյանի բողոք-կեղծիքը, հրահան է արձակում Պողոսյանին դպրոցից ապատելու մասին: Ըստ այդ հրամանի իբրև թե Պողոսյանը մանուկների մեջ տարածում է «շանջիական աղանդ», «չար ու վատթար սովորություններ» է սերմանում նրանց մեջ: Այս կեղծիքը փոխառելու ու դատապարտելու համար Ազուլիսի դպրոցի հոգաբարձության անդամներն ու հասարակությունը 1868 թ. մարտի 24-ին դիմում են ներկայացնում կաթողիկոսին և պաշտպանում Պ. Պողոսյանին: Սակայն այդ բողոք-դիմումները մնում են անհետևանք»¹⁹:

Այսպիսով, ձեռքի տակ չունենալով որևէ կոնկրետ մեղադրանք կամ փաստ, իշխանությունն օգտագործելով կարգադրելու իր իրավունքները Պողոսյանին ապատում է Ազուլիսի դպրոցներում աշխատելուց: Պ. Պողոսյանը կամովին հրաժարական ներկայացնելով, ինչպես ինքն է գրել. «1868 թ. հունիսի վերջերին ես հավիտյան թողի Ազուլիսը»²⁰:

Նախքան Պ. Պողոսյանի 1867 թ. բացած դպրոցները, Ազուլիսում, ինչ ինչպե, գործել են մի քանի դպրոցներ: Օրինակ, 1832 թ. այստեղ գոյություն ուներ 3 դպրոց²¹, իսկ 1848 թ. ազուլիսիցի Հայրապետ Քալանթարյանը բացել էր տղաների դպրոցը: Բացի այդ հետագայում Հ. Քալանթարյանը իր տանը ուներ մի սեփական մասնավոր դպրոց²²: Այնուհետև 1851 թ. Ազուլիսում հիմնվեց արևտրական տարրական դպրոցը²³. «Ազուլեաց մեջ ծխական-արևտրական

¹⁹ Ա. Ազուլյան, Նոր նյութեր Պերճ Պողոսյանի մասին, «Բանբեր Մատենադարանի», № 4, 1958, էջ 261:

²⁰ Պ. Պողոսյան, Երկերի ժողովածու, հտ. 7, Եր., 1964, էջ 283:

²¹ Հ. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի կարգազման պատմություն, հտ. 2, Եր., 1964, էջ 458:

²² Պ. Պողոսյան, Երկերի ժողովածու, հտ. 7, Եր., 1964, էջ 585:

²³ Հ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 458:

վարժարանը 14 տարի տեվեց, յորում տարին միջին հաշուով իբր 67 տղայ կուսանէր»²⁴:

Մինչև 1867 թ. Ազուլիսի երկսեռ դպրոցների բացվելը, ինչպես Ս. Պ. Չելիսկին է նշել, Ազուլիսում տղաների դպրոց «բացուած է յամի 1851 այսու անուամբ. «Ազուլեաց ծխական-առեւտրական վարժարան, և մինչև 1865—6 գիտական վարչութեան խնամոց ներքոյ կը գտնուէր. իսկ 1887-ին ժողովրդեան ձեռքը անցավ, որք փոխեցին և ըրին պայն «ծխական-հոգեբանական» վարժարան»²⁵; 1851 թ. բացված տղաների առեւտրական դպրոցը «1855 ընդարձակեցին»՝ ընթացքին երկրորդ դաս մ այլ ավելցուցին»²⁶:

Ազուլիսում մի շարք առաջարկություններ են արվել նաև արվեստի դպրոց բացելու համար: Օրինակ, 1873 թ: հոկտեմբերին Ազուլիսի դպրոցների 6-րդ տարեդարձի շքեղ արարողության ժամանակ ի թիվս մի շարք այլ առաջարկությունների դպրոցի ուսուցիչներ Սարգիս Սարգսյանի և Ստեփան Մանդեկյանի «նոցա երկուսի ձառն ևս արուեստական դպրոց բանալու խիստ կարևորութեան համար առաջարկություններ էին»²⁷:

Ազուլիսի դպրոցների առաջադիմության և համբավի մասին գաղափար կազմելու համար բավական է թելուզկ թերթի ժամանակի մամուլի էջերը, ուր **գովեստի շատ խոսքեր կան արձանագրված**: Օրինակ, Ազուլիսում եղած ժամանակ տիկին Շանթը մեծ գոհունակությամբ գրել է, որ. «դպրոցք լԱզուլիս գովութեան արժանաւորք են թէ՛ կարգաւորութեամբ և թէ՛ յառաջադիմութեամբ: Բնակչաց տուրքերովը կը պահպանուին, և քանի մը «ազուլեցոց առատատուր տրիք հաստատուած են: Տղոց շատին համար ձրիավարժ է դաստիարակութիւնն... Աղջկանց դպրոցին դրան վրայ այսպիսի գրուած մը տեսայ. Դպրոց աղջկանց՝ մարդ ընկերութեան»²⁸: Այնուհետև Շանթըրը նշում է, որ. «17 հունիս—Ուսումնական տարւոյն վերջն են Ազուլեցիք և դպրոցաց քննութեանը ժամանակ. ուստի վերատեսուչք խնդրեցին մեր քանի մի վայրկեանի ներկայութիւնը: Պատի աղջկունք ռուս լեզուի քննութիւնը կուտան երբ կը մտնենք: Մեծ հաճութեամբ ներկայ գտնուեցայ այդ քննութեան, յորում եօթն տարուանէ ի նշուան տասնըջորս և հնգետասնամեայ օրիօրդիք և օրիորդք վարմանք պատճառով կանխատես խելամտութեամբ և դիւրութեամբ կը ցուցնեն յառաջադիմութիւնսին: Իրենց հասակին համեմատ ամենքն քիչ շատ կընթռնուն ու կը խօսին ռուս բարբառով, որոյ ուսումը պարտաւորիչ դարձած է»²⁹:

²⁴ «Բազմավեպ», հտ. Ծ, Վենետիկ, 1892, էջ 543:

²⁵ «Բազմավեպ», նույն տեղ:

²⁶ «Բազմավեպ», նույն տեղ, էջ 538:

²⁷ «Արարատ»... էջ 399—400:

²⁸ «Բազմավեպ», հտ. ԾԲ, 1894, էջ 536:

²⁹ «Բազմավեպ», հտ. ԾԲ, 1894, էջ 538:

Մեկ այլ ակնառեւեը՝ ժամանակի հայտնի մանկավարժ Հակոբ Կարապետյանը, «Ազուլեաց դպրոց» հոդվածում գրել է. «Ազուլեցիք եթե ծաղիկ հավաքող մեղրուկ բնավորություն չունենային՝ անշուշտ իրենց վիճակն այլ պիտի համապատասխան ըլլար մեր այլ գյուղացվոց դրութեան հետ... Այս վերջին ժամանակները նոքա գիտենալով, որ նյութական լուսավորությունը առանց ընդհանուր բարոյական և ուսումնական յառաջադիմության իրանց փառք չբերելն վատ կվնասէ ևս... շտապեցին միանալով մի սրտով... մեծամեծ պոռաբերություններ անելով լուսավորության տներ հիմնել, անց կենալով Ռուսիոյ հովաւորության տակ եղող միայնոց շատերից»: Հ. Կարապետյանը այնուհետև դպրոցների տարեվերջի (1870 թ.) քննությունների մասին նշել է, որ. «Տասը տարեկան օրիորդք և աղայք այնպիսի թուաբանական խնդիրներ իմ մօտ լուծեցին, որ ինձ հիացրին. այնպես գեղեցիկ իրանց մայրենի լեզվով կարդացին, գրեցին, իրանց հայրենի պատմությունը պատմեցին, որ ինձ վարմացրին. վերին դասատուն աշակերտների վերայ ռուսիոյ և գաղղիոյ (Ֆրանսերեն— Ա. Ա.) լեզուների մեջ այնքան առաջադիմություն տեսա, որից ավելի կարծում եմ թե պահանջել հարմար չէր լինի. ամենն ավելի ինձ հափշտակեցին մեծարու Գյուլպոլյանցի ամուսնոյ (Մարիամ Գյուլպոլյանի — Ա. Ա.) հսկողության տակ օրիորդների գործած ձեռագործները...»³⁰: Ի միջի այլոց օրիորդաց դպրոցում սանուհիները ձեռագործությամբ կին պարզվում նաև դասերից հետո»³¹: Իսկ տղաների դպրոցում գործում էր նաև «մի մանուկ ընթերցարան, որտեղ ծախվում են պնակական դասագրքեր ու ընթերցանության գրքեր»³²:

XX դ. սկզբներին մի քանի անգամ փորձեր են արվել Ազուլիսի դպրոցում բացելու 5-րդ բաժանմունք՝ դասարան: Օրինակ՝ 1906 թ. այդ հարցի կապակցությամբ Ազուլիսի տղաների դպրոցի ղեկավարությունը հատուկ որոշում էր ընդունել: Բացի այդ, այդ որոշմամբ, աշակերտներն ու աշակերտուհիները պետք է սովորեին խառը: Այս կապակցությամբ 1906 թ. հուլիսի 11-ին կազմված արձանագրության հատուկ կետով որոշվել է վերը նշված հարցերի թույլտվությունը ստանալու համար խնդրագիր ուղարկել Կաթողիկոսին»³³: 1909 թ. հունվարի 22-ին Մ. Մաքսուդյանին Ազուլիսից հղած մի նամակից տեղեկանում ենք, որ այդ հարցը լուծվել է դրականորեն՝ բացվել է 5-րդ դասարանը և դպրոցի 186 աշակերտներն ու աշակերտուհիները միասին են սովորում»³⁴:

Եվ այսպես, 1867 թ. Ազուլիսում հիմնված երկսեռ դպրոցը գոյատևում

³⁰ «Արարատ» 1870, էջ 246—247:

³¹ «Մշակ», 1873, № 30:

³² «Մշակ», 1882, № 36:

³³ Երևանի Մատենադարան, Մեսրոպ Կարապետի Մաքսուդյանի ֆոնդ (36), թղթ. 31, վավ. 33:

³⁴ Նույն տեղը, թղթ. 25, վավ. 165:

է շուրջ 46—47 տարի, մինչև 1913—14 թթ.: 1913 թ. հունվարի 27-ին Մ. Մաքսուդյանին Օրդուբադից Վ. Վրացյանի հղած նամակից տեղեկանում ենք, որ Մ. Մաքսուդյանի Ազուլխից հեռանալուց հետո այն անգործության է մատնվել: Նամակում Վրացյանը նշում է, որ ազուլխցիները ասում են թե Մաքսուդյանի հեռանալուց հետո «մեր վանքը մնացել է մի ավերակի նման: Այն դպրոցը, որ «Նրա ժամանակ. այսինքն (Չեր) լիքն էր երկսեռ սաներով, այժմս լցուած է ծառերի չորացած տերևներով»³⁵:

Դպրոցական գործն ու առհասարակ մշակութային կյանքը վարճացման իր անհրաժեշտ անկարգակնի էր նաև Ստորին կամ Դաշտ Ազուլխում: Ինչպէս Պ. Պոռչյանն է նշել. «Ներքին Ազուլխն ևս լետ չէ մնացել իւր ուսումնասիրութեամբ .մի քանի տարի է, այնտեղ կայ ուսումնարան մի բարեմիտ քահանայի, մի ավգասեր աշխարհականի և մի ուսումնասեր վարժապետի հոգացողութեան ներքոյ»³⁶: 1975 թ. «Մշակում» տպված մի հոդվածից տեղեկանում ենք, որ այստեղ Դաշտ ազուլխցի Մկրտիչ Ջարգարյանը «կամենալով իրախոսուել իր համագյուղականներին դեպի ուսումն, 1858 թվին հրամանով Էջմիածնայ Սինդի սկսավ իր ծախսով ուսումնարան բանալ, նվիրելով կամ ըստ ամեն 300 ռուբլի մեկ ուսուցչի վարձ հայոց լեզուն ուսուցանելոյ համար: Չկնի մի քանի ամաց սրբա գործակից դուրս եկավ Պողոս Աղամալյանց ուն, որոնք միասին ավելացրին ուսուցչաց թիվը և շարունակեցին գործը մինչև 1865 թվին, ստանալով և մասնավոր թոշակ աշակերտներից: Բայց հետո ձանձրանալով ժողովրդի նախանձահույլ տրտունջից և հակառակությունից, թողին իսպառ և հեռացան: Ի վերջո 1872 թվին ցանկանալով ընդհանուր ուժերով հաստատապես բարեկարգել տեղվոյս դպրոցը, ընտրվեցան Վեհափառ Կաթողիկոսի հրահանով հոգաբարձուք և 40 անդամներ... դոքա միշտ սառնասիրտ են... և դյուրին է գուշակել որ գալ տարին կը կարողացուի անպատճառ դպրոցի մահուան դատակնիքը: Հրավիրում ենք սոյն կետին Երևանու թեմական վերատեսչի ուշադրությունը...»³⁷:

Այնուհետև 1876 թ. հրատարակված մեկ այլ հոդվածում նշվում է, որ Դաշտ Ազուլխը. «Ութ տարի առաջ ուներ մի բարեկարգ ուսումնարան երեք ուսուցիչներով և 80-ից ավելի աշակերտներով (խոսքը 1858 թ. Մ. Ջարգարյանի բացած դպրոցի մասին է, որը փակվել էր 1868 թ.— Ա. Ա.): ...Արդեն 8 տարի

անցել է նոքա գրկուած են ուսումնարանից և այլև չեն հոգում այդ մասին: Թեև այդ միջոցում մասնավոր անձանց մօտ ուսուցանվում են մինչև 40 երեխայք»³⁸: Դաշտ Ազուլխում հետագայում բացված դպրոցը³⁹ իր գոյությունը ևս պահպանում է մինչև 1908—1910 թթ., բայց այն իր մակարդակով ու առաջադիմությամբ երբեք չի հասնում Վերին Ազուլխի դպրոցներին:

Եվ այսպես, ինչպես ակնհայտ է դառնում, Ազուլխում դպրոցների հիմնումն ու զրջագրման արվեստը ինչ պատմություն ունի: Այստեղ Մեարոպ Մաշտոցի հիմնած առաջին դպրոցները երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակներից ելնելով, հետագա դարերում, փակվելով ու վերստին գործելով հուրատեսել են ընդհուպ մինչև XX դ. սկիզբները: Վերջիններս անուրանալի դեր ու նշանակություն ունեն Ազուլխի և առհասարակ Նախիջևանի ու նրա մերձակա գավառների միջնադարյան մշակութային կյանքում:

³⁵ «Մշակ», 1876, № 15:

³⁶ «Մուրճ», 1890, № 7, էջ 1021—1022:

³⁵ Նույն տեղը, թղթ. 25, վավ. 454: Ի միջի այլոց այս նամակի տեղեկությունը այնքան է հավաստի չէ: 1912 թ. նոյեմբերի 5-ին ազուլխցի Ա. Ներսիսյանի «Մշակին» ուղարկած մի նամակ-թղթակցության տվյալներով 1912 թ. հոկտեմբերի 28-ին Ազուլխում մեծ շուքով նշվել է երկսեռ դպրոցների 45-ամյակը (տե՛ս <ՍՍ> պետական կենտրոնական պատմական արխիվ, «Մշակ» թերթի խմբագրություն, ֆոնդ 227, գործ 161, էջ 48—49):

³⁶ Պ. Պոռչյան, Վերին Ազուլխաց երկու սեռից ուսումնարանների բացվելը եւ կանոնադրութիւնք, Մոսկվա, 1868, էջ 2:

³⁷ «Մշակ», 1875, № 32:



ԹԱՏՐՈՆ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Գողթնը հայ հնագույն երգի ու երաժշտության, թատերական կյանքի կենտրոններից մեկն էր: Հայ ժողովրդի գրականության, երգի ու երաժշտության պատմության մեջ Գողթնում երգված-ավանդված երգերը՝ հայտնի են «գողթան երգեր» անվանումով: Մեր բանասիրության և երգարվեստի աֆենախին նսուջները համարվող այդ պատասխաններում զովերգվում և առասպելական չափանիշներով պատմվում-նկարագրվում են Արտաշեսի, Արտավազի, Տուրքանի, Վահագնի, Աճախակի առասպելները, նրանց կյանքն ու գործերը, հերոսական պայքարը: Եվ ժողովրդի խոհերով ու իմաստությամբ, ապատատենչ պղծագունքներով աղեցուն այդ երգերը, որոնց մի մասը հորինվել են հենց Գողթնում, պատմահայր Մովսես Խորենացու հավաստի տեղեկություններով, փանդիոնների նվագակցությամբ. «Ճշմարտապես պատմում են և թվեցաց երգերը, որ ինչպես լսում են, ախորժերով պահել են գինեվետ Գողթն գավառի կողմի մարդիկ»¹: Իսկ մեկ այլ առիթով Արտավազի գործերի մասին խոսելիս պատմահայրը նշում է, որ «նրա մասին Գողթնի երգիչներն այսպես են առասպելաբանում»² և այլն:

Գողթնում, այդ թվում և Ագուլիսում՝ որպես գավառի ամենանշանավոր բնակատեղի, հնամենի այս ժողովրդական երգերն ու առասպելները ոչ միայն սոսկ երգվել-ավանդվել են, այլև վարպետ գուտանների օգնությամբ թատերականացվել են, ուր մեծ տեղ է հատկացվել նաև պարարվեստին ու թատերական տարապին: Գողթան երգերը թատերականացված լինելուց բացի, որպես անհրաժեշտություն, ունեցել են նաև բանաստեղծություններին համապատասխան մեղեդիներ: Կատարումների ընթացքում վիպասանվող նյութի արձակը պատմվել է որպես ոճավորված խոսք, իսկ բանաստեղծությունը հիմնականում մատուցվել մեներգերի, վազերգերի և խմբերգերի, ինչպես նաև արտասանությունների ձևով:

¹ Մ. Խորենացի, Հայոց պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ ավալոնիկոս Սո. Մախաչյանի, Եր., 1961, էջ 133:

² Նույն տեղը, էջ 218:

Գողթան երգերում երաժշտությունը որպես գլխավոր գործոն ապահովել է կենդանի, հուպական տրամադրություններ: Եվ պատահական չէ, որ Գողթան երգերը օժտված են մեղեդայնությամբ և ունեն երաժշտության օրինաչափություններով կերտված բանաստեղծությունների հատկություններ: Այստեղից էլ պետք է նկատել, որ Գողթան գուտանները վիպասանության ասպարեզում նախ և առաջ խոսքի ու երաժշտության վարպետներ էին, հայրենի բառ ու բանի բանաստեղծության ու երգահանության հմուտ գիտակներ: Նրանք ոչ միայն իրենց ժամանակի հայ հնագույն բանաստեղծության, երաժշտության և թատերական արվեստի ստեղծագործողներից ու կատարողներից էին, այլև այդ արվեստների ցուցադրման և տարածման առաջին հիմնադիրներն են: Գողթան երգիչների մեղեդիներն ու երաժշտությունը, որպես բարձրարժեք ստեղծագործություններ, Հայաստանում քրիստոնեության ընդունումից հետո էլ որպես շարակրիստոնեական, սաղմոսներ և այլն դարեր շարունակ երգվել ու ավանդվել են եկեղեցական երաժշտության մեջ:

Ագուլիսում, ինչպես նաև Գողթնի մյուս ավաններում ու բնակատեղերում՝ Որդուարում, Յոնայում, Վանանդում և այլուր հայ հեթանոս հնագույն և վաղ միջնադարյան երգերից ու վիպական ստեղծագործություններից բացի լայն տարածում է ունեցել նաև եկեղեցական, աշխարհիկ երգարվեստը, որոնք կատարվում էին եկեղեցիներում, իշխանական պալատներում ու նստոցներում, պանսեան համոլեսներում, տներում ու խնջույքներում: Այստեղ հնուց ի վեր ընդհուպ մինչև XX դ. 10-ական թվականները երգ-երաժշտական ձևավորումներով ու թատերականացված էին կատարվում ավանդական Համբարձման և Վարդավառի, Բարեկենդանի ու Ծաղկապարթի, Վերափոխումն Աստվածածնի և այլ տոնակատարությունները:

Հայ երաժշտության ու երգարվեստի կուտակած հարուստ փորձերի հիման վրա Ագուլիսի դպրոցներում XII—XIII դդ. երգեցողության ու եկեղեցական երգեցողության առարկաները արդեն հատուկ երգարանների ու տաղարանների օժնությամբ ուսուցանվել են որպես գիտություն՝ երաժշտության պատմության ու տեսության ուսուցմամբ:

XIX դ. կեսերից Գողթնի մշակութային կյանքի նոր առաջխաղացմանը վուզընթաց նկատելի աշխուժացում է ապրել նաև երաժշտությունն ու թատերական արվեստը, որոնց հիմնական կենտրոնը դարձյալ Ագուլիսն էր: Գողթան երգիչների հնավանդ սովորություններին ի բնուստ ավանդապահ և ժառանգորդ ագուլիսցիներին, որոնք ունեին վարմանալի երաժշտական ընդունակություններ, միշտ էլ ուղեկցել է երգն ու երաժշտությունը, թատրոնը: Այստեղ ամեն մի եկեղեցական, հասարակական հանդիսությունները, որպես հնավանդ կազմոն, կատարվում էին ժողովրդական և հոգևոր խմբային երգի ու երաժշտության, թա-

տերական ներկայացումների ուղեկցությամբ, որն էլ նման արարողություններին հաղորդել է ժողովրդական տունախմբությունների բնույթը:

Ինչպես այլ վայրերում այնպես էլ Ազուլխում մի շարք այլ հարցերի շարքում, ազգային երաժշտության ու թատրոնի պահպանման ու վարձագան առաջատար ուժը տեղի դպրոցների ուսուցչական ու աշակերտական կոլեկտիվներն էին, առանձին առաջադեմ ու նվիրված անհատները: Ազուլխի երկսեռ դպրոցների հիմնադիրներից մեկը՝ Պ. Պոռչյանը, որը միաժամանակ XIX դ. Ազուլխի թատրոնի ակտիվ կազմակերպիչներից էր, 1868 թ. պատասխանելով «Հայկական աշխարհ» թերթում տպված Հ. Միրինյանի հոդվածին՝ ազգային-թատերական կյանքում Մոսկվայի հայ օրիորդների պնասիվ դերի վերաբերյալ, Ազուլխի թատրոնի, ժողովրդի թատերասիրության ու դերասանների ակտիվ գործունեության մասին «Նամակ դեպի խմբագրող Ազուլխից» հոդվածում հանգամանալից կերպով նշել է. «Ասածներիս ստուգության համար հիշել հարկ է լինում ինձ այստեղ այս տարվան Ազուլխում տրված մեր բարեկենդանի չորս ներկայացումը (խոսքը Հ. Կարենյանի «Շուշանիկ պիեսի մասին է— Ա. Ա.) բարեգործական նպատակով, որի մասին մենք երբեք մտադիր չէինք հրատարակելու, համարելով այն մի թեթև իրողություն տեղի փոքրության և շատ ուրիշ պակասությունը նայելով... այս տարի Ազուլխում բացի երեխաբանական դերերից, որոնք կատարեցին մանուկ աղջիկներ, մյուս կանոնաց դերերն էլ ներկայացրին հայ ակտիվ օրիորդներ, ինչպես ողբերգութեանց, նույնպես և կատակերգութեանց մեջ, և որ միխթարականն է, մեծ վատառությամբ և հաշտականությամբ»³:

Պ. Պոռչյանը այդ նույն հոդվածում գովեստով է խոսում իրենց դերակատարումներով աչքի ընկած դերասանուհիների՝ Ջարուհի Փափազյանի, Նայեհի Ալանյանի, Կատարինե Խոջամիրյանի, Մանուշակ Աղամիրյանի, Եղիսարեթ Տեր Ջանյանի և այլոց, ինչպես նաև դերասանների մասին: Ի միջի այլոց Չ. Փափազյանը հետազայում Ալեքսանդրապոլի առաջին դերասանուհին էր: Անուկետու Պոռչյանը Ազուլխի թատրոնի հետագա գործունեության մասին նշել է. «Պատվելի Ազուլեցիք այնքան էին համովված թատրոնի գոյությանը, որ խնդրում էին վատից հեռու ևս շարունակել. բայց ե՞րբ կների միջոցը. բարեկենդանի ազատ օրերն էին մեզ ձեռնառու եղել այն բանին. սակայն հույս կա, որ եթե այսուհետև չարամիտների ներգործությունից ազատ մնա Ազուլխը, միջոց եղած ժամանակին չի դադարիլ այն շարունակությունը, Ազուլեաց ժողովուրդն օր ըստ օրե կավելացնե իր գործակցությունը և Ազուլեաց պարկեշտ օրիորդներն էլ կարող կլինեն պարծենալ մյուս երկրների հայ օրիորդների առաջին իրենց բաջավանական մեծագործությամբ:

³ «Հայկական աշխարհ», Թիֆլիս, 1868, № 4, էջ 169:

Ես այստեղ մեծ ուրախությամբ հիշում եմ պ. Տեր Սահակյանի և պ. Միրինյանի հետ օրիորդ Սարուկ Ստեփանյանի անունը և ինչպես հայ՝ նվիրում եմ նրան իմ խորին շնորհակալությունը... նույնպես և այս տարուան Ազուլեաց թատրոնը պայծառացնող օրիորդներին, որոնց արած քաղցր տպավորությունը անմոռաց պիտի լինի իմ սրտից»⁴: Այսպիսի մեծ ընդունելության է արժանացել նաև 1866 թ. բեմադրած Գ. Խալաֆյանի «Արշակ Երկրորդ» ներկայացումը:

Մամուլում հրատարակված մեկ այլ հոդված (հեղինակ՝ Բիչիկ-Օղլան) տեղեկացնում է, որ. «Վ. Ազուլեաց օրիորդաց ուսումնարանի դասիվճում ներկայ 1873 թ. օգոստոսի 13-ին և 15-ին մի քանի հայ երիտասարդներ ներկայացրին ի օգուտ նույն տեղի երկսեռ ուսումնարանաց ընթերցարանի. «Աշոտ Ողորմածի Դատաստանը» որը երբեք արարածով և «Էս էլ քի մօցիքըսխն» հեղ. Տեր Գրիգորյանցի... Առանձին ուշադրության արժանի էր տ. Աշխենը, որ գեղեցիկ կերպով կատարեց «Կեկելի» դերը... Լավ էր նույնպես պ. Գ. Ասլանյանը, որ խաղաց «Իսայու» դերը և բավականին ծիծաղացրեց ամբոխը»⁵: Այս ներկայացումներից գոյացած գունարի մի մասը «Թատերասերների խումբը» տրամադրել է ընթերցարանի համար վանապան գրքեր, քարտեկներ և այլ անհրաժեշտ իրեր գնելու:

Իսկ Ազուլխի երկսեռ դպրոցների 6-րդ տարվա տարեկիցին՝ 1873 թ. հոկտեմբերի 25-ին կատարված շքեղ արարողության ձևերից հետո և վերջում «նրգում էին երկսեռ մանուկներ և սրտաշարժ երգեր»⁶: «Մշակում» 1876 թ. սպագրված մի նամակը վկայում է, որ Վ. Ազուլխում սովորաբար «յուրաքանչյուր տարի ապիս են ներկայացումներ», իսկ Ստորին կամ Դաշտ Ազուլխում թատերական ներկայացումներ են տվել սկսած 1862 թ.⁷:

Մամուլում հրատարակված և արխիվային մի շարք աղբյուրների ուսումնասիրությունը աներկբա վկայում է, որ Ազուլխում XIX դ. վերստին աշխուժացում ապրած երաժշտական ու թատերական կյանքը հարատևել է ընդհուպ մինչև 1914—1915 թթ.: «Մշակին» հղված 1912 թ. նոյեմբերի 5-ի Ա. Ներսիսյանի թղթակցությունից տեղեկանում ենք, որ Ազուլխում մեծ շուքով է տոնվել «տաս» և «տիպ» հորեյանական տոնակատարությունը՝ «Հոկտ. 13-ին հանդիսավոր պատարագից հետո կատարվեց հոգեհանգիստ. «տաս» ու «տիպ» մեծ գործիչների հավերժ հիշատակին... իսկ հանդեսը հետաձգված էր հոկտ. 28-ին, մեր երկսեռ դպրոցների 45-ամյակի հետ միասին կատարելու: Այդ օրը կայացավ ցերեկույթ»՝ մասնակցությամբ երգեցիկ խմբի և աշակերտ-աշակերտուհիների...

⁴ Նույն տեղը, էջ 170—172:

⁵ «Մշակ» 1873, № 38:

⁶ «Արարատ», 1873, էջ 399:

⁷ «Մշակ», 1876, № 15:

ապա երեկոյան տեղի ունեցավ ճոխ հրավառություն և սյարեր, ժողովուրդը գոհ սրտով ժամը 8^{1/2}-ին ցրվեց:

Դպրոցի մուտքը, դահլիճը և բենը գեղեցիկ պարդարված էին⁸:

Այս հաղորդումից պարզվում է, որ Ագուլխում ավանդական է եղել մեծ գործիչների հիշատակը հավերժացնող «տաս» ու «տիպ» հանդեսի կատարումը:

Ագուլխի երաժիշտների ու նվագաժողովների, ժողովրդական գուսանների ու թատրոնի դերասանների համբավը ինչպես հին դարերում, այնպես էլ XIX դ. լայն ճանաչման է արժանացել: Այստեղ հնուց ի վեր տարածված է եղել թըմբուկն ու տավիղը, փանդիոն ու թառը, դուդուկն ու քամանչան, հովվական սրինգն ու կուռնան և այլ նվագարանները: XIX դ. վերջերին Ագուլխ են մուտք գործել դաշնամուրն ու ջութակը:

XIX դ. վերջերից Աղդրկովկասի հայ մշակույթի կենտրոններում՝ Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Շուշիում, ինչպես նաև Մոսկվայում ու Պետերբուրգում աստիճանաբար Նախիջևանի բնակչության կենտրոնանալու հանգամանքով հայ մշակույթի նշանավոր ու ակնառու շատ ու շատ գործիչների (Ա. Արապխանյան, Ա. Քալանթար, Մ. Աբելյան, Հ. Հայրապետյան, Ա. Խաչատրյան, Ա. Մերամզուկյան և ուրիշներ) թվում հայ թատրոնի կազմակերպմանն ու թատերական արվեստի զարգացմանը անուրանալի նպաստ են բերում ագուլխցիներ Ատոն Մանվելյանն ու Ստեփան Սաֆրապյանը, Միշա Մանվելյանն ու Յվի Առուսյանը, Հասմիկն ու Ջարուհի Փափապյանը, Գուրգեն Ջանիբեկյանը և ուրիշներ: Ագուլխի թատերական ու երաժշտական կյանքը հայ բավադարյան թատրոնի ու երաժշտության արվեստի անցյալի հետաքրքրական դպրոցներից մեկն է, որը գոյատևել է մինչև 1910-ական թվականները և արժանի է ուսումնասիրման:



Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ՎԻՄԱԳԻՐԱԿԱՆ

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

⁸ ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ. «Մշակ» թերթի խմբագրություն, ֆոնդ 227, գործ 161, էջ 48—49:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

() — Փակագծերով վերձանունների մեջ լրացված են բնագրերում գրչի բաց թողած, ինչպես նաև պատվի նշաններով ու փակագրերով աղումները:

[] — Փակագծերով վերականգնված են եղծված ու քայքայված, կտորված գրերը:

. . . — Կետերով վերձանունների մեջ առանց գրերի քանակի ցույց են տրված անվերձանակի ու եղծված, քայքայված, ինչպես նաև հողի մեջ թաղված տառերն ու բառերը:

— Գծիկով վերձանունների մեջ արտահայտված են բնագրերի չկարդացվող գրերն իրենց թվով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Հ. Շահխաթունեանց — Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և իննգ զաւառացն Արարատայ, հատոր Բ, Էջմիածին, 1842:

2 Ղ. Ալիշան — Սիսական, Վենետիկ, 1891:

3 Մ. Փափազյան — Հուլիսնք վանօրէից Գողթան զաւառ, Վաղարշապատ, 1891:

4 Ե. Լալայան — Գողթն կամ Օրդուբադի կամ Վերին-Ագուլիսի ոստիկանական շրջան (Պռանձևատիպ «Ազգագրական Հանդեսից»), Թիֆլիս, 1912:

5 Հ. Ոսկյան — Վասպուրական-Վանի վանքերը, Բ. մաս, Վիեննա, 1942:

6 Ե. Մուշեղյան — Հայերն արձանագրությամբ ատարկաներ, Երևան, 1964:

ԱԳՈՒԼԻՍԻ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ագուլիսի բալանայի մշակույթից մեկ հասած ժառանգութեան ուսումնասիրման ու մի շարք հարցերի լուսաբանման գործում էական նշանակություն ունեն նաև նրա վիճագրերը: Վերջիններս, որոնք առհասարակ ամենավստահեղի սկզբնաղբյուրներ են համարվում, ըստ կարելոյն լրացնում են Ագուլիսի հուշարձանների պատմությունն ու վերակենդանացնում են նրա ուշ միջնադարյան քաղաքային կյանքի վերելքը: Այս արժանիքներից բացի վիճագրերը իրենց արտահայտած բովանդակություններով, պատմական ու հնագրական տվյալներով ինքնին հուշարձաններ են ու պատմական սկզբնաղբյուրներ:

